

ՈՒԻԼԻԸՄ ՆԻՍՊԻԹ ՁԵՑՄՊԸՐԶ
(ՄԻՍԻՈՆԱՐ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕՏԱՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ
ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ)

Ե Ո Լ Ճ Ո Ւ Լ Ո Ւ Ք (ՃԱՄՐՈՐԴՈՒԹԻՒՆ)

ՅԻՐՈՒՅԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԹՈՒՐԻՈՑ
ՇՐՋԱՆԻ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թարգմանիչ՝ ԿԱՐԱՊԵՏ Ն. ՓԱՓԱԶԵԱՆ



Լոնտոն 1928

38999

Հարկային
դրամագրի

Արտոյ Վարչոյի անունը Վարենագրում/ը

Թարգմանիչ/ը

Հանձնագր
կրկրոյ
14/9/92

ՈՒՒԼԻԸՄ ՆԻՍՊԻԹ ԶԷՅՄՊԸՐԶ
(ՄԻՍԻՈՆԱՐ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕՏԱՐ ԱՌԱԲԵԼՈՒԹԵԱՆ
ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ)


ԵՈՒՋՈՒԼՈՒՔ

(ՃԱՄՐՈՐԴՈՒԹԻՒՆ)

38999

ՑԻՐՈՒՑԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԹՈՒՐԿԻՈՑ
ՇՐՋԱՆԻ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թարգմանիչ՝ ԿԱՐԱՊԵՏ Ն. ՓԱՓԱԶԵԱՆ



Լոնտոն 1928

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ընդստաջելով բազմաթիւ բարեկամներու քելադրութեանց եւ շնորհիւ աղջիկներուս՝ Քէյքի եւ Տորոք-հիայի օգնութեան, նամակներէ, նոքերէ եւ տեղեկագիրներէ հաւաքած եմ կարգ մը տեղեկութիւններ, որոնք կրնան ինտաքրօքական ըլլալ, եթէ գիրքի ձեւով ըլլան: Կան յարաբերութեանց յուշեր թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ ցեղերու հետ, 45 տարուան ընթացքին Թուրքիոյ մէջ: Կը գիտակցիմ որ կան նոյնքան կարեւոր իրողութիւններ, որոնք դուրս ձգուած են, բայց եւ այնպէս, կը յուսամ որ հոս հաւաքուածները պիտի ինտաքրօքեն բարեկամներս, օգտակար դարձնելով գիրքը: Ջանացած եմ կացութիւնը ներկայացնել այնպիսի ձեւով մը, որ երեւան գայ անոր ունեցած կուպը բարայական եւ հոգեկան արժէքներու հետ՝ բուն հիմերը մարդկային յառաջդիմութեան՝ իր բոլոր փուլերուն մէջ:

ՈՒՒԼԻԸՄ Ն. ԶԻՅՄՊԸՐԶ



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՈՒ

15 Ապրիլ 1982-ին սկսեալ, «Զարթօնք»-ի մէջ «Օտարի մը ախտնասեալի վկայութիւնները հայկական ջարդերու մասին» ընդհանուր խորագրին տակ լոյս տեսած էր Վերապատուելի Ունչեմպլըրդի ահլերէն «Ետճուլուք» յուշագիրքին է. գլուխի «Հայկական տոհմնութիւն»ի, թարգմանութիւնը:

Անիկա իր ամբողջութեանը մէջ մեր ազգային ոգրերգութեան անթխակելի մէկ պատմագիրքը ըլլալուն, փափաքեցայ հայ հասարակութիւնը տեղեակ սրահել անոր պարունակութեան, այն հաստատ համոզումով, որ հոն տրուած տեղեկութիւնները կարելի է իրրեւ փաստ ներկայացնել թէ՛ թուրքերուն եւ թէ՛ ումանաւանդ օտարներուն, որոնց մեծամասնութիւնը, ղժբախտութեամբ, անտեղեակ է մեր պատմութեան:

Կ. Ն. ՓԱՓԱԶԵԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

«Օտար միսինարի մը կեանքն ու գործը երեւակայելի ա-մէնէն ձանձրալին ու միօրինակն է» խօսքը թերեւս կ'արտայայ-տէ ներկայ սերունդին ընդհանուր կարծիքը: Ո՛չ մէկ յայտարարութիւն կրնայ իրակամութեանն աւելի հեռու ըլլալ քան ասի-կա: Այս պզտիկ գիրքը, որ կը պարունակէ միսինարական կա-նոնաւոր աշխատանքի պարտականութիւններուն լծուած քրիս-տոնեայ միսինարի մը առօրեայ սովորական փորձառութիւն-ներէն քաղուած հազիւ քանի մը էջեր, տեսակ մը վճռական պո-տասխան է այն ամբաստանութեան՝ թէ պատժական հանգստ-մանք ունի կոչումը:

Այս պատմութիւնը ոչ միայն հետաքրքրական է, այլ նաեւ կը յայտնարերէ կեանքի պատմութիւնը մարդու մը, որ արտա-սովոր չի նկատեր զգայացունց արկածախնդրութիւններն ու սարսուղեցիկ փորձառութիւնները: Ըստ իրեն, ան զրոյցած էր իր առօրեայ դործերով: Իրեն համար այդ բոլորը օրական գոր-ծին էր, թէեւ ընթերցողը կը հրապարակի արկածախնդրու-թեանց եւ փախուստի պատմութիւններով, որոնք եթէ կրկնուէ-ին Անդլիոյ կամ Ամերիկայի մէջ, պիտի գրուէին թերթերու ա-ւաջին էջերու խորագրերը՝ խմբագրական մեկնարանութիւն-ներով:

Պատմումը ամբողջական չէ հոս: Կան ուրիշ փորձառու-թիւններ եւ արկածախնդրութիւններ՝ իր ժամանակակիցներուն

ծանօթ, որոնց նոյնիսկ չ'ակնարկեր հեղինակը: Երկար տարի-
ներ Տոքթ. Չէյմպլըրը սերտ բարեկամութեան մէջ էր քիւրակ-
բու, թուրքերու և հայերու հետ - երեք փոխադարձ իրերա-
մերժ և հակառակորդ ցեղեր, հերձուած՝ հին գփառութիւններով
և հակամարտ աստեղութիւններով, որոնք դարերով Մերձար
Արեւելքի մէջ վէճեր և ջարդեր յառաջացուցած են:

Տոքթ. Չէյմպլըրը կը թուէր ճակատագրուած ըլլալ, գըա-
նուելու քաղաքական, ընկերային, և կրօնական փոթորիկումնե-
րու կեդրոնը: Այս տողերը գրողը ծանօթ չէ արդի ժամանակնե-
րու միտնարի մը, որուն պաշտօն յանձնուած ըլլար տարբեր
վայրերու և այլազան ժամանակներու մէջ ներկայ գտնուելու
մարդկային ազգաներու: Ռուսական սահմանաժողովներու
կան քաղաք եղող էրզրումի ռամբրիկեան միտնարութեանց վե-
րին մարմինին կողմէ պաշտօնի կոչուելովը, Տոքթ. Չէյմպլըրը
ասպարէզ մտաւ Արեւելեան Թուրքիոյ մէջ: Քաղաքը անկէ քիչ
տառջ գրաւուած էր Ռուսիոյ կողմէ, որուն բանակը նոր պար-
պած էր դաշն: Ապա, ասոր յաջորդեց հայերու գէմ եղած ա-
պստամբութիւնը, ո՛չ միայն էրզրումի, այլև ամբողջ շրջանին
մէջ, որուն ընթացքին հազարաւորներ ջարդուեցան և շատ ու-
րիշներ մնացին ծայրայեղ չքաւորութեան մէջ: Նպաստի սորըն-
չութեամբ մատուցած ծառայութեանց պատմութիւնը վառ գոյ-
ներով ներկայացուած է:

Աւելի վերջ, պաշտօնով փոխադրուեցաւ աւելի տաք և
հեռուոր Կիլիկիոյ Աստանայի ասպարէզի դաշտը, - այդ պահուն
թրքական կայսրութեանն ռամէնէն անխռով շրջաններէն մէկը, -
ուր ան կ'ակնկալուէր որ անցընէր միտնարական ասպարէզին
մնացեալ մասը՝ խողալ և աւելի հաճելի միտնարութի մը մէջ:
Ասոր յաջորդեցին նոր ջարդեր և ցեղային կոխներ, ինչպէ՞ս
որ իր պատմութիւնը շատ յատկօրէն ցոյց կուտայ:

Իր բոլոր պաշտօնակիցներուն ծանօթ է, որ Տոքթ. Չէյմ-
պլըրը քրիստոնէական արիւթեամբ և անդանդատ քաջութեամբ
գլխադրուեց այս կայսրութիւնները: Որեւէ ասէն ո՛չ մէկ ցան-
դատ լսուեցաւ իր այս գաժան ճակատագրին գէմ: Ոչ մէկ պար-
տականութենէ խուսափեցաւ: Երբեք չկորսնցուց օգնութեան տ-
մէնէն աւելի կարիք դրացուած վայրին օգտակար ըլլալու առի-
թը: Յուսահատօրէն չքաւոր մարդիկ, զօրաւոր քիւրակ-
բուներ, որոնք կառավարական պաշտօնականներ, բրիտանա-
ցի ներկայացուցիչներ, բոլորն ալ իրեն գլխացին օգնութեան և
խորհուրդ առնելու և անոնցմէ ոչ մէկը յուսախար եղաւ...

Կրօնաւորներ, թուրք կառավարական պաշտօնականներ, բրիտանա-
ցի ներկայացուցիչներ, բոլորն ալ իրեն գլխացին օգնութեան և
խորհուրդ առնելու և անոնցմէ ոչ մէկը յուսախար եղաւ...

Թերեւս հոս անտեղի չըլլայ մէկի մէջըրերում մը: Էրզրու-
մի մէջ անոր կատարած գործին մասին գրած է դիւանագիտա-
կան լայն փորձառութեան ունեցող Պր. Ռ. Ու. Կրէյլը:


«Աւելի քան 60 հազար հայեր օգնութիւն ստացան, նպաս-
տի տեղական 6-7 յանձնախումբեր կազմուեցան և զրազ պահ-
ուեցան, հարկուար այլի կիներու գրադում հայթայթուեցաւ.
Իր կողմէ նուազադոյնի իջեցուեցան ցեղային և կրօնական
անհանդուրժարութեան, անձնական նախանձի և պաշտօնական
միջամտութեան հետեւեքով յառաջացած անհամաձայնու-
թիւնները» Տոքթ. Չէյմպլըրի կողմէ գրեթէ բոլորովին առան-
ձինն արտակարգ արդիւնքներ ստացուեցան, առանց առիթ տա-
լու իր սեւալուրէ քննադատներուն, - թուրք, տեղացի քրիստոն-
եայ կամ օտար, - որ խնդրոյ առաջիկայ ընէն իր գործածած
միջոցները և կամ մարդկայնական նպատակին պարզութիւնը:
Յաճախակի վատասնօջոթեան առթած ձգտեալ վիճակը, ջար-
դի ստեղծումի իրականութիւնը, ասօրեայ տեսարանը հակայ
մարդկային թշուառութեան, կացութեան տեսական բարեխա-
ւումի սկիներու յուսահատական վիճակը և երբեք իր լրումին
չհասնող աշխատանքին և պատասխանատուութեան ճնշումը -
ան այս բոլորին հանդուրժում է նոյն անկուն կորովով, ան-
փոխի փորձադիտութեամբ, շարժառարութեամբ և պարտա-
կանութեան հանդէպ գերազանց նախրումով: Իր սիրելի յատ-
կանիչներէն նուազադոյնը չէ իր ինքնադիտակցութեան ամբող-
ջական բացակայութիւնը: Կատարելապէս վստահ եմ որ երբեք
չէ անդրադարձած թէ որեւէ կեդրով երեւելի են մարդկու-
թեան մատուցած ծառայութիւնները, և թէ ոչինչ այնքան
պէտի գարմացէր գրեթէ՝ քան Լիւիզ Գիլըք աշխատանքի պահուն
գլխացինը կողմէ բուռէր, թէ ինք օրինակելի տիպար մըն է
սպնուական և անձնուրաց բոլոր անձերու համար»:

Արդարեւ, Տոքթ. Չէյմպլըրը եղած է և տակաւին է՝
Թուրքիոյ հայերուն սոսքեալը:

Երբ ֆիզիքական տկարութեան հետեւանքով վերջ դասն իր գործոն աշխատանքները, ան նախընտրեց մնալ երկրին մէջ եւ ժողովուրդին հետ, որուն այնքան շտապութեամբ նախընտրեց իր կեանքը: Մեր ծառայող Արեւելքէն է որ աշխարհին կը արուի ծառայութեան նուիրեալ կեանքի մը արձանագրութիւնը:

ՃԷՅՄՈՒ Լ. ՊԱՐԹԸՆ

Պոստըն, Մես., 29 Մայիս 1982




ԵՐԿՈՒ ԱՆԷԾՔ ՄԷԿ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆԸ -- «Աստուծոյ անեծքը ձեր վրայ ըլլայ ինկիզ-
անր (Երոպացիներ):
Անմխիթար հայ կին մը էրդրուսի մէջ,
1895ի ջարդէն ետք:

ԵՐԿՐՈՐԴԸ -- «Ալլահին անեծքը անոնց վրայ, որ ջարդը
կը չարագործեն»:
Ճեմալ վաչան Ատանայի մէջ,
1909ի ջարդէն ետք:

ԵՐՐՈՐԴԸ -- «Աստուծոյ օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ»:
Լուսաւորչական քահանայ մը, թրքական բանտէ
մը արտա արձակուելէն անմխիթարէս ետք:



Ա. ԳԼՈՒԽ

ԻՆՉՈՒՒ ՄԻՍԻՈՆԱՐ ԵՂԱՅ

Այդ հարցումը բուսական եւ կը տանի մարդս եւ մեր առ-
ջեւ կը բերէ վիճակներ ու փոփոխութիւններ, որոնք լայն տեղ
մը կը զբաւեն մտային եւ հոգեկան զարգացումի մէջ: Թէեւ բա-
կըրնակրան տարիներուս ոչինչ զիտէի օտար միտիոնարական աշ-
խատանքի մասին, եւ սակայն կը զգամ որ տան մէջ կեանքիս
տրուած հունար անխուսափելի զարձուց ծառայութիւնը յետա-
զայ շրջանին:

Մեր ժողովուրդը կազմուած էր լիակ հիւսիսային իրլան-
տացիներէ, որոնք կ'ապրէին հանդիսա պայմաններու տակ եւ
ունէին ազգեցիկ զիրք: Հօրս ընտանիքը ընդարձակ կալուածներ
ունէր Թիրան նահանգին մէջ: Մօրենական մեծ-հայրս բժիշկ էր
Փոյնդ փասի մէջ: Ծնողքս տակաւին երիտասարդ եղած ատեն,
յաւազոյն պայմաններու տակ ապրելու նպատակով, Քանաթոս
մեկնեցան եւ հաստատուեցան Մասի Լիթըլ Լէյքի մէջ, որ զար-
գացաւ արդի Թորոնթոյի: Աւելի ուշ, անոնք տեղափոխուեցան
Նորթ-Նորթ, Քոլումպիա նահանգի Օքսֆորտ քաղաքը, ուր եղ-
բայրս տիրացաւ շուրջ ՅՊՊ Էյքըր (արտավար) տարածութեամբ
բարերեր խաղարակի մը: Այդ ազարակին մէջ էր որ ընտանիքի
զուակներէն իւրաքանչիւրը պատրաստուած էր ապագային ըլ-
լալու գործօն քրիստոնէայ գործիչ: Երեքս, - ձէյմս, Ռայլըթ
եւ ես, - ընտրեցինք Աւետարանի քարոզչութիւնը եւ մեզմէ եր-
կուքը եղան օտարերկրեայ միտիոնարներ, իսկ չորրորդը՝ ծոն,
վատառողջութեան հետեւանքով ստիպուեցաւ հրաժարիլ հա-
մալարանական ուսումէն: Մինչ աստուածափախ հայրս գործօն
մասնակցութիւն կը բերէր Եկեղեցւոյ եւ համայնքին մէջ, հա-
կամէտ եմ մտածելու որ մայրս էր որ ունեցած է զլիսաւոր աղ-
ղեցութիւնը այս արդիւնքները ձեռք ձգելու աշխատանքին մէջ:

Ընտանեկան աւանդութենէն կը տեղեկանանք որ իր երիտասարդութեանը մայրս եղած է զուարթ, դեղեցիկ պարուհի մը եւ շատ կը սիրէր ընկերութիւնը, որուն հասոյքներուն կը մտանակէր յատկանշական խանդավառութեամբ: Հոգեկան փորձաստութիւն մը փոխեց կեանքի ուղին: Ընկերային հասոյքը փոխարինուեցաւ հոգեկան զրոյթներով եւ զարծանքութիւններով որոնք ճշգրտին ընտանիքին կեանքը: Ընկերային հասոյքներ երբեք չլքուեցան: Ծնողներէս ոչ մէկը եւ ոչ ալ միւսը երաժշտական ասպանդ ունէր, թէեւ անդրանիկ քորձս երաժշտական մարդու՞մ սկսաւ անմիջապէս որ ան սկսաւ կարգալ եւ շուտով զաշնակի մը տիրացաւ ընտանիքը: Մինչեւ այսօր հասոյքով կը յիշեմ երաժշտական երեկոները եւ այլ ընկերային հաւաքովիները, որոնք մեծ վայելք կը պատճառէին ընտանիքին եւ ընտանիքի բարեկամներուն:

Խնդրալիտ քրիստոնէական վերաբերում մը եւ համայնքին եկեղեցական կեանքին դործօն ծառայութիւնը կը դերակշռէր այս կացութեան: Հիւրասիրուող շատ մը այցելուներու մէջ յաճախ կային սեւտարանի քարոզիչներ, որոնք սիրով կը շիրաքըրէին: Այսօր մեծ օգնութիւն մըն էր ընտանիքի մայրիկին, իր անկեղծ ճիւղին մէջ՝ որ իր զանակներուն մէջ ներարկէ համալսարանական կրթութեան հանդէպ ներդրածի վախճ մը, այն յոյսով որ զոնէ անոցմէ տմանք քարոզիչներ պիտի չլսային: Մահազգի մը մէջ վերապատուելի Տօքթ. Ճորճ Պէլ՝ ընտանիքին երկարամեայ մէկ բարեկամը, կը դէժ. «Այս սոցիալ մօրը ամենասիրելի վախճն էր որ իր զաւակները որպէս քարոզիչներ ծառայէին... Իր մահէն ետք զտնուեցաւ թուղթ մը, որուն մէջ գրած էր թէ ինքզինք կը նուիրէր Աստուծոյ ծառայութեան, եւ սոյա երբ իր զաւակներէն ամէն մէկը վկայեցին որ պիտի մտնակցէին հոգեւոր կեանքին, այս իրողութիւնը աշխատողութեան հոգեւոր նուիրումով մը՝ ծառայելու Աստուծոյ դործին»: Նոյն ատեն կ'ուզէի ըսել, թէ չեմ յիշեր որ ան թերագրած ըլլայ ինձի որ քարոզչութեան պատրաստուէի: Ընդհակառակը, մեծ չօրս՝ Տօքթ. Ուիլիամ Նեպտիլին համար անուանուած էի: Մեծ մայրս եւ երկու ամուրի մօրաքոյրներս իրենց լաւագոյնը ըրին ազդեցութիւն բանեցնելու իմ վրաս, որ հետեւէի անոր օրինակին եւ բժիշկ ըլլայի:

Երիտասարդական երեւակայութեանս համար այդ մէկն ու գինուորական ծառայութիւնը խորհեցայ որ նախահամալսարանական շրջանիս պիտի ըլլային մղիչ եւ դերակշռող ուժ մը:

Եւ, սակայն, մեր ընտանեկան կեանքին ընտանիքի անդամներուն վրայ ունեցած արտակարգ ազդեցութիւնը մեր վրայ պիտի թողար այն ապաւորութիւնը՝ թէ ուղղակի դործօն քրիստոնէական ծառայութիւնն է մեծագոյն դործը կեանքի: Երբ կեանքի դործի հարցը դիմադրուեց զիս, շատ լուրջ վէճեր ունեցայ եւ ինքզինքիս հետ: Դիւրաւ չէի կրնար հրաժարել սկզբնական հակումներէս եւ նախընտրութիւններէս՝ ի նը պատ քրիստոնէական ծառայութեան, որպէսզի նկատի առնէի որպէս քարոզիչ ծառայելու համար եղած թերազրութիւնները:

Կը յիշեմ որ երկու դժուարութիւններ ցցուեցան առջեւ, ընտանիքը ջերմեւանդ քրիստոնէական երկեցականներ էին, սկզբնական պատական եկեղեցական տիպարով: Ոչ միայն յարանուանական տարբերութիւնները, այլ նաեւ երկեցական եկեղեցւոյ բաժանումները ինքնին կը թուէին վանողական ըլլալ: Քրիստոնայի կամ ուրիշ որեւէ երկրի մը յարանուանութեանց մէկուն մէջ ծառայելու դադարաւորը սրտաբեկիչ ազդեցութիւն թողուց: Օտար դաշտի մը մէջ ծառայութեան զազաւիարը, դէժ այդ ատեն, իմ պարզամտութեանս ըրաւ այն թերազրութիւնը, թէ հոն կացութիւնը սխալ ըլլար լայնածաւալ եւ ձեռնարկատրուած յարանուանական մասնախառնութեանց կապանքներէն:

Մինչ կը զգայի թէ քարոզչութիւնը եթէ ընտրէի, անխուսափելիօրէն պիտի հետեւէր օտար դաշտ երթալս, բայց եւ այնպէս ինքզինքս պատրաստ չէի զգար հեռանալու հարկներէս: Քրիստոնայի կեղբոնական մեծ մասը՝ Օնթարիոյն մինչեւ բրիտանական Գոլոմօլիա, սկսած էր զարգանալ եւ շատ մեծ քաղաքներուն մը ունէր ինձի համար: Կ'ուզէի մայր երկրիս հետ զարգանալ: Ոչ միայն ազգայնական այս զղացումս զբաւուրութիւն մը ունէր ինձի համար, այլ նաեւ տակաւին երիտասարդ քրիստոնէական հասարակաստութեան նիւթական սքանչելի կարեւորութիւնները զրեթէ անդիմադրելի ուժով մը հրապուրած էին զիս:

Այս մտալիճակի մէջ մտայ Օնթարիօ նահանգի Բինկլթիլն Բուրնդ համալսարանը: Յետագային փոխադրուեցայ Նիւ

ձըրզի ֆրինսթըն համալսարանը և շրջանաւարտ եղայ 1878 տարուան դասարանին հետ:

Ռապըթ Եղրայրս, շրջանաւարտ ֆրինսթընի աստուածաբանական վարժարանէն, արդէն քարոզիչն էր Բանատարի երիցական եկեղեցիի մը: Ինձմէ մեծ ձէյմս Եղրայրս կ'ուսանէր աստուածաբանական վարժարանը և շրջանաւարտ եղաւ 1875-ին: Նիւ Եորքի Երպարն քաղաքի ժողովականներու եկեղեցիին քարոզիչը եղաւ ան:

Համալսարանական դասընթացքիս շրջանին էր, չեմ յիշեր թուականը, զի համոզումը աստիճանական էր, որ քրիստոնէական ծառայութեան քարոզչութիւնն ու օտար դաշտի վրայ կատարուելիք աշխատանքը պարտադրեցին ինքզինքնին: Եւ, սակայն, վերապահութիւն մը ունեցայ: Համոզուած ըլլալով որ տեղական եկեղեցիի մը մէջ 2-3 տարուան եկեղեցական աշխատանքի դործնական փորձառութիւնը յետ-համալսարանական դասընթացքի մը բնոյթը պիտի ունենար, ամէնէն արժէքաւոր փորձառութիւնը հայթայթելով օտար դաշտի աշխատանքին համար, անվարան որոշեցի որ կրնար ան կերպով մը փոխուիլ կամ բարեփոխուիլ: Բնականաբար, բնական թուեցաւ քանադակայն երիցական եկեղեցիին մէջի աշխատանքիս շարունակութիւնը և թէ անոր վերին մարմինին հովանաւորութեանը տակ արտասահման պիտի մեկնէի: Նաև որոշած էի եթր ձմաւուն, որ 1870ական թուականներուն խմորումի և ճիզի նշաններ ցոյց կուտար, ինչ որ դրաւիչ էր:

Այդ շրջանին էր որ տարի մը քարոզչի Օնթարիոյի Օլթըն քաղաքը: Ընկերացող նամակին պարունակած քաջակրօնութեան ազնիւ բառերը մեծ դեր ունեցան որոշումին հանդէպ վստահութիւն դարձացնելու համար:

Օլթըն, 22 Օգոստոս 1877

Պր. Ու. Ն. Չէյմպըրը
Սիրելի Եղրայր,

Մենք Օլթընի երիցական եկեղեցւոյ վարչականներս և անդամներս, զիտնալով որ կիրակի եւ ալ օրեր մեր ամպլինին ձեր մատուցած ծառայութեանց շրջանը զրեթէ հասած է իր ընթացիկն, ինչ կրնար բաժնուիլ ձեզմէ՝ սուսայ յարգելու եղաւ:

Նորհակալութիւնը եկեղեցւոյ մեծ Պետին և ձեզի՝ շատ հաճելի (և նաև կը հաւատանք պիտանի) շրջանին համար, զոր միտին անցուցինք թէ՛ եկեղեցւոյ և թէ՛ ընտանիքին մէջ, և կ'ազօթենք որ Աստուած օրհնէ ձեզ, ձեր նուիրական կոչումին առաւել պատշաճութեան մէջ, և Երկար ատեն պահէ ձեզ որպէս մեծարեալ և օգտակար քարոզիչը Բրիտանիայի եկեղեցւոյն, շատ մը թանկագին հոգիներ փրկելին առաջնորդելու գործին մէջ, որպէսզի Տիրոջ մեծ օրը, չորձուիք տեսնելով որ ի դուր չէք արշաւած և ոչ ալ ի դուր ձգնած:

«Եւ, անտարակոյս, ի կենդանութեան պիտի յիշէք ժամանակն ու վայրը երբ առաջին անգամ չբապարակաւ յայտարարեցիք օրհնեալ Աստուծոյ Աւետարանը: Մի՛ մոռնաք Օլթընի փոքր եկեղեցին:

«Ձեր բոլոր դժուարութեանց մէջ կարգացէք Մատթէոսի Աւետարանին ԻՒ. Ղլտիին 19-րդ համարը, թարմացէք և «Ընթացէ՛ք առաջ»:

Ասորդարուած՝ եկեղեցւոյ և ժողովուրդին կողմէ,
Երեցներ - Թ. Համըս Ռասըլ, Ճոն Բլարք:

Գործադիր վարչաւքիւն - Ռապըթ Միք - ատենապետ, Ուիլիամ Աքաթ, Ուիլիամ Թ. Աքաթ, Ճասթըս Լինքըն, Էյպրիլ Տիք:

Շուտով պիտի ստովի դասը՝ թէ «Նորհուրդ մարդկանց, կամք Աստուծոյ» և թէ դատողութիւնս և կամքս պէտք են ենթարկուել Տիրոջ թաղաւորութեան հոգիին: Այդ օրերուն ո՛չ փոքր յաստատութեան և ոչ ալ դառնութեան երանգաւորումէ զտրիչ էր ինձի համար, երբ նկատեցի որ ապագայ դործս պիտի անջատուէր քանադակայն ընկերակցութեան և պիտի լլար ուրիշ երկրի մը մէջ, որուն մասին ունեցած տեղեկութիւնս 1877-1878-ի սուս-թրքական պատերազմի մասին տրուած լուրերէն և այդ պատերազմին հետ կապուած Պուլկարիոյ քստմենլի պատահարներէն անդին չէր անցնէր: Աստուծոյ նախախնամութեամբ, 1879 Յուլիոսին միտանաբար նշանակուեցայ Ամերիկեան Օտարերկրեայ Առաքելութեանց Յանձնախումբին կողմէ, Սեպտեմբերին ձեռնադրուեցայ ձէյմս Եղ

բորս նիւ կորք նաճանգի Երպրն քաղաքի ժողովականներու եկեղեցւոյն մէջ, եւ Ռապըրթ եղբորս հետ նաւով մեկնեցայ: Ան ալ նոյն տան նոյն վայրը՝ Արեւելեան Թուրքիոյ Էրզրումի մէջ ծառայելու համար նոյն Զանձնախումբին կողմէ պաշտօնի կոչուած էր: Այս բոլորը կատարեալ անակնկալ էին ինձի եւ չէին համապատասխաներ ծրագիրներուս եւ ակնկալութիւններուս:


Ինձի չիցնար ըսել, թէ աւելի լաւ ծառայութիւն մատուցած պիտի բլլայի, եթէ «կտուցած» մնայի իմ անձնական ծրագրիս եւ նախընտրութեանս, եւ թէ բաւարար վճռակամութիւնն ունեցած ըլլայի ընթանալու զձած ուղիէս: Բաւ է միայն ըսել, թէ պատճառ չունիմ զղջալու, ընդհակառակը, շնորհակալ եմ Տիրոջ, որ միշտ առաջնորդած է եւ օրհնած է զիս անթիւ ու անհամար կերպերով եւ ցարդ իմ արժանիքներէս անդին, այնպէս որ ստիպուած եմ ըսելու.

- Օրհնեալ ըլլայ Տէրը:

Ասիկա զիս կ'առաջնորդէ մտածելու, թէ արդեօ՞ք անհատներ պիտի խորհին, թէ կը սխալիմ զատողութեանս մէջ, եթէ խնդրոյ առարկայ ընեմ այն պնդումը՝ թէ մարդ պարտի համակրելու եւ սիրել իր նմանները՝ օրհնութեան միջոց մը ըլլալու համար անոնց: Կրնամ ըսել որ քիչ կամ ոչինչ զիտելի հայերու կամ թուրքերու մասին, այնպէս որ ոչ մէկ չիմ կար սէր կամ նախընտրութիւն ունենալու անոնց հանդէպ, աւելի բան ուրիշ ժողովուրդներու հանդէպ եւ կամ այսպիսի զգացում մը անուշանել անոնց մէջ աշխատելու համար: Իրականութեան մէջ, փախաքս էր աշխատել Մայրաղոյն Արեւելքի եւ ոչ թէ Մերձաւոր Արեւելքի մէջ, եւ նախընտրութիւնս ճափոնն ու ճափոնացիներն էին եւ ոչ թէ Թուրքիան եւ թուրքերը կամ հայերը: Եւ, սակայն, եթէ փնտռելի աշխատանքի մահնազրուարին դաշտ մը, ուր մարդիկ շատ պէտք ունէին հողեկան եւ նիւթական օգնութեան, կը խորհիմ որ Թուրքիան պիտի ըլլար նկատի աւնտակիրներու առաջնորդը: Ետտեքու զատուածով, թէ եւ հայերը ունին համակրական բարեկամեցողութիւնները, անոնք չեն յաջողած շահել շատերու խանդավառ սէրը, եւ աշխարհ նաեւ հարց կուտայ. «Թուրքը սիրելի՞ է»: Այսուհանդերձ, ես այն համոզումը ունիմ, որ աւետարանական

ծառայութեան հիմը կազմող օժանդակութիւնը չի կայանար ժողովուրդի մը հանդէպ մասնաւոր սիրոյ, - թէ եւ հաւանական է որ այդ մէկը զոյրութիւն ունենայ, - այլ՝ Աստուծոյ Թագաւորութեան յառաջդիմութեան հանդէպ ընդհանրական սիրոյ մէջ: Տիրոջ Բանակներուն Հրամանատարն է որ պիտի որոշէ ծառայութեան վայրն ու պայմանները, բնոյթն ու կերպերը: Ո՛չ թէ իմ ծրագիրներս ու նախընտրութիւններս, ոչ թէ իմ ստագծս կամ տաղանդներս պիտի ըլլան ծառայութեան պայմանները, այլ՝ հաւատարմութեան ոգի մը Առաջնորդին հանդէպ եւ պատրաստակամութիւն՝ երթալու եւ աշխատելու երբ որ եւ ուր որ Ան պիտի առաջնորդէ զիս: Սրտիս խօսեցաւ Ռեւլինկիթընի հարցումը. «Ե՞նչ են զորաշարժի ձեր հրամանները»: Աշխարհ՝ դաշտն է, պատգամը՝ Աւետարանն է, նպատակակէտը՝ իւրաքանչիւր արարածն է:

38999



Բ. ԳԼՈՒԽ

ՍԿԶԲԵԱԿԱՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ
ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1879 Հոկտեմբերին, գեղեցիկ պայծառ կէսօրէ մը կաք, մեր շողենաւը, որ մեզ տարաւ Մարսէյէն, կապոյտ Միջերկրահանր վրայէն, Տարաանէլի եւ Մարմարա ծովուն մէջէն ու Սերակիօ հրուանդանի շուրջէն, խորխօս նետեց Պոլսոյ առջև՝ Ոսկեղջիւրի նաւահանգիստին մէջ:

Նիկոմիդիոյ ծոցը կ'երկարէր գէպի արևելք, յառաջամասին ունենալով Իշխանաց կղզիները, Սիլիտար կը դտնուէր նեղուցներու արեւելեան կողմը եւ գեղեցիկն Վասփորը Սեւ ծովէն կը հոսէր դարձդարձիկ իր ջրանցքէն, սրբաշէրերով եւ պալատներով ծածկուած ծովեզերքներու զինմէջէն: Երբ կը յառաջանայինք, մեր ձախին կար Պոլիսը իր հնադարեան սրբատներովն ու մզկիթներովը, որոնց մէջ աչքաուռ էր Այա Սոփիան, ոչ շատ տպաւորիչ արտաքինով, բայց որ խորապէս տպաւորիչ էր երեսակայութեան համար: Ուզողիկ մեր առջևը Ոսկեղջիւրը կը ներկայացնէր դրազ տեսարան մը:

Նաւահանգիստը լեցնող շողենաւեր, գիւրասահ նաւակներ ու շողենաւերու եւ ցամաքահանումի լաստակերտներու միջև շրջող նեղացուցիչ թխնաւակներ: Քաղաքը աստիճանաբար կը բարձրանար Վասփորի եւ Ոսկեղջիւրի կղերքներէն եւ կը տարածուէր եօթը բլուրներու վրայ: Յառաջամասին կար համբաւուոր կարթալի կամուրջը, իր բազմաթիւ ցեղերու պատկանող մարդոց անախճանալի հոսանքովը, ամէն տեսակի տարաճներ հազած: Ասելի հեռուն, մզկիթներն ու միճաբէնները, աշտարակներն ու դանդակատուները, Տրմա Պահէլն եւ

Ելլուղը, այդ գեղեցիկ պարտները, մայրամուտի արևուտ անամպ ճառագայթներուն ներքեւ, կը ներկայացնէին գեղեցկաթեան եւ մեծաշքութեան տեսարան մը, որուն տպաւորութիւնը տակաւին թարմ է յիշողութեանս մէջ:

Մենք անցած էինք Նիւ Եօրքէն իր Հասարնով, Խալնպիլէն իր Ճըրթճիւ Ծորթճով, Լոնտոնէն իր Թեմզով, եւ Փարիզէն իր Սէնով, բայց Պոլիսը իր Վասփորով եւ Ոսկեղջիւրով, գիւրաւ գերիվեր է իր նկարագրելութեամբ եւ գերքին գեղեցկութեամբ - թաղուհի քաղաքը Մերձուոր Արևելքի:

Երբ ցամաք ելանք եւ մտանք փողոցները - բայց ինչու մանրամասնել քաղաքին այդ երևույթը:

Միոյնտարական շրջանակին կողմէ մեզի եղած սիրալիք ընդունելութիւն մը մեզ ազատ զգալ տուաւ եւ պատրաստեց մեզ երեք օրուան ծովու ճամբորդութեան՝ այն ծովուն մէջ, որ իրաւամբ «Սեւ ծով» կոչուած է:

Յամաք ելանք Սեւ ծովու արևելեան ծայրը գտնուող հնադարեան Տրոպիզոն քաղաքը: Սիրտս գրեթէ կանգ առաւ բարսխել: Կրնայի՞ն ասոնք ըլլալ այն պայմաններն ու միջավայրը՝ հեանք մը կարենալ անցընելու համար: Եւ հասարակաց լեզուի մը չգոյութիւնը մեծապէս շեշտեց շարագուշակ հեռանկար մը: Հոն անցուած երկու օրը բաւական էր: Ճամբորդական ընկերներս էին Ռապըթ կղաքացի, իր կինը եւ մանկիկը: Էլի օրերդները, որոնք Պիթիլիս կը վերագոտանային, եւ Պիթիլիսի երկարամեայ միսինտար Վերագոտանելի Նէփ, որ եկած էր անոնց հանդիպելու եւ ընկերանալու գէպի ներքին գատոնները կատարուելիք ճամբորդութեան ընթացքին:

Առաւօտ մը կանուխ ճամբայ ելանք երկու լեռնաշղթաներու մէջէն - Զիլանա, որուն ծովեզերեայ բարձրութիւնն էր 6800 ոտք եւ Քոփէ, որուն ներքին բարձրութիւնն էր 800 ոտք: Ութը օրուան հեռաւորութեան վրայ կը գտնուէր մեր որոշուող վայրը եզոյ իրբուրմը: Մեր փոխադրամիջոցն էր «Յուրիսն» կոչուած անցուցանակ փակոն մը, որ մէկ շաբթի վրայ գտնուող շորս ձիւրու կողմէ կը քաշուէր: Ճամբան շինուած էր քանի մը սարքէ առաջ ֆրանսացի երկրաշափններու կողմէ, բայց երկրին մէջ շատ մը ուշիւ բաներու նման ան ալ շատ պէտք ունէր նո-

բողոքներն: Մեր կառավարը թուրք էր: Ամէն անգամ որ կ'արտօնէր որ իր ձեռքը մեզ ցնցեն ճամբու երկայնքի ամէն թոյլ քարի վրայ եւ ամէն արահետի ու խորտարորտ տեղի մէջ, փափանքը կը պայտի ցնցելու զինք իր անփոյթ անտարբերութիւնէն, որ տեսնէր թէ ի՞նչ բանի կ'ենթարկուէինք, եւ իր հպարտ գոհունակութենէն, հակառակ մեր ունեցած անհանդստութեան: Ես ինձի հարց տուի եւ ըսի թէ արդեօք «տիպա՞ր մըն էր ան»: Արդեօք հասկցա՞ւ իմ վրաս եկած այն զրացումը, թէ այս երկրին մէջ շատ քիչ տեղ կ'ընար ըլլալ զուարթութեան, խնդուքի եւ սրբիշնորու հանդէպ համակրական նկատառութեան: Ինձի համար զրկուելէք ճամբորդական իրեղէնները ժամանակին չէին հասած էրզրումէն, այնպէս որ առաջին գիշերը փորձեցի քնանալ խանի տախտակամածին վրայ՝ ծածկուցի մը մէջ փաթկուած: Պր. Նէլի պատմեց թէ արձակուրդով Ամերիկա գտնուած մէկ շրջանին, միսիոնարական ժողովի մը խօսած տան իրեն կը հարցնեն հետեւեալը.

- Ի՞նչ բանը կը նկատէք ձեր միսիոնարական կեանքին մեծագոյն փորձութիւններէն մէկը: - Պահ մը կանգ կ'առնէ, կարծէք իւր մտածումի մէջ թաղուած, մինչեւ որ կ'ապահովէ տկնկատոյց եւ անբաժան ուշադրութիւնը իր ունկնդիրներուն, եւ շատ հանդիսաւոր ձայնով մը կը պատասխանէ.

- Կուե՞րք:

Արդ, յաջորդ առաւօտ զնահատեցի պատմութիւնը եւ պատրաստ էի աւելցնելու.

- Կուե՞րք կատարան մը:

Յաջորդ օրը քիչ մը վեր բարձրացանք Ձիկանա լեռան գեղեցիկ կողմերէն: Այդ օրը Պր. Նէլի ծննդեան տարեդարձն էր: Ճամբորդական պաշարները ստացուեցան էրզրումէն եւ էլի քայլերը սկսան ծննդեան տարեդարձի գեղեցիկ ճաշկերոյթ մը պատրաստել՝ ի պատիւ այդ օրուան, եւ լեռան կողմէ վրայ գտնուող մշտադալարներու շուքին տակ շատ հաճելի յետմիջօրէ մը անցուցինք:

Շուք կը որ առաջին անգամ ըլլալով տեսայ ուղտի կարասն մը, երկար շարք մը ութը հարիւր ուղտերու, որոնք

զանդազօրէն կ'ընթանային հնդկական կարգով՝ իրենց զօղանջող, հնչեղ եւ խորաթափանց բոժոժներով, որոնցմէ որոշ թիւով մը կախուած էր ամէն կենդանիի վրայ:

Անոնք բաժնուած են եօթը միաւորներէ բաղկացած խումբերու, որոնցմէ իւրաքանչիւրը ունի երկու հոգատար ուղտապաններ: Սովորաբար առաջնորդող ուղտը թիկնեղ, զօրաւոր կենդանի մըն է, որ մեծ խոտմքով զարդարուած կ'ըլլայ: Կը պատմուի թէ, անգամ մը, ճամբուն եղերքը կեցող մը ուղտի մը նաչած ատեն, ուղտը կը հարցնէ.

- Ինչո՞ւ այդպէս կը նայիս ինձի:

- Կը զարմանամ թէ ինչո՞ւ վիզդ այդքան ծուռ է:

Ուղտը կը պատասխանէ.

- Իմ վրաս շխտակ ի՞նչ կը տեսնես, որ նկատողութիւն կ'ընես վիզիս մասին:

Շատ դիւթիչ էր դիտելը այլանդակ, սարպատաւոր այս կենդանիները, որոնք դետիւրը կը պարուէին շուրջանակի եօթով, զլուխները դէպի ներս քաշուած, եւ կը ծամէին մանրատուած յարդ եւ որպէս ճարակ կ'ուտէին դարիկ կերակուր, կամ խուրճալով ու քրթմնջելով ոտքի կ'ելլէին քամակ հերձող ծանրութեամբ մը: Սովորաբար ճամբայ կ'ելլէին արշալոյսէն շատ առաջ, եւ յաճախ կ'արթննային անծայրածիր այս կարաւանին վրայի բոժոժներու հնչիւններէն ու անախորժ ձայնէն: Այդ ժամանակ ճամբորդութիւնը կը կատարուէր Սեւ ծովուն վրայ զըտնուող Տրապիզոնէն, էրզրումի մէջէն դէպի Թաւրիզ եւ աւելի հեռուոր կէտեր, Պարսկաստանի մէջ: Ասիկա կը կազմէր հիւսիսային (Ռուսիոյ) (*) եւ Եւրոպայի միջեւ եղող կարաւանեան ճամբան, մինչեւ որ Պաթում-Պաքու երկաթուղադիժը եւ Կասպից ծովը չեղեցնէին երթեւեկութիւնը:

Շարունակեցինք մեր ճամբան GS00 ոտք բարձրութիւն ունեցող Ձիկանա լեռան վրայէն, դաշտանկարի մը մէջէն, որ Զըլիցերիոյ որեւէ դաշտանկարին չափ հոյակապ էր ու գեղեցիկ: Ապա Կիւմիսլիանէի մէջէն, - ուր հին աստեղներ արծաթի հանքերը կը շահադարձէին, - ու Պայպուրթ, - կարեւոր ներքին քա-

(*) Միսիսիոնի մը կայ հոս: «Պարսկաստան» պէտք է ըլլայ: (Ծ. Թ.)

զաք մը, - եւ 8000 ոտք Գոլիէ լերան վրայէն: Այս բարձունքէն աշնայէս կ'երեւէր, թէ երկիրը տարզապէս լեռներու ալեյոյզ տարածութիւն մըն էր՝ մինչեւ հորիզոնը: Տասերորդ օրը հասանք էրզրում, որ կը գտնուի 6500 ոտք բարձունքի վրայի փոքրը, անծառ բարձրաւանդակի մը արեւելեան ծայրը: Լեռներ կը բարձրանան ամէն կողմէն, որոնք կ'աւարտին հարիւր մղոն արեւելք 17,000 ոտք բարձրութիւն ունեցող Արարատ լերան վերայ:

Արքաբաղան զիմաստրում մը կատարուեցաւ վեր. Ռոյըլ Մ. Գոլի, իր գործակիցներուն եւ աւետարանական եկեղեցւոյ եղբայրներուն կողմէ: Հաճելի էր մտնել միսիոնարական կայանէն ներս եւ մտնալ ճամբորդութիւնն ու «Փորկոն»ին մեր թուրք կառապանը եւ պահ մը քօղարկել քաղաքին տեսարանը: Չեմ կարծեր որ որեւէ ատեն իրօք շատ հայրենակարօտ եղած ըլլամ, այդպէս չէ խառնուածքս, բայց էրզրումի տեսարանը - մթագին, գորշ քարէ սլասեր, տափարակ, ցած տղմոտ տանիքներ, ծուռ, նեղ փողոցներ, կրնային ստեղծել ամէնէն մեկամարդնոտ տեսակի հայրենակարօտութիւնը: Յամենայնդէպս, միսիոնարներուն եւ ժողովուրդին կողմէ կղած սիրալիբ ընդունելութիւնը շրջապատին բաւականաչափ արեւու լոյս ներարկեց, ամէն ինչ զբաւիչ դարձնելու համար, հակառակ քաղաքին սղեղութեան եւ աղտոտութեան:

Տարի մը էրզրում մնալէ ետք, նոյն ճամբով ետ՝ Տրապիզոն ճամբորդեցի: Քաղաքին մօտեցած ատենս, պահ մը աշնայէս թուեցաւ, թէ հազուադէպօրէն տեսած էի աւելի դեղեցիկ մը, բաւական մաքուր, սպիտակ տուներ, կարմիր կղմինարով ծածուած տանիքներ, ծառազարդ փողոցներ, քաղաքը հիմնուած ծովուն շուրջը, իր թիկունքը ունենալով լեռներու ստորտունները, որոնք ծածկուած էին տերեւներով ու ծաղիկներով: Անյայտացած էր նախորդ տարուան արգիլեալ վայրը: Ձարմանալի չէ որ Գսենուիոնի զինուորները ուրախութեան ազազակներ արձակեցին, երբ լեռնանցքին դազաթէն դիտեցին այդ վայրը եւ վերջնալ առատօրէն կերան ձորին վայրի մեղրէն: Էրզրումի մէջ տարուան մը բնակութիւնս փոփոխութիւն մը բերած էր մտածելակերպիս: Նոյնիսկ էրզրումը բաւականաչափ հրապոյր դարձուցած ըլլալով, դժուար եղաւ հրաժեշտ առնել անկէ, քսան տարուան բնակութենէ ետք:

Գ. ԳԼՈՒԽ

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ՔԻՒՐՏԵՐԸ

Պր. Գոլ եւ ընտանիքը մնայուն բնակութիւն հաստատած էին երբ էրզրում հասանք: Անոնք զիմացած էին 1877-78 թուս-թրքական պատերազմին: Կովկասի ռուսական բանակը, հայ զօրավար Լորիս Մելիքովի հրամանատարութեան տակ, քաղաքը քանի մը ամիս գրաւած էր, մինչ Պալքանդերու ռուսական բանակը կը տնտնար Պոլսոյ զուգորուն առջեւ: Բրիտանական նաւատորմի Պոլսոյ Իշխանաց կղզիներուն ետեղիբ բռնելուն վրայ՝ այս բանակին հետացումը այն հետեւածքը ունեցաւ, որ Սան Սթեֆանոյի զաշտպիրը ժամանակաւորապէս առկախուեցաւ եւ զուտ բացաւ Պերլինի վեհաժողովին: Այդ վեհաժողովին երեւան հանուած տուեալները մեծ յոյսներ չէնէցին հայերուն, որ հուսկ ապա պատճառ եղաւ իրենց աւերին: Ռուսերը քաջուեցան կարս, որ իրենց տրուած էր, եւ էրզրում սնդամ մը եւս արեւելեան յառաջապահ զիբը դարձաւ կայսրութեան, այս անգամ սակայն թրքական, ինչպէս որ կղած էր բիպանդական՝ երբ ան ծանօթ էր Ռեհտոսիոսիոյն անունով: 1201 թուականին սելճուքներէն զրաւուած էր, երբ ծանօթ էր Արձէն-էլ Ռում անունով (յունական վայր), որ յետագային ազաւազուեցաւ էրզրումի: Թէ՛ զինուորական եւ թէ՛

քաղաքական տեսանկիւնէն՝ իշխող զէրք եւ ռազմազիտական մեծ կարեւորութիւն ունէր: Հին ասեմնեկ շատ կարեւոր հարկ-կազման քաղաք մըն էր, եւ հայեր մինչեւ այսօր յատուկ դուր-դուրանքով կը կառնին անոր «կարին» հին անունին: Որպէս միսիոնարական զէրք զբաւուած էր 1839-ին:

Էրզրումի մէջ էր որ առիթը ունեցայ մօտէն ծանօթա-նալու թրքական կացութեան: Պատերազմը զբեթէ սուբալի վերածած էր դայն, կարելի էր ցօրենն զանել, բայց զինը չա-վազանց բարձր էր, եւ վարչութեան անտարբերութեան եւ ան-ճարակութեան հետեւանքով սովի սլայմաններ ստեղծուեցան: Միսիոնարները շատ ժամանակ տուին եւ ուշադրութիւն դար-ձուցին սովի ամօքումին, ալիւր հայթայթելով կարօտեալներուն: Առաջին ճամբորդութիւններէս մէկը տեղի ունեցաւ այն զիւղերուն մէջէն, ուր սլատերազմը դործած էր իր աւերը: Այ-ցեւեղինք թուրք, հայ, քիւրտ, սլաւոնիկ եւ եզլիտի բնակչութիւնն ունեցող զիւղերը: Արեւմուտքի մէջ եղածին նման զիւղական շրջաններ չկան: Մերձակայքի ամբողջ ժողովուրդը միասին կը հաւաքուի եւ կը կազմէ զիւղ մը: Տղաւորուեցայ տեսած դա-նազան սպրեւելեկերովս՝ սկսեալ քաղաքներու եւ մեծ զիւ-ղերու վերնայարկ ունեցող եւ լաւ շինուած հանգստաւէտ տու-ներէն մինչեւ կոնստանտնուպոլիսը: Եւ ինչպէ՞ս զիւղ մըն էր, որ մասամբ շրջափակուած է վայտեայ վաճառարմով մը: Որքան յաճախ զիւղերած եմ նման «օտա» մը, մինչ ձիս կապ-ուած է բաժանումի տախտակին ճիւղ միւս կողմը: Կրնայի մտիկ ընել, երբ ան կը ծամէր իր դարին. իսկ եւս կ'ուտէի կե-րակուրտ եւ ճամբորդական անկողնիս մէջ սլոտկած ատենս կրնայի Երկարել ձեռքս եւ շոյել անոր կոնակը: Պէտք է խոս-տովանիմ, որ վեց շաբաթ կամ երկու ամիս տեւող յաճախա-ղէտ ճամբորդութիւններուս՝ ձիուս հետ ունեցած նման ընկե-րակցութիւն մը երբե՛ք անհաճոյ չէր:

Բուրլին կողմէ ջերմ ընդունելութեան մը արժանացանք: Բիւրսերը շատ մը տեսակէտներով հաճելի թուեցան ինծի - ֆիզիքայէս առողջ ցեղ մը, անոնցմէ շատեր բարձրահասակ, զեղեցիկ տեսքով եւ կորովի շարժումներով, ինչ որ զիրենք կը յատկանշէ, որպէս լեռնարնակ անձեր, որոնք հաճոյքով կը թա-վառլոն բլուրներու եւ ձորերու վրայէն:

Ընդհանրապէս հիւրասէր են, առատաձեռն հիւրընկալ-ներ, յարգանքի մասնաւոր զգացում մը ունին հիւրին նուիրա-կան իրաւունքներուն հանդէպ, իէ՛ն անոնք ապահով են իրենց հիւրընկալին կալուածէն ներս: Եւ սակայն, դոյքի իրաւունքնե-րու զգացումը չէ զարգացած այնքան, որ հիւրընկալութեան վրայ ինչքերէն անդամ մը որ հեռանար հիւրընկալին հողերէն: Կը պահպանեն տո՛ճմային դրութիւնը: Արնակուիւր առանց զո՛ճի երեւոյթը, երբ ո՛չ միայն արիւն կը թափի, այլ՝ շատ աւար կը մնայ յաղթականին: Ասիկա իր քովը կը պահէ այնքան ատեն որ կարենայ ինքզինք պաշտպանել: Գողութիւն եւ աւազակութիւն շատ հասարակ են: Արդարեւ, երբեմն զիտել կը տրուի թէ քիւր-տը հանգիստ չի կրնար քնանալ, եթէ բարձին տակ շունենայ ա-րանց սակարկութեան եւ վաճառումի ստացած բան մը:

Երեւալայած էի որ անոնց սպրեւելեկերպը կը համապա-տասխանէր անոր, որ դոյութիւնն ունէր Եւրոպայի աւատապե-տական ժամանակներուն, շրջանի պէյը կը նմանէր աւատապե-տին: Իր պատմութեանը հազած եւ զեղեցիկ ձի մը հեծած այս-պիսի պէյ մը, որ ինամքով զարդարուած կ'ըլլար եւ հետեակ կ'ունենար քրտական զեղեցիկ ձիեր հեծած ծառաներ, զերա-զանց շքերթ մը կը ներկայացնէր: Այսպիսի մէկու մը հիւրա-սիրութիւնը անսահման է եւ չեմ կրնար ուրանալ որ շատ մը տեսակէտներով շատ հետաքրքրական եւ ոչ անհաճոյ, թէ՛ն ոչ միշտ առանց «փորձառութեանց»:

Առիթով մը հիւրն էի այսպիսի մարդու մը, որ կը բնակէր Էրզրումի հարաւարեւելքի փալանթոքան լեռան Բիւրտ Չեւի-մի զիւղը: Գացած էի հանդիպելու Պր. Նէվին, որ Պիլիթիսէն ե-կամ ատեն, ճամբան հիւանդացած էր: Մեր քիւրտ հիւրընկալը շատ սիրալիւր էր եւ մեզի յատկացուածը՝ հիւրերու վերապահ-

ուած «օտաջն», որ կը դռնուէր ախոռին մէջ, այնպէս որ մեր ամբողջ կազմածը միասին էր: Մեզի հայթայթուեցաւ մեր հանդիստին համար անհրաժեշտ ամէն ինչ: Այս յարկարաժինին մուտքը նրբանցքէ մըն էր: Մեզի կ'ընկերանար կառավարական աստիկան (ժանտարմ) մը: Տեղաւորուեցանք զիշերը հանդստանալու եւ ամէն կողմ մուտք էր:

Կէս զիշերուան ատենները արթնցայ անկողնին մօտ գլուխուդ մէկու մը շարժումէն: Կարծելով որ Պր. Նէվին էր, հարցուցի թէ կրնայի՞ օգտակար ըլլալ իրեն: Պատասխան շարունեցաւ, բայց տեսայ որ մէկը հապճեպով ետ քաշուեցաւ, սրուն վրայ վեր ցատկեցի, պահապանը արթնցուցի, եւ քննութիւն մը կատարեցի: Տեսայ որ դողը երկու պատերուն մէջէն փորած էր - մէկը դուռուէն նրբանցքին մէջ, իսկ միւսն ալ նրբանցքէն զէպի մեր դռնուած ախոռը: Գողին համար պատը ծակելու արժանի «զանձ» չկար ճամբորդական պայուսակի մէջ, բայց 25 սողար արժողութեամբ առարկաներ տարած էր հետը: Կ'ենթադրուէր որ ձիուս - արարական ձերմակ ձի մը - համար եկած էր: Ձին չէր վերջացուցած կերը եւ յայտնի էր որ գողը կը վախնար որ եթէ ձին մերժէր թողուլ կերը, կրնար արթնանլ հիւրերու ամբողջ խումբը եւ որով ոչինչ պիտի չահէր: Հրաժարած էր ձին առնելու զազափարէն եւ ուշադրութիւնը քարձուցած էր որեւէ բան առնելու վրայ: Շատ բուռն եղաւ մեր հիւրընկալին ունեցած ընդվզումը եւ ամբողջ զիւղը լծուեցաւ գողը դռնելու սպարդիւն ճիգի մը:

Իրիտանական հիւպատոսին միջոցաւ կատարուած դանդաղ շնորհիւ՝ կորուստիս հաւասար գումար մը ստացայ: Քանի մը տարի ետք, առիթը ունեցայ երիտասարդի մը այցելելու իրզրումի բանտը: Բանտին սենեակը մտած ատենս սիրալիբ կերպով ընդունուեցայ այդ զիշերուան «հիւրընկալիս» կողմէ: Նստանք եւ միասին խօսակցեցանք, եւ ինձի հազարդեց որ կառավարութիւնը իրմէ գանձած էր ինձի վճարուածին երեք անգամը, ինչ որ անարդար կը դանէր: Որոշ էր որ ինք գրգռած էր, ձիս զողնալու յոյսով: Բանա կը դռնուէր մարդասպանութեան ամբաստանութեամբ:

Նոյն քննաչափային շուրջ երեսուն մղոն արեւելքը դըտ-

նուող քրտական ուրիշ զիւղ մը հասայ, երկուցեան արեւը մարդ մտած ատեն եւ հոն հանդիպեցայ Երկվեցեակ մը քրտական տուներէ բազկացած զիւղակի մը: Ախրայիբ ընդունելութեան մը արժանացանք եւ մեզ տարին զիւղին ամենազեղեցիկ սենեակը, ուր զիշերեցիք մենք եւ մեր կենդանիները: Առաստընը զոհացու մտուեցաւ մեր կարիքներուն: Երկուցեան սուրճէն եւ խօսակցութենէ ետք, մեր հիւրընկալը եւ քանի մը ուրիշ այցելուներ հեռացան եւ առանձին թողուցին մեզ: Գրինք դրան նիզը եւ արզելը զրինք անոր ետեւը, եւ տեղաւորուեցանք հանդստանալու: Գիշերուան լաութեան մէջ արթնցայ մահիճիս գլխուն վերեւ քարէ գետնին վրայ երկաթ կոշիկի մը հանած ձայնէն: Յաջորդող տասը վայրկեանը շատ ճնշիչ էր. իրաւամբ կը զգայի որ վտանգուած էինք, սրովհետեւ դողերու բայն կը նկատուէր այդ վայրը: Սրտի բարախումը մեղմացնելու նպատակով, դժուարաւ թուքս կը կլէի եւ հնարաւոր հանդարտ ձայնով մը պահանջեցի. «Ո՞վ կայ հոն»: Երկաթ կոշիկները անսպասելի ձեռացան, բայց ոչ իսկ բառ մը լսուեցաւ որպէս պատասխան: Ես մտանաւոր, զիշերը միշտ քովս ունեցած մտմս վառեցի, եւ տեսանք «օտաջն» զրան մուտքը կեցող ու վերէն վար զինուած երկու հուժկու քերտեր: Ներքնապէս զգուցուցիչ հեւք մը ունեցայ, բայց իսկայն սրտապնդուեցայ որ մ'ընէ շարժում չըրին: Կարելի անտարբեր հեղինակութեամբ եւ գերազաս անձի երկուցթով կանչեցի ժանտարմը եւ հրամայեցի որ տեսնէ թէ ինչ կ'ուզին այս մարդիկը, եւ տեղաւորուեցայ՝ կարծես թէ ջանք մտած ըլլայի: Չեմ կրնար բնել որ շէի ահարեկած, բայց քիչ մը մտահոգուած էի: Յայտնի եղաւ որ այս երկու անձերը զիւղէն հեռացած էին մեր ժամանումէն առաջ. ժանտարմները կը պնդէին որ գողութեան նպատակ ունէին: Երբ կէս զիշերին կը վերադառնան, անտեղեակ մեր ներկայութենէն, խորհրդատուր կերպով մը կը բանան դուռը, զոր կարծած էինք ամբողջս կը պղծուած ըլլալ, եւ մտ կը փնտռէին: Յայտնապէս, անոնք այնքան սպառնալից էին իմ «՞՞՞վ կայ հոն» խիստ հարցումէս, որքան որ ես ալ քարէ յատակին վրայ անոնց երկաթ կոշիկին հանած ձայնէն: Շատ ներողութիւն խնդրեցին այսպիսի ուշ-պաշտօնական ձևով ինձի պէս «յարդեկի» (?) հիւր մը անհանգստացուցած ըլլալ-

նախ համար եւ հեռացան: Արդարեւ, բարեկերթ գողեր - բնա-
 բեան արձնականներ: Յաջորդ առաւօտ ուրախ-զուարթ եւ ոչ
 թէ տխրած մեզ ճամբու զբին: Առիթով մը նոյն այդ լեռնե-
 րան մէջէն կը ճամբորդէի բունն ձմեռ մը: Սաստիկ փոթորիկ
 մը հարուածեց մեզ: Կարգ մը տեղեր ձիւնը շատ շատով կու-
 տակուեցաւ եւ շատ դժուար էր վայրէջք կատարել նեղ արա-
 ճեան: Վտանգաւոր էր այդ արաճեալը կորսնցնելը: Ստիպուած
 էինք յառաջանալ, հարստակ սաստիկ հովին, որ ցուրտ էր ս-
 կծու: Հասանք քրտական դիւղ մը՝ Մաշեթիւ: Ներկայ էր
 քրտական ասպնջակահուծիւնը:

«Օտա»ին առջ օդը լաւ էր, հակառակ տխուրն ծանրա-
 բեւեռուած հոտին: Այս անգամ հիւրընկալս պէյ չէր, այլ հա-
 սարակ քիւրտ մը: Խնդրանքիս վրայ բերաւ զովացուցիչներ, ո-
 րոնք ընդհանրապէս շատ հաճելի պիտի չլընթանին, բայց որոնց
 լաւ համը տակաւին կը մտարեբեմ: Սեւ, սպտուտ տապակի մը
 մէջ առատ թթուած կարագով տապկուած եւ կամ աւելի ճիւղը
 խաշած չորս հակիթ եւ քարացած սեւ հացի նկանակ մը եղաւ
 ձաշ, որ շատ հաճելի էր: Այն ատեն միայն հասկցայ թէ որ-
 քան անօթեցած էի եւ զրեթէ սպառած՝ փոթորիկին զէմ պայ-
 քարկող: Փոթորիկը պատճառ դարձաւ որ երկու օր այս զիւղը
 մնամ, ինչ որ պատեհութիւնը տուաւ որ տեսնեմ հիւրընկալիս
 բարեպաշտութիւնն ու ամբարշտութիւնը: Յառաջացեալ տա-
 րիքի մէջ էր եւ հիւանդիկալի: Հիւսէյն անուր զուակ մը անկը եւ
 Մեհմէտ անուն ծառայ մը, որ հոգ կը տանէր արջուրին, ոչ-
 խարներուն եւ այծերուն, եւ կը զբաղէր ուրիշ որեւէ գործով:
 Նկատելով որ փոթորիկը կը շարունակուէր իսկ ձիւնն ալ թան-
 ձըր էր, հիւրընկալս եւ ես այդ երկու օրուան մեծ մասը միա-
 սին հիւրերու յատկացուած այդ «օտա»ին մէջ անցուցինք: «Օ-
 տա»ն ախտին շրջափակուած սովորական անկիւնն էր: Ծիւղ
 արտաքին զբան դիմացը: Մէկ ծայրին վրայ գտնուող երկու
 սինները կը կազմէին մուտքը: Ասիկ սկսեալ սալաբոստակուած
 անցք մը կ'առաջնորդէր դէպի միւս ծայրի «օճախ»ը (վառա-
 րան): Այս անցքին երկու կողմերը նշանակուած տեղերու վր-
 այ փուռած էին ափօջեքներ (մահիճ): Ասոնք ցերեկը իբրեւ
 բարձ, թրքական ձեւով նստելու կը ծառայէին, իսկ գիշերն ալ

իրբեւ անկողին: Այս տեղերը եւ անցքը օրական 3-4 անգամ
 կ'աւրուէին, եւ բոլոր եկողները կը հանէին իրենց ոտնամանները
 - մոյլ կամ կօշիկ - որոնք կը ձգէին մուտքի դրան առջեւ: Այս
 ձեւով բաւական մաքուր կը պահէին այն տեղերը, որոնք մեզի
 տրամադրուած էին նստելու կամ քնանալու: Միւս կողմէ, պա-
 տերն ու առաստաղները սեւցած էին «օճախ»ին մուտքէն, որ բաժ-
 նուած էր երկու սիւնով, որմէ մէկը կը հասնէր ծխնելոյղին,
 իսկ երկրորդը «օտա»էն դուրս կ'երկարէր: Ամբողջ շուրջը շուրջը
 աւատօրէն կ'ախուռող սարդոտայիններէն ոմանք կարծէք հիւր-
 ընկալիս պատանեկութեան օրերէն մնացած էին: Քանի մը կեն-
 դանի կար ախոռը: Յուրտ օդին հետեւանքով մաքուր օդի ամէն
 անցք զգուշութեամբ զոցուած էր, նոյնիսկ ծխնելոյղը տանիքին
 վրայ գտնուող թակարդակափարիչով մը ողջ կը պահուէր կրակ
 չվառած ատեն: Մաքուր օդ ներս կուզար միայն այն պահուն,
 երբ դուռը կը բացուէր որ մարդիկ կամ կենդանիներ ներս կամ
 դուրս անցնին: Ես քրտերէն չէի գիտէր, իսկ հիւրընկալս շատ
 թէ թրքերէն գիտէր, այնպէս որ սահմանափակ էր մեր խօսակ-
 ցութիւնը: Ան կը նստէր «օճախ»ին մէկ կողմը, իսկ ես միւս
 կողմը, այս ձեւով անցուցինք 56 փամ:

Յառաջացեալ տարիք ունենալուն եւ յայտնապէս մտահոյ-
 ուած իր վատաուղծութեամբ, շատ ջիւղեւանդ էր եւ շատ փա-
 մանակ կը յատկացնէր կրօնական պաշտօններու: Իսլամութեան
 նշանակած օրական հինգ աղօթքներէ զատ - որոնք բաւական
 կ'երկարէին - ան այս աղօթքները կը կրկնէր աւելի կարճ ընդ-
 միջուումներով: Տեսայ որ կը ջանայի ծանօթացնել ինքզինքս դա-
 նազան զիրքերով, ծնրագրութիւններով եւ ջրած կարգ մը խո-
 նորհութիւններով, ճակատը դպցնելով դետինն ձեռքերուն
 մէջտեղ, աիբը շիտակ դէպի վար դարձած: Կը զգայի թէ կողս
 կը ցուէր զայն դիտած ատենս:

Թեթեւացում մը կը զգայի, երբ շարք մը աղօթքներէ ետք
 հանդատանալու համար ես՝ ծուռիկերուն վրայ կը նստէր եւ
 «թեւարհ»ը (համբիշ) քաշելով ամէն մէկ ուլունքի հետ կը
 կրկնէր Ալլահին տրուած 99 սքանչելի մակդիրներէն մէկը: Այս
 «թեւարհ»ը 99 ուլունք ունեցող դերձան մըն է, որ բաժնուած է
 33 ուլունք ունեցող երեք մասերու, որոնցմէ իւրաքանչիւրին

վերջապահութեան ծոյց մը կայ: Հասկցայ որ 33 ուլունքներէն իւրաքանչիւրը արտասանելը - կրկնութիւն մը Ալլաճին այդբան թիւով մակդիրներուն - հաւասար էր ազօթքի մը: Նկատեցի որ ամէն անգամուն իր համըրիչը կը կրկնէր մէկէ աւելի անգամներ եւ անգամ մը ուշադրութեամբ համըրցի եւ տեսայ որ վեց անգամ կրկնուած էր Ալլաճին մակդիրները: Իսկ ես՝ իմ կարգիս մտաւ եւ խանդարեց զինք: Այսինքն՝ զրեթէ եօթը հարիւր անգամ կրկնած էր Ալլաճին մակդիրները: Իսկ ես՝ իմ կարգիս թրքերէնով կը կարդայի Կորնթացոց Թուղթիւրը: Չէի կրնար հարց չտալ թէ մեր երկուքէն ո՞րն էր աւելի կրօնասէրը: Երբեք չեմ խորհած այդ ժամանակին նոյնիսկ մէկ փոքր մասը յատկացնել ազօթքի: Լեռնցի վայրի այս քիւրտը բաւական երկար մը շաճեց Ալլաճի մասին եւ անկէ ետք շատ ժամանակ յատկացուց իր ծնրարութեանը եւ կրկնութեանը, որ արժանի լլլար արձանագրուելու Ալլաճի տոմարին մէջ եւ կարենար անցնել կամուրջէն, որ «մազլի թէլի չափ բարակ եւ սուրի չափ հասու» էր, որ մեծ անդունդին վրայէն կ'առաջնորդէր դրախտ: Կը խոստովանիմ որ ձեւական ազօթքի եւ կամ ազօթքը իրբեւ պարզ ունակութեան մտածումը յարաւոյց զիս այդ րատեն:

Այս խորունկ բարեպաշտութիւնը հակակշռուած էր մարդուն անարբութեամբը: Ինչպէս որ վերը նշուեցաւ, ան ունէր որդի մը եւ ծառայ մը, որոնք կ'ենթադրուէր թէ հոգ պիտի տանէին անոր: Բողոքաբիւ անգամներ նկատեցի որ «առքաթ»ը (ազօթքի շարք) վերջացուցած ատեն կը մտածէր իր արջառին կամ սխարներու մասին եւ Հիւսէյինին պողալով կը հարցնէր.

- Զուր տուի՞ր արջառին:

Անյիզիօրէն «ոչ» կ'ըլլար պատասխանը, որուն վրայ խեղճ մարդը բերանը կը բանար եւ դուրս կուտար անարբութեանց ամբողջ շարք մը, անիծելով որդին՝ ծոյլ անհողութեան համար: Ուրիշ անգամ մը.

- Մե՛հմէ՛տ, այժերը ներս բերի՞ր:

Նոյնքան վճռակամութեամբ «ո՛չ» կ'ըլլար պատասխանը, եւ համանման չափով անարգանք կը տեղար Աճմէտի վրտուն: Այս ձեւով ինքզինք թեթեւցնելէ ետք հիւրընկալ կը վերադառ-

նար իր «նամազ»ին (ազօթք): Եւ կ'ըսէի եւ ինքզինքիս. «Ո՛հ, ունայնութիւնը նախաճշգում ձեւականութեանց եւ արարողութեանց՝ սրպէս շնորհնէի Աստուծոյ»: Եւ սենեակին իմ կողմս Կորնթացոց մէջ կը կարդայի «Ալլաճիւն կայ Աստուծոյ հոգիին գտնուած տեղը»:

«Նոր կակ մըն է սնն սր Գրիստոսի մէջ է»:

«Հին բաները սնցած պացած են. տե՛ս, նորոգուած են անոնք հիմա»:

«Օրհնեալ լլլայ Աստուած, իր անհառելի ընծային համար»:

Դատապարտե՞մ քիւրտը, որ այնքան վեհամնօրէն հիւրասէր է եւ գող. խո՛րապէս կրօնասէր ու զու՛հիօրէն անարգալից:

Արդեօք պիտի վարձուի թէ մտերմութիւն հաստատած էի քիւրտ գողերու հետ, եթէ պատմէի ուրիշ փորձառութիւն մը: Արեւը իր երկար շուքը տարածած ատեն ձիով դացի ճահար, որ կը զանախի էրզրումի արեւելքի Տէլի Պապա անցքը, ուր յետին ամէն այդ մարդ աւաղակ էր: «Բարի՛ եկաք. վա՛ր իջէք ձեր ձիէն», եղաւ սիրալիւր պատասխանը, երբ խնդրեցի որ զիս հիւրասիրեն այդ զիշեր: Զիբուն հոգ կը տանին եւ ես զրան քով քարի մը վրայ նստած կը վայելեմ արեւամուտը ու կը կազուրում լեռնային օդէն: Հիւրընկալս նստած է զիմացի քարի մը վրայ եւ զիրար բարեւելու սովորական ձեւանեանք: Կ'ըսէ թէ տխրած է, սրովհետեւ կառավարութիւնը պիտի զինուորարկէ իր միակ սրդին, որ, այս իսկ պատճառով, պէտք էր զերծ կացուցուէր: Կարծելով որ կրնայի ազդեցութիւն տնկնալ, հարցուց որ պիտի ուզէի՞ հիւպատոսին միջոցաւ միջամտել կուսակալին մօտ եւ աղատել իր տղան: Խօսեցանք այդ մասին եւ արեւը մարը մասն ատեն ոտքի ելլելով, «Ալլաճի ժամ է» ըսելով, ներս դնաց: Կատարելապէս բնական ձեւով ըսուած էր, հիշո՞ւ այնպէս՝ ինչպէս մարդ պիտի բէր «ճաշի ժամ է»: Սպասեցի մինչեւ վերադարձը: Դուրս եկած ատեն.

- Ի՞նչ կը զգաք: Զեր ազօթքը հանդասացուց ձեզ. ըսի:

- Ո՛հ, այո՛, - պատասխանեց, - Ալլահին ձեռքն է, թող Ան տնօրինէ իր յարմար տեսած ձևով:

Պահ մը ազդեցուցիչ էր այս խօսքը լսելը քիւրա հիւրընկալիս բերնէն, այնքան նման այն խօսքին, զոր ջերմեռանց բրիտանեան կը կարծէ որպէս արտայայտութիւնը ամենայնուհանդերձ հաւատքին - բարեպաշտ մեթոտիկումը դժուարութեան պահուն: Նամանուանը կասկած չունէի, որ պիտի չլարաներ կողոպտելու գիւ, եթէ հանդիպած ըլլար ինձի ամայի լեռնայ գիւն վրայ յարմար վայր մը:

Տարօրինակ խառնուրդ մը եւ ա՛լ աւելի տարօրինակ մեկնարանութիւն ազօթքի տոխած սիւփանքին մասին: Մենք ըբրիտանեանե՞րս կը վայելենք ազօթքի սիւփանքին մեծաշնորհը: Եւ կամ գիտե՞նք, թէ ի՞նչ կը նշանակէ ազօթքը: Ի՞նչպէս պիտի զմտադրենք այն, ինչ որ մեծ մասամբ ազօթքի կը կոչենք, քիւրտին այդ ազօթքէն:

Լեռնային այդ շրջանին մէջ, զոր քիւրտեր Բիւրտիստան կը կոչեն, իսկ հայեր ա՛լ « Հարստան » կամ « Արմինիա », քիւրտներն ու հայերը երկրին գլխաւոր երկու ցեղերն են, որ կը թափին պահպանած ըլլալ ազգութիւն եւ հին ասանդութիւն: Հին ասանդութիւն սկսած, հայեր (որպէս աւելի տկար ազգ) տառապած են հալածանքէ, եւ սակայն անոնք եւ քիւրտերը կ'ապրին իրրեւ գրացիներ, այնպիսի ձևով մը, որ կը պահպանեն իրենց մամուլայտուկ ցեղային գիմարիծը, կազմակերպութիւնը եւ ասանդութիւնները: Ես այն կարծիքն եմ, որ երբ Եւրոպա « Թուրքիոյ զբոստանները պաշտպանելու » իր սպարգիւն ճիղին մէջ աւելի դործօն կեցուածք մը որպէզպէս եւ ինքնախար Հայաստան մը երազուեցաւ՝ քիւրտերու ասպատակումի եւ թայանի բնազդները արթնցան: « Երբեք ինքնախար Հայաստան մը՝ Բիւրտիստանի մէջ », եզրս իմ ըսած քիւրտիս բացառականութիւնը: Թուրքին ձեռքը գործիք գործան անոնք, օգնելու որ գործարարութեան գրաւին այն գաղանկութիւնները, որոնք հայաց պատմութիւնը ըրին շատ ոգրերգական, շատ արիւնտ եւ գափան: Յամենայնպէս, հայը շատ աւելի կը վստահէր քիւրտին՝ քան թուրքին: Սովորական ասանդեր հայը կը

զլար, թէ կրնէր շատ աւելի ասպարհով էին զբոսական՝ քան թէ թրքական երգիքը մը տակ:

Շարունակեցինք մեր ճամբան անդիտակից այն վտանգէն, որուն մէջէն անցած էինք եւ հասկցանք թէ ինչո՞ւ Բոմաթուրի մարդիկ բացադանչած էին «Փառք Աստուծոյ, ողջ եւ ապահով էք»: Եւ իրօք՝ էինք: Յաջորդ առաւօտ Արաքս գետը անցանք Իսոյի գիւղին մօտ դանուող հին եւ շատ ամուր քարէ կամուրջի մը վրայէն: Ճամբան սուր անկիւնադարձի մը վրայ հանդիպեցայ կատարելապէս զինուած երեք ձիաւոր մարդոց, որոնք այնքան մօտ էին, որ կրնայի լսել անոնց բացադանչութիւնը. «Տե՛ս, ահա՛ այդ սպիտակ ձիկն»: Այս սնդամ պահպան չունէի եւ զիս ապահով դրացի՝ այդ միջադէպէն ետք: Արդարեւ առաջակութիւն եւ զողովիւն, վեհանձն հիւրասիրութիւն եւ երկիւղած երախտադիտութիւն ձեռք ձեռքի կ'ընթանան:

Իրզրուածի շրջանի սովեհէն սպաւորիչ ճամբորդութիւններէս մէկը Արարատ լեռ վերելքս էր - համբաւուոր այն լեռը, որուն վրայ կանգնած էր Նոյեան Տապանը: Երբ վերեւ յիճուած շրջապտոյտին Շաքիր փաշային ընկերացող Պր. Սալչեպէն եւ խումբը հասաւ Արարատ լեռան ստորտը դանուող Պայազիտ, վճուեցինք թէ արտօնուած էինք մաղլցելու անոր վրայ:

- Ոչ ոք հասած է դազաթին եւ կարելի չէ, յամառօրէն եւ վճուականօրէն կը պնդէր այդտեղի վանքէն հայ եկեղեցական մը:

- Ինչո՞ւ կ'ընէք այդ յայտարարութիւնը, հարցուցի: Վե-
րելքը կատարուած է տարբեր անհատներու կողմէ եւ հոս, եւ
մատնանշելով Պր. Սալչեպէն, աւելցուցի, մէկն է որ ճիշդ դա-
գաթը գնաց չորս տարի առաջ:

- Ձե՞մ հաւատար: Անկարելի է, եղաւ պատասխանը:

- Ինչո՞ւ կը կարծէք որ անկարելի է: Ճիշդ է որ շուրջի
լեռներէն աւելի բարձր է, բայց աւելի մեծ ճիւղով կարելի է
մագցիլ անոր վրայ: Ինչո՞ւ անկարելի:

Ասոր հետեւեցաւ պատասխանը: «Սուրբ Աւետարանը մե-
զի կը պատմէ Փրկիչին՝ Վրկին ծնելու դաղտնիքին մասին Նիկո-
տիմոսի հետ ունեցած խօսակցութիւնը: Հոն կ'ըսուի թէ անկա-
րելի է մարդուն կրկին մօրը արգանդը մտնել եւ ծնիլ: Ասիկա ի-
րողութիւն է նաեւ Արարատ լեռան համար՝ հետեւեալ պատճա-
ռով: Տասրանը հանդէսեացաւ Արարատի վրայ եւ ջրհեղեղէն ետք
մարդկային ցեղը նոր կեանքի մը եկաւ: Գաղաթը, որով, դար-
ձաւ արգանդը՝ ուրիշ յառաջացած է մարդկային ցեղը, այնպէս
որ մարդկային ոտքը չի կրնար կրկին կոխել այդ վայրը: Ոմանք
կ'ըսեն թէ հասած են անոր, բայց միայն միջեւ կէս ճամբան
կտրած են եւ գաղաթին նայած են հեռադիտակով: Անկարելի է
յաջողիլ»: Որով՝ կարելի չէր հաշտեցնել ոմանց հաւատքը ու-
րիշներուն գործերուն հետ: Յամենայնդէս, չլհատեցանք մեր
նպատակին մէջ, թէ եւ իրականութիւն է որ չյաջողեցանք մեր
փորձին մէջ:

Մեր գտնուած վայրէն շատ սուլաւորիչ էր լեռան տեսա-
րանը: Պայծառ էր օրը եւ երկինքը անամպ, այնպէս որ կրնա-
լինք տեսնել Արարատը ատորոտէն մինչեւ դագաթը: Հնադար-
եան այս հոյակապ սրահալը, չըմանակի լեռներէն բարձր, իրա-
կան հակայ մը՝ դաճածներու միջեւ: Լաւայի հոսանքները, ո-
րոնք անոր կողքէն վար վազած են ամէն ուղղութեամբ, ալ-
լանդակ եւ անհարթ ձեւեր կաղմած են: Ձիւնաշարքը բոլորովին
անկանոն է եւ շատ բարձր: Ժայռակողերը կը թուին գրեթէ
մինչեւ կատարը երկարել:

Ինչ ժամանակ առաւ մեր պատրաստութիւնը: Լեռ մա-
ղցելու ատեն դործածուելիք երկու կոշտ դաւաղան շինել ար-
ւինք, մեր կօշիկներու ներքաններուն մխուած սառի յատուկ

դամեր եւ կրունկներուն երկար պողպատ մեծ ցիցեր, երեք օր-
ուան բաւարարելիք հաց, քիչ մը վայտածուխ, պղտիկ կրակա-
բան մը՝ ձիւնը հալեցնելու եւ պատրաստ էինք ճամբայ ելե-
լու: Ետքիւր վաշտն մեզի հայթայթեց զինուորական ուղեկից եւ
քիւրտ առաջնորդներ: Իր սպաներէն մէկը ընդունեց մեր հրա-
ւէրը եւ մեզի հետ ճամբայ ելաւ:

Գիշեր մը ճամբան անցընելէ ետք, երկրորդ օրուան յետ-
միջօրէին ուղղուեցանք դէպի լեռան ցած դառիվարը եւ սկը-
սանք մեր վերելքին՝ յառաջանալով ամէն կողմ առատօրէն ցըր-
ւած լաւայի քարերու ընդմէջէն: Լեռներուն ստորոտի դաշտա-
ղետինը մօտաւորապէս 3500 ոտք բարձրութեան վրայ կը դըտ-
նուի, այնպէս որ մեր առջեւ ունէինք մաղցելիք շուրջ 13-14
հազար ոտք բարձրութիւն մը: Ժամ մը վերջ հասանք քրտական
բանակատեղի մը. քիւրտերը խօստացան որ սպահով էինք հոն:
Ապացուցեցին որ շատ հաճոյակատար մարդիկ էին: Հսկայա-
կաղմ եւ քաջ մարդիկ էին, վեց ոտք բարձր, Փիղիքապէս ա-
ռողջ, աշխոյժ եւ մեզի ծառայեցին որպէս մեր յաւազոյն ու-
ղեկիցները: Արդարեւ, առանց անոնց՝ կը վախնամ որ մեր ձեռ-
նարկը բոլորովին պիտի ձախուղէր: Վերելքէն տաքնալէ ետք,
ջուր խնդրեցինք այս բանակատեղիէն եւ մեզի հրամցուեցաւ
ցելսէն քիչ մը սարբեր եւ ոչ շատ մաքուր բան մը: Թէեւ ծա-
րաւ էինք, բայց առաջին փոքր ուժայէն խի մէկըի հրեցինք
զայն: Ասոր վրայ աղաչեցին որ վաշտն ներէր իրենց, հիւրըն-
կալութեան երեւութեան այս պահաւին համար, բացատրելով
որ ջուր չկար մօտերը: Իրենց կիները իրենց կոնակին վրայ,
լեռնէն վեր երկու ժամ հեռաւորութեան վրայ պտուղ գետա-
կէ մը կը կրէին զայն: Երկու-երեք օրը անդամ մը արջառը կը
աանէին գետակ մը, որ կը դտնուէր հետուն՝ դաշտաղետինին
մէջ, ուրկէ անցած էինք: Ինչ մը հանդատանալէ ետք շարու-
նակեցինք մեր վերելքը շուրջ երկու ժամ եւ սպա գիշերը ան-
ցընելիք տեղ մը փնտռեցինք, ուր ջուր գտնուէր: Բախտաւոր
էինք որ կրցանք փոքր գետակ մը գտնել, որուն սառած ջուրը
լեռնէն վար կը վազէր ժայռերուն ներքեւէն: Այս գետակին
մօտը գիշերը անցընելու համար մեծ ժայռի մը պատասպարուած
կողմը լարեցինք մեր վրանը, ուրկէ մաքրեցինք պղտիկ քարե-

ըլ, մինչ մեր ուղեկիցները շուրջի ժայռերուն կապեցին իրենց ձիերը: Բաւական փշեղէ կտք բռնկցուցին կրակարանը եւ շատ շանցած կրցանք տաք թէյ ունենալ, եւ մեր ընթրիքը ըրինք թէյով, խաշած հաւկիթով ու տեղական հացով: Կէսօրէ կտք ժամը վեցին, ջերմաշափը տաքութիւնը դերոյէն վար ինը սանթիկ-բատ կը ցուցնէր եւ քանի ժամանակ կ'անցնէր ցուրտը այնքան կը սաստկանար: Փաթթուեցանք մեր վերաբրկուններուն մէջ եւ պատկեցանք: Բայց ոչ թէ կազդուրիչ քունի մը համար, որովհետեւ ցուրտն ու անհարթ գետինը դիշերը անհանդուարացուցին մեզ եւ ուրախացանք երբ առտու եղաւ, երբ կրցանք կրկին ըլլալ արևուն հասնելի ճառագայթները եւ տաքցնել քիչ մը մեր թմբած մարմինները: Առաւօտեան ժամը 6:30ին տաքութիւնը դերոյէն վար երկու էր: Օսմանը դրկեցինք որ ջուր բերէ: Վերադարձին ըսաւ թէ գետակը ցամքած էր, բայց կրցած էր քիչ մը ջուր գտնել ժայռերուն տակ եղտիւրի ծակերուն մէջ: Եւ արդարեւ, յայտնի էր որ գետակը հոսած է հալող ձիւնէն, որուն վերի խաւը դիշերը սառելով ջնջած էր գետակը: Մեր քեմփին բարձրութիւնը շուրջ վեց հազար տոք ըլլալու էր: Քիչ մը տաք թէյ մասամբ կազդուրեց մեզ եւ օրը կը խոստանար պարծառ ըլլալ: Բայց աւա՛ղ, լերան կատարը պահուրտած էր ամպի մէջ եւ չուտով ձիւնի քանի գեղեցիկ փաթիլներ սկսան սառնախտոն հովի մը միջոցաւ օդին մէջէն քշուիլ: Անոնք ցնդեցուցին յաջորդ օրուան յաջողութեան մասին մեր ունեցած յոյսը:

Լեռնէն, մեր բանակած վայրի ժայռերուն արանքէն վար նայած ատեն, տեսանք որ շատ տպաւորիչ էր հեռանկարը: Լերան ստորոտը կը գտնուէր այն փոքր դաշտադեպինը, որուն մէջէն անցած էինք նախորդ օրը, որուն մէջ ջուրը, Կերեք ըլլալ ճակները կը շողային արևու լոյսին տակ: Ասոնք քովէն կ'անցնէր գետակ մը՝ «Պալլը սու», որ ծաղում կ'անէր շատ ետ գտնուող լիճէ մը, կը հոսէր դէպի արեւելք՝ լաւային յատակ երկայնքէն մինչեւ պարսկական սահմանը եւ կը թափէր Արաքս գետին մէջ: Դէպի արեւմուտք, Պայապիտի դաշտադեպինին մէջ տեղը կը բարձրանար ապառաժուտ բլուր մը՝ «Գալուստ թա», որ ո՛րեւէ կապ չունէր անհարթօրէն կազմուած լեռներուն հետ եւ այնպէս կը թուէր, թէ դաշտադեպինէն բանադատուած էր

ստորերկրեայ դործողութեամբ մը: Ասոր քիչ մը հիւսիսը կայ «Սինէք տաղ» (ճանճալեռներ) կոչուող լեռնաշղթայ մը, որ կը կազմէր ռուսական սահմանը: Ցած էին եւ կը թուէին դրեթի աննշան՝ մեծ լերան դանդաղածային համեմատութիւններուն տակ: Ծառ հեռուն՝ արեւմուտքը կային Չուսերէք լեռները, բարձրադոյն կատարը ծածկուած էր նոր տեղացած ձիւնով: Մեր աւջեւը՝ լերան կամարը խորունկ ճեղքով մը երկուրէ բաժնուած էր: Երկու կողմերուն ձիւնադերձ ապառաժուտ լեռնաշարքեր վը բարձրանային մինչեւ դադաթը: Հիւսիսային կողմի ճեղքը բաւական մատչելի կը թուէր եւ որոշեցինք ասոր վրայ մտալիցի եւ վար իջնել լեռնաշարքը՝ ուրիշ ծրագրած էինք կատարել մեր վերելքը: Կը վարձեմ որ այս լեռնաշարքէն էր որ Պր. Բուուլ դրեթի յաջող վերելք մը կատարած էր քսան տարի առաջ:

Ժամը հիւսիսին կը մաղցէինք զանդուածային ապառաժուտ լեռնաշարքերուն վրայէն, որոնք կը գտնուին մեծ կատարին շուրջը: Այս բոլորին հետեւէքով շատ դժուարութեամբ մաղցեցանք, տեղ-տեղ մեր ձեռքերուն եւ ծունկերուն վրայէն՝ մէկ լեռնաշարքէն միւսը: Այս ձեռով անցանք շարք մը լեռնաշարքերէ եւ հեղեղուտներէ դէպի Մուխ Թեփէ յաւաքացած ատեն - կոնաձեւ բլուր մը՝ ստորոտը այն լեռնաշարքին, ուրիշ կը ծրագրէինք սկսել մեր վերելքին: Այս բլուրը վը գտնուէր երկու լեռներու՝ Փոքր եւ Մեծ Արարասի միջև: Մեր ուղեկիցները զրկած էինք ենթադրեալ նեղ ուղիէ մը, որ այս կէտին վրայ մեզի հանդիպին: Երեք ժամուան տաժանելի աշխատանքէ կտք հասանք լեռնաշարքին ստորոտը, բայց, աւա՛ղ, մեր ուղեկիցները հոն չէին: Մարդիկը կորսընցուցան ըլլալով իրենց ճամբան, կը յայտարարէին որ չէին կրնար իրենց հասած կէտէն աւելի մօտենալ եւ որով կանգ առած էին երկու մղոն հեռուն:

Երեք ժամ եւս անցաւ ցուրտին մէջ դողալով, մինչեւ որ յաջողեցանք համոզել մեր քիւրա առաջնորդներն ու ուղեկիցներէն տմանք, որ երթան եւ բերեն մեր վերաբրկուններն ու կերակուրը: Այս առարկաները բաժնեցինք խումբին անդամներուն միջև, երկու հաժիւտ քիւրտեր շաղկիւղով աւելի ծա-

ներները: Ժամ մը եւս դէպի վեր յարաջացանք եւ պատարանի դասնք դուրս ցցուած զանգուածային ժայթի մը տակ: Ասիկա պաշտպանեց մեզ ցուրտ հովին դէմ եւ բախտուոր էինք որ յաջողեցանք գտնել շատ բարակ ջուրի հոսանք մը, որ կը կաթկթէր մեծ լեռնաշարքին մէջ գտնուող ձեղքուածքէ մը: Որոշեցինք հոս անցընել դիշերը եւ չորսերնիս շատ պզտիկ մը տեղադրուեցանք հանդստանալու եւ ոչ թէ երկար քնանալու: Կծկուած դիրքը եւ ցուրտը անկարելի ջրին՝ քունը:

Հոս մենք դմեզ դտանք փոքր Աբարատի զազաթին հետ նոյն բարձրութեան վրայ: Այս կէտէն տեսարանը խիստ վեհաշուք էր: Մեր ձախին՝ դէպի արեւելք՝ Մուխ Թէֆէէն անդին կը բարձրանար փոքր Աբարատը, որուն զազաթին վրայ իրարու կը հանդիսէին Ռուսիոյ, Պարսկաստանի եւ Թուրքիոյ սահմանագիծերը: Հիտուն կար զաշապուեանը Աբաբաին որ կասպից ծով կը հոսէր: Մեր առջեւի հտէյ միջոցը լեռան կողմէն վար, հեղեղասնները, ձորերը, լեռնաշարքերը, բլուրները, մարած հրաբերանները, անհուն ժայռեայ ծածկուած լաւայեան հոսանքները - ակծուփ ծովու մը նման յանկարծ բոլորովին հանդարտած - կը ներկայացնէին տեսարան մը, զոր երեք կարելի պիտի չըլլար մոռնալ: Հանդիսաւոր լուծիւն կը աւրէր: Ժայռէ ժայռ թռչած ատեն քանի մը փոքր գորշ թռչուններուն ունեցած ճուռողիւնը միակ նշանն էր, որ ամբողջ բռնութիւնը բոլորովին անկենդան չէր: Լեռան աւելի վարի մասին վրայ քաղեցիւնք հոս-հոս ցրուած քանի մը ծաղիկներ, որոնք կեանքի պայքար կը մղէին ապառաժներու պաշտպանուած ձեղքերուն մէջ:

Գիշերը՝ սնդիկը՝ դերոյէն (սանթիկրատ) վար իջաւ, ցուրտը եւ մեր կծկուած դիրքը շարածնեցին որ երկար քնանանք: Բայց ունեցանք մեր հատուցումը: Լուսնակ դիշեր էր: Լուսնի մեղմ լոյսը կախարդական շուքեր կ'արձակէր բլուրին եւ ժայռին վրայ ինկած ատեն, բոլորովին սարօրինակ աղբեցութիւն թողլով տեսարանին վրայ: Եստ չանցած, Օրիոնի համաստեղութիւնը թուեցաւ ճիշդ մեր գլխուն վերեւ կեցած ըլլալ, իւրաքանչիւր ստաղ փայլելով խիստ պայծառութեամբ մը, զոր նախապէս երբեք չէի տեսած: Արդարեւ, ամբողջ երկ-

նակամարը կը թուէր կէտկտուած ըլլալ աղամանդներով, որոնցմէ իրաբանչիւրը գուրս ցցուած՝ կը շողար արտակարգ չքեղս: Թեամբ մը: Ետեւ արեւելքի մէջ «առաւօտեան աստղ»ը հանդարտօրէն բարձրացաւ բլուրի մը վերեւ, փոքր լուսին մը՝ չաղչաղուն փայլով մը, որուն քնքոյշ լուսինը կրնար նախանձիլ նոյնիսկ իր ամենափայլուն պահերուն: Երկիր եւ երկինք, Աբարատ եւ Օրիոն կը թուէին միացած ըլլալ՝ տպաւորելու համար մեզ բնութեան սքանչելի մեծափառութեամբը: Այսպիսի պահում մը ի՞նչպէս սիրակն ինքնարեւարար գուրս կը յորդին «Մեծ Ինքնաստեղծ»ին բնութեան սքանչապետով յայտարարուած գովարանական արտայայտութիւնները:

«Երկինքը կը յայտարարէ Աստուծոյ փառքը եւ երկնակամարը կը ցուցնէ անոր ձեռակերտը»:

«Օրհնէ Տէրը, ս'ի իմ հոգիս՝ ս'ի Տէր, Աստուած իմ, շատ մեծ եւ դուն»:

«Տիրոջ հրամանով ստեղծուեցաւ երկինքը»:

«Ո՞վ կը սարածէ երկինքը վարպետի նման»:

Ո՞վ զրաւ երկրի հիմերը որ յախտեան շասանի ան»:

Կէս գիշերէն երկու ժամ ետք կը ճգնէինք մեծ լեռնաշարքէ մը վեր բարձրանալ, մեզի ամէնէն աւելի զուարթացնող ընկերակից անհնարով առաւօտեան փայլուն աստղը: Սնդիկը դերոյէն չորս աստիճան վար էր: Ամէն նշան կար որ ա՛լ աւելի պիտի նուազէր մեր մտղայութի տանն: Որով՝ չէինք կրնար հանել մեր ծանր վերարկուները, որոնց ծանրութիւնը կը թուէր աւելնալ մեր ճամբան շարունակած ատեն: Կը գտնուէինք մեծ լեռնաշարքին եւ ժայռերուն վերեւ, որոնց վրայ 1891-ին մազըլցած էին պարոնայք Սաշլեպէն եւ Ալէն: Այդ ատեն ան ծածկուած էր ձիւնով, իսկ հիմա ճամբան մինչեւ զաղաթ բաց կը թուէր: Արեւմտակողմը կար մինչեւ կէսը ձիւնով լեցուած մեծ կիրճ մը եւ արեւելքը՝ մեծ կիրճը՝ Ողիներու Պալատը, որուն գիմացի կողմը կատարած էր իր վերելքը Պր. Պրայս: Այս լեռնաշարքը հարաւ-արեւելեան կողմը գտնուելուն՝ ձիւնը կրնայ մաքրուել Յուլիսի եւ Օդոստոսի արեւուն տակ, բայց շատ հաւանական է, որ ստորերկրեայ ջերմութիւնը կ'օգնէ այսքան

բարձրութեան վրայ դտնուող ձիւնին հաւելուն: Ծառ մը տեղեր մազլցումը դրեթէ հաւասար էր ուղղահայեաց ժայռապատերուն, որոնց վրայէն շատ զգուշութեամբ հարկ էր ընթանալ, որովհետեւ անոնց մեծազոյններէն սմանք կը թուէին այնպիսի գիրքի մը մէջ գտնուիլ, որ թեթեւ հոգում մը կրնար չարժեք գտնուիլ եւ ձիւնակոյտի յառաջացման վտանգի պատճառ ըլլալ: Մեր մազլցումի սկսելէն ի վեր մէկ ժամ իսկ չէր անցած, երբ մեր թուրք ուղեկիցը՝ Մեհմէտ էֆենտի, անհանդստացաւ: Գլը խու պտոյտ եւ ստամոքսի ցաւեր ունեցաւ եւ շատ վհատեցաւ: Դժուարաւ յառաջանալով սխալ քայլ մը առաւ եւ քարի կտոր մը տեղէն չարժած ատեն ինք ալ վար դըրեցաւ: Բարեբախտաբար շատ վար շինկաւ. սղատեցաւ, միայն ձեռքերը զէջ կերպով սկրթուած էին, սրունքներն ու մարմինը տեղուկ ճմլուած, իսկ հագուստներն ալ՝ պատռած: Հրաժարեցաւ վերելքը շարունակել եւ զգուշութեամբ ետ՝ մեր կայանը վերադարձաւ: Սեւ մազլցումի հեռուանքով յառաջացումի մեր շրջանը հարկադրաբար դանդաղ էր: Ծնչառութեան դժուարութիւնը աւելցաւ՝ քանի շարունակելիք բարձրանալ, եւ սախուկցանք կանդ առնել երեք քայլը անդամ մը: Յուրուը չափազանց սաստկացաւ իսկ ձիւնամբրիկն ու հովն ալ բաղմապատկեցին զիմադրուած մեր դժուարութիւնները: Ութը ժամէ ի վեր կը քաշէինք եւ մեր հաշուումով հասած էինք 16 հազար սաք բարձրութեան մը, երբ կանդ առինք քիչ մը զտխոցուցիչ խմելու: Բայց տեսանք որ թէյը սառած էր շէշին մէջ: Մեղիկը գերոյն տասը աստիճան վար կը ցուցնէր: Մեր բերանները այնքան չոր էին, որ հոցը աւաղ թուեցաւ եւ իրականին մէջ չէինք կրնար կշիւ գայն: Յուրան ու ձիւնամբրիկը կը սաստկանային, այնպէս որ շատ քիչ յոյս ունէինք դադարի հասնելու: Եզրակացուցի թէ խոհեմութիւնը քոչութեան լուսագոյն մասն էր, եւ մտածեցի որ ուրիշ ինչ կրնայի ընել աւելի երկատարող ընկերակիցներուս՝ Պր. Սաչլեպկնին եւ տասնապետ Հայտարին: Այս վերջինին տուի լեռնացուրս, որ Ալլահին կոչ ընելով, բացազանչեց. «Միշտ լա՛հ, դադարի պիտի երթամ»: Մտաւարապէս հազար սաք աւելի բարձրացան, բայց վտարիկը վար քշեց զանոնք: Ես

դարձայ եւ տեսայ որ վայրէջքը վերելքին չափ վտանգաւոր ու դժուար էր: Երկար հեռուորութեան մը վրայ ժայռերէն վար մազլցեցայ եւ յառաջացայ ձիւնի հեղեղատին վրայէն: Լեռնացուրս ուրիշին տուած ըլլալուս, տեսայ որ անկարելի էր ոտքերս սպահել ցից եւ դիւրասահ այն անհարթ մակերեսին վրայ: Տեսայ որ դարստափին մօտ անցած եւ ժայռերը բռնած ատենս շատ աւելի դիւրին կը քաշէի քան թէ քարակոյտերուն վրայէն, թէեւ շատ աւելի դանդաղ: Որով, որոշեցի փորձ մը ընել: Ամուրկեկ՝ վար՝ սրունքներուս շուրջ քաշեցի մուշտակ վերարկուիս ծայրերը եւ նստայ ձիւնին վրայ: Ինքզինքս կրունկներով ըս ուղղելով զանդաղորէն Արարատ լեռնէն վար սահեցայ դրեթէ նախորդ դիւրութեան մեր բանակավայրը: Ժամ մը վերջ Պր. Սաչլեպկն եւ տասնապետ Հայտար վերադարձան: Լեռան վարի դառնութիւն մէջէն երկու ժամ եւս կայտաւորէն քաշելէ ետք, հասանք ջրտական այն բանակումը, ուրկէ սպահնուած էինք մեր առաջնորդը: Մինչեւ այդ պահը շուրջ տասնմէկ ժամէ ի վեր յետիոտն դժուարաւ կը յառաջանայինք: Այս բանակումին մէջ սպասեցինք որ մեր ուղեկիցը ժամանէր եւ քանի մը կենդանի վարձելով Պայազիտ մտանք մայրամուտէն երկու ժամ ետք, բողբոլին ուժասպառ: Ճիշդ է որ, ի մեծ յուսախաբուցիւն մեզի, չէինք յաջողած, բայց օգտուած էինք մեր փորձառութիւնէն եւ սիրով պիտի ուղէինք կրկին փորձել: Մեր ժամանակը կարճ էր ու աննպաստ եւ մարդ չէր կրնար իշխել բոլոր սպարազանքուն վրայ:

Հրացանի մը ցուրկի ծայրէն հրախողի երկայնքին նայելու միակ փորձառութիւնս ունեցայ անհարթ ժայռատ տեղ մը, «Սմանէ՛ր» կոչուող կիրճին եզրը՝ Հաճընի քիչ մը հիւսիս-արեւելքը, ուր կը դանդաղ ցած Տարսուեան լեռները: 1914ին, սպտեմբերի պայթելէն քիչ առաջ էր: Միսիոնարական տարեկան ժողովին ներկայ դտնուելու համար Այնթապ գացած ատենս, այցելեցի Հաճըն: Բիւրտէթ դտնուող միսիոնարական իրաւասօժին եւ աղջկանց վարժարանին քանի մը օրուան այցելութիւն տալէ ետք, ճամբայ ելայ երեք հայ ուղեկիցներով - քարոյիչ մը, ուսուցիչ մը եւ երբորդը՝ միսիոնարական ժողովին հետ նոյն ատեն կիլիկիոյ Եկեղեցական Միութեան Այնթապ գումար-

ուելիք ժողովին աշխարհական մէկ պատուիրակը: Մեր ապահովութեան համար, վառապարութեան կողմէ նշանակուած երկտասարդ թուրք ոստիկան մը կ'ընկերանար մեզի:

Ոստիկանը մեզ հանդարտեցուց, ըսելով որ՝ թէեւ դողեր վային լեռներուն մէջ, բայց վային նաև որսորդներ: Բայց ստիկա ազդանշան եղաւ աւաղակախումբին, որ դարանակալ կը սպասէր մեզի: Մէկըմէկու ետեւէ կը քալէինք, ոստիկանը առջեւէն, ես՝ շատ մօտ անոր ետեւէն, իսկ միւսները կը հետեւէին մեզի: Յանկարծ, ճամբուն ամէնէն նեղ մասին մէջ, մեզի հրամայեցին որ կանգ առնենք, եւ ձախ ճակատի կողմս դարձած ատենս, տեսայ որ կը հայտնուէր աւաղակին ձեռքը դտնուող հրացանի փողին ուղղութեամբ. ան արդիւնց որ աւելի յառաջանաւ: Ակնթարթի մէջ ոստիկանը ձիէն վար իջած, հրացանը ուսէն վար առած եւ դիրք կը բռնէր այն մեծ ժայռին ետեւը, որուն քով կանգ առած էր ձիս: Ան հազիւ թէ հրացանը շտկած էր, երբ դնդակ մը թնդաց օդին մէջէն եւ ոստիկանը անկենդան գետին փռուեցաւ ձիուս ոտքերուն քով: Յայտնապէս աւաղակը լաւ նըշանառու մըն էր: Այսպէս զինաթափուած, աւաղակախումբին ձեռքը խաղալիք դարձանք, որոնցմէ կէս երկվեցեակ մը մեզ շրջապատեց: Յանձն առի դիտողութիւն ընել. ինծի ըսին թէ ոչինչ կ'ուզէին ինձմէ եւ թէ աղատ էի շարունակելու ճամբաս: Բնականաբար հակամէտ չէի ասիկա ընելու, աւելցնելով որ կ'ուզէի երթալ ուղեկիցներովս, զորս կը քննէին: Ոսկի եւ արծաթ կը պահանջէին եւ հինգ թրքական ոսկի առին խումբին անդամներէն մէկէն: Հաճընցի առևտրական ըլլալուն, կը կարծէին որ աշխարհական պատուիրակը ճշդք մը ոսկի սննդ էր անձին վրայ, եւ որով ախարս կտրուէին վարուել իրեն հետ եւ պահ մը այնպէս թուեցաւ թէ կեանքը վտանդուած էր: Անոր քովը կեցած՝ դիտողութիւն ըրի եւ քսակս դրսնէս հանելով լախ:

- Ինչպէս որ կը տեսնէք, այս մարդը տակի կամ արծաթ չունի, առէ՛ք քսակս եւ արտօնեցէ՛ք որ երթալ:

- Ո՛չ, ըսին: Ոչինչ կ'ուզենք ձեզմէ: Հեռացէ՛ք:

Այսուամենայնիւ, արտօնեցին որ երթայ եւ հրամայեցին որ անմիջապէս շարունակենք մեր ճամբան, սարառնալով սպաննելով որ փորձէր Հաճըն վերադառնալ:

- Աշալուրջ կը հսկենք, ըսին:

Ստիպուած՝ աւաղակներուն ձեռքը ձեռքինք ոստիկանին մարմինը իր ձիուն եւ իրեղէններովը եւ առաջ ընթացանք արեւը մարը մտած ստուն եւ շատ չանցած լեռներուն վրայէն մթութեան մէջ կը քալէինք: Մեր անձնական պաշտպանութիւնը ապահովող ոստիկանին մահը — որ մեծ դոճացում պատճառեց աւաղակներուն — շատ վշատեցուցիչ էր, եւ մեր մտաշոգութիւնը շատ աւելի խորացաւ երբ ոստիկանեցանք անոր մարմինը ճամբուն եղերքը թողուլ: Երեկոյեան ժամը տասնէր ետք հասանք քրտական գիւղը, ուր օթեւանեցանք միւշեւ առաւօտ: Կանուխ՝ յաջորդ առաւօտ շարունակեցինք ուղիւ մեր ճամբորդութիւնը եւ երեք ժամ ետք հասանք կիջօքսու (այն գիւղը ուր աքսորուած էր Արիստոթոմ) եւ ոստիկան զօրաց պատասխանատու սպան տեղեակ պահեցինք մեր տխուր վիճակին մասին: Երբ պատմեցի իրեն մեր պաշտպան ոստիկանին արարքին մասին եւ զովեցի անոր քաջութիւնը, սպան ոտքի ելաւ, զինուորական բարեւ տուաւ եւ ըսաւ:

- Ի՞նչ մարդ էր: Եթէ մեր բոլոր ոստիկանները անոր շափ քաջ ըլլային, երկիրը խաղաղ եւ ապահով պիտի ըլլար:

Երեւան ելաւ որ ասիկա հայկական աւաղակախումբ մըն էր, հաւանաբար բաղբայցած թրքական բանակի դասալիքներէ, որոնք կը գործէին Մարաշի եւ Հաճընի միջև: Խումբէն մէկը ունէր առևտրական մեր ուղեկիցին գէժ եւ կը ծրարէր մեզանէ վայն: Յետադային խումբին այս անգամը ձերբակալուեցաւ ոստիկանութեան կողմէ եւ սպանուեցաւ բանտ տարուած ատեն:

Հետաքրքրական էր այս միջադէպին յաջորդող պատահարը: Օր մը Ատանայի մէջ գրաւոր հրահանգուեցաւ ինծի որ Հաճընի դատարանը ներկայանամ որպէս կասկածելի մեղսակից մը, սպաննուած ոստիկանին դատաւարութեան ընթացքին: Նկատելով որ քալիք լալալունները ջնջուած յայտարարուած էին եւ իրականութեան մէջ մահամերձ էին անոնք պատերազմական պայմաններու տակ, քիչ մը ջլայնացած կը զգայի ինք զինքս երբ կը մտածէի որ բռնադատուած էի հակողութեան տակ Հաճըն երթալ, ներկայանալու համար թրքական դատա-

բան մը, ոճիր մը դորձած ըլլալու ամբաստանութեամբ: Թեք-
նիք կէտի մը յենելով մերժեցիք ընդունել կոչնագիրը, տեղեակ
պահեցի ամերիկեան հիւպատոսը եւ հիւպատոս Նէյթօնի մի-
ջոցով՝ դեսպան Մորիլընթաուն ու ձեմալ փաշան: Ծնորճ կաւ-
ինձի ներկայանալու ընդհանուր դատախազին եւ տալու վկա-
յութիւնս: Կարգաց ամբաստանութիւնը եւ «անհեթեթ» լոստ:
Ընդունեց վկայութիւնս եւ ամբողջ հարցը չեղեալ նկատեց:

Մեր պաշտօնավարութեան տկարահան շրջանին Տիկին
Չէյմսըզը, երկու փոքր երախտներով ինձի ընկերացաւ միա-
խոնարարութեան յարբերդ գումարուելիք տարեկան ժողովին:
Վերադարձի ճամբուն վրայ անցանք Տերսիմի լեռնէն — տիրա-
հաղթող որպէս հրոսակ եւ դող ցեղախումբերու բնակավայրը:
Մեր ճամբորդութեան առաջին օրը, լեռան ստորոտեան շրջան-
ներէն յառաջացած ատեն, բարեկամ ճամբորդներու կողմէ ա-
ռաջնորդուեցանք մենակեաց քիւրտ հովիւի մը վրանը, նկա-
տելով որ ո՛չ մէկ զիւղ կար մօտակայքը, եւ աւելի սպասով
պիտի ըլլար որպէս «հիւրը» այս մարդուն՝ քան թէ բանակիւ
լեռներու վրայ եւ թերեւս ալ ենթարկուիլ անոր աւարառու-
թեանց: Լարեցինք մեր վրանը եւ հոն գիշերեցինք:

Իրեւ նախազուգուելին մեր ճամբորդական առարկա-
ները հաւաքեցի վրանին մօտը եւ հրամայեցի երկու ոստիկան-
ներուն որ կարգով հսկեն: Տիկին Չէյմսըզը եւ սղաքը տեղա-
ւորուեցան վրանին մէջ, իսկ ես ալ պառկեցայ դրան առջեւ՝
թեթեւ քուն մը քաշելու գիշերուան ընթացքին: Կէս գիշեր-
ուան մօտ թեթեւ խնորհուր մը դրուեց ուշադրութիւնս: Նայե-
ցայ եւ տեսայ որ «հիւրընկալ» կը քննէր ճամբորդական պա-
յուսակները: Մէկը միւսին ետեւէն վերցուց տարկանները եւ
պահ մը խոկաց անոնց հաւանական արժէքին մասին: Յայտնա-
պէս կը կարծէր որ ծանրութիւնը արժէքը կը ցուցնէր: Դիտե-
ցի զինք, մինչեւ որ 3-4 ծրար քննած էր եւ յետոյ հարցուցի:

— Ի՞նչ կայ:

— Պէտք է որ այս բաները գուրու՛՛ հոս ճղէք գիշերը:
Ինչո՞ւ ներս էք դնել զանոնք: Չէ՞ք գիտեր որ գողեր եւ աւա-
ղակներ կան այս կողմերը:

Եւ ես պատասխանեցի:

— Բանի որ դուք հոս էք եւ մենք ձեր հիւրերն ենք, ան-
շուշտ վտանգ չկայ:

— Այո, ճիշդ է լոստ, յայց ես միայն մէկ հողի եմ: Աչա-
լարը պէտք է ըլլալ:


Այս ըստերով հետացաւ, ես ալ դացի մեզ պաշտօնանկու
պաշտօն ունեցող ոստիկաններուն: Երկուքն ալ խոր քունի մէջ
էին, եւ դո՛ւ չմնացին որ արթնցուցած եւ հրամայած էի իրենց
որ պահակ կենան: Վստահարար մեր հիւրընկալը մտածեց «կըր-
նար բան մը առնել տանիլ», բայց անհրաժեշտ հիւրընկալութե-
նէ առաջնորդուած՝ զգուշացաւ նման բան մը ընելէ, երբ կոչ ե-
ղաւ իրեն այլ ուղղութեամբ:

Յաջորդ երեկոյեան հասանք գիւղը, ուր Պոլսէն նոր կա-
ռավարիչ մը նշանակուած էր որ զսպուն Տերսիմի քիւրտերը:
Ան որոշեց որ հեծեալ հինգ հողի ընկերանայ մեղի, յայց անոնց
բողբոն ալ դօրանոց չըլլալուն, ստիպուեցանք օր մը յայտադե-
ցնել մեր մեկնումը: Ծատ մեծ հիւրասիրութիւն ցուցաբերեց
մեզի հանդէպ: Ռամազան էր՝ — Բուրանի կողմէ ծամապահու-
թեան յատկացուած երեսուն օրերը, երբ ամէն գիշեր, մայրա-
մուտին, ի վիճակի եղողներ մեծ ճաշկերոյթ մը կը սարքէին:
Ազաւեց որ շնորհք ընեք իրեն որ կերակուր զրէմէ մեզի երեկոյ
եամբ: Մեծ եղաւ մեր զարմանքը, երբ կէսօրէ ետք ժամը հինգին
մեր իջեանամ փայլը եկած ծառաներ, իրենց հետ բերելով կե-
րակուրներով եւ անուշեղէններով ծանրաբեռնուած ախտէներ:
Սեղան շտիպուեցաւ եւ վայելեցինք գեղեցիկէն սպասարկուած
հինգ տեսակ կերակուր, Պոլսոյ Թոքաթիւսան (պանդոկին) շտի-
բու ետեւում եւ հրամայում: Կատարելապէս վրայլեցինք, բայց
ցաւ զրպիւնք սպորյին համար, որուն պարտականութիւն տըր-
ւած էր վերահսկելու:

Եւ ճղը անթի էր, այդ առտու արեւածարկն ի վեր կերա-
կուր կերած չըլլալուն: Հանդարտօրէն գիտեց ընթրիքը, մինչեւ
որ հնչեց մայրամուտի խնոյանօթը: Պնդեցինք որ երթայ ճաշե-
լու, որովհետեւ մերձած էր մեզի սեղանակէց ըլլալ: Հինգ
տարրեր տեսակ կերակուրէ թողեցանք ճաշ մը իրական էր Տեր-
սիմի լեռներուն մէջ: Յաջորդ օրը, ընկերակցութեամբ հեծեալ
հինգ ոստիկաններու եւ տնի «Սախա»ի — ցեղախումբին նուիրա-

կան անձնաւորութիւններէն մէկը - շարունակեցինք մեր ճամբան Թուրքիոյ ամէնէն անհարթ, գահալէժ, նոյն ատեն ամենազեղեցիկ ու նաւ ամէնէն օրինադանց շրջաններէն մէկուն վրայէն: Երկրորդ օրը հասանք Երզնկայի գաւառաւայրը:

Կարելի է յիշել ուրիշ միջնորդներ զողերու եւ աւազակներու հետ ունեցած մեր հանդիպումներէն: Բայց յիշատակութեան արժանի է որ անցնող դարուն ամերիկացի միսիոնարներ կը ճամբորդէին ամբողջ երկրին մէջ - Վասիլոսէն մինչեւ Արարատ լեռը եւ Սեւ ծովէն Լիւանաձ - երկիր մը որ անցեալին գողերով եւ աւազակներով լեցուած էր: Բաղդատարար քիչեր կողոպտուած են, եւ որքան որ գիտեմ միայն չորսը սոսկալի մահ մը ունեցած են արիւնհարբու մարդոց ձեռքը - բացառիկ մրցանիչ մը թէ՛ միսիոնարներուն եւ աւազակներուն եւ թէ՛ կառավարութեան համար. իմաստութիւն՝ ըստ կարելոյն շատ մեծ վտանգներէ խուսափելու նպատակով միսիոնարներու վտրմէ ձեռք առնուած նախադուշական բանաւոր միջոցներ. աւազակին պարագային՝ յարգանք օտարին հանդէպ, եւ տրամաբանական փափաք՝ աւելի տիւնանդէտ աւազակներուն կողմէ որ կառավարութիւնը նեղ վացութեան շմատնուի՝ օտարներու հետ մշակած իր յարաբերութեանց մէջ. իսկ կառավարութեան պարադոյն՝ դոյզն աչալը շուրթին՝ դդուշանալու համար միջնորդներէ, որոնք կրնային չափազանց անհաճոյ ըլլալ: Նոյն ատեն հարկ է ըսել թէ ջարդերու եւ տեղահանութեանց շրջաններէն դուրս ստուար էր վարաւաններու երթեւեկութիւնը, որ կը կատարուէր քրտտոնեաներու վտրմէ՝ լեռներու եւ գաւառաւայրերու վրայէն, սահմանափակ թիւով գողութեամբ:



ԳՆՈՒՆ Է.

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈԿՈՒՆՈՒԹԻՒՆԸ

Հայ ժողովուրդին ծագումը քողարկուած է խորհրդաւորութեամբ մը, բայց հաստատուած իրողութիւն մըն է, թէ երկիրը շատ կանախ թուականէ մը ի վեր ունեցած է իր ուրոյն քաղաքակրթութիւնը եւ թէ հայեր ամենահին ցեղերէն մէկն են: Իրենց քաղաքակրթութիւնը հետեւանք է գլխաւորաբար քրիստոնէութեան սղղեցութեան եւ իրենց պատմութիւնը, Շնորհաց (քրիստոնեայ) թուականին, գրեթէ իր ամբողջութեանը մէջ իրենց ակեղեցոյ պատմութիւնն է:

Վերջին 45 տարիներուն Թուրքիա թէ այլուր շատ յաճախ յարաբերութեան մէջ եղած են հայերու հետ: Եթէ մարդ նախապաշարեալ տեսակէտ մը ունենայ հայերու մասին, կըրնայ պատճառներ ունենալ խիստ քննադատութեան եւ բարձր գնահատութեան:

Տեսականօրէն, պարսիկներու, հոմէպցիներու, մոնղոլներու, աղարներու, Քրանքներու եւ թուրքերու կողմէ պատերազմի, աշխարհակալութեան եւ կեղեքամի միջոցաւ նուաճուած եւ Արարատ լեռան շուրջ գտնուող հողամասին վրայ հաստատուած հայը շատ քիչ պատեհութիւն ունեցած է զարգացնելու այն լինչ որ կը կոչենք նկարագրի պնտապոյն տարրերը: Եթեթական ցեղ մը հաւանաբար պիտի զարգացնէ ենթակրթութեան յատկանիշները: Լայնաբերան թուրի եւ բիրի հետ

դէմ յանդիման դռնուած ասե՛ն հայր սփայում էր իր կեանքը պաշտպանել իր հնարամտութեամբ եւ գործածած է նրբամտութիւն՝ ոգո՞քելու համար իր կեղեքիչը: Դարեր շարունակ այսպէսի կեանք մը անխուսափելիօրէն կը զարգայնէ նկարագրի յատկանշական գիծեր, որոնք սրեւէ կերպով դրոյնի ճին: Հայր կարտայտուէ շատ մը յատկանշիչներ, որոնք յատուկ կըլընան ըլտըլ ցեղի մը՝ որուն գրացում է պատմութիւն եւ ենթադրկում է կերպը կեղեքումի: Ստախոսութիւն, խորգախութիւն եւ խորհուրթեան այլ կերպեր անխուսափելի կը դառնան, եւ որոշ շարիով թոյլ բարոյական դոնտարում մը պատճառ պիտի ըլլար արտայայտում աննպատ դատողութեանց:

Միւս կողմէ, եթէ ժողովուրդ մը նման պայմաններու տակ կը պահպանէ բարոյական որոշ յատկանշիչներ, որոնք կառաջնորդեն ասելի ազնուական վերաբերումի մը, այդ պարագային կրնայ շատ պատճառներ ունենալ դրոյնտար արժանանալու: Հայր մեծ ցանկութիւն ունի մտաւորական զարգացումի: Կայտառամբ է, ինչ որ ցուցաբերած է շատ մը երկիրներու մէջ. կայէս ասկիւպարական է իր բնաղըներուն մէջ: Իրականին մէջ ինծի սխոյզս կը թուի թէ այս միտումը անհատապաշտական մղում մը ունի, որ միշտ օգտակար չէ եղած իրեն: Յատաճղիմասէր է ու աշխատեակր: Վե՛ զգացում ունի ընկերացիին մաքրութեան եւ ընտանեկան կեանքի սրբութեան հանդէպ: Հայ կիներ, հոն ուր պատեհութիւնը ունեցած են, ցոյց տուած են որ ունին մտային կարողութիւններ, զորս նպատասար կերպով կարելի է բնորոշել որեւէ ցեղի հետ: Աքանշելիօրէն պահպանած են ցեղին ընտանեկան կեանքը:

Կըտուի թէ անկրթութիւնը եղած է նկարագրի յատկանշական մէկ գիծը, եւ ասկայն միտնարական կեանքիս մէկ պատահարը, որ յիշողութեանս մէջ մտացած է, որովհետեւ խորտոյէս յուցած է զիս, կայ ունի երախտագիտութեան հետ: Ռուսական սահմանադրութիւն մտա գիտի մը քահանան իր մտգովուրդէն 3-1 հոգիի հետ միտային բանտարկում եւ յեղափոխական փրօպանտ կատարած ըլլալու յանցանքով շարչարանքի ենթարկում էին: Իրենց բանտ գտնուած շրջանին կարելիս ըրի հայթայթելով ուսելիք եւ հարգուտ: Առանց դատա-

պարտուելու ազատ արձակուեցան: Քահանան ուղղակի բանտին գուռէն զբաւենեակա եկաւ երախտագիտութիւն յայտնելու: Կհամարէր իր վիւզին եւ ընտանիքին քով վերադառնալու, եւ մեր խօսակցութեան ընթացքին, յանկարծ տեսայ որ հոն կեցած եւ իր ձեռքը գոյտուս վերեւ երկնցուցած օրհնութիւնը կը կըրկնէր հայերէնով:

- Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աքոտուոյ սէրը եւ Սուրբ Հոգիին օրհնութիւնը ձեզնի հետ ըլլայ, եւ առանց անդրադառնալու թէ ինչ կը պատահէր, հեռացաւ:

Դժբախտարար, հայկական եկեղեցին շատ բան կորսնցուցած է իր նախնական, նախաարձակ աւետարանականութենէն եւ արտօնած է որ ձեւականութիւնն ու ազգայնականութիւնը տիրապետող դառնան: Ան ծառայց համայնքը պահպանելու՝ որպէս ազգային եւ ցեղային ինքնութիւն մը, եւ միայն մասամբ իրականացուց իր հետեւողներու հոգիներուն մէջ բարոյական եւ հոգեկան արժէքներ ներմուծելու դիտար նպատակը:

Ոտա աւանդութեան՝ քրիստոնէութիւնը Հայաստան թերուած է թաղեցու եւ Բարթողիմէոս առաքեալներու միջոցաւ: Այս է Հայաստանեայց Օրթոտոքս Առաքելական Եկեղեցւոյ անուան ծագումը: Վաւերական պատճառ մը չկայ տարակուտելու այս աւանդութեանը, որովհետեւ որոշ է որ շատ կանուի թրուականի մը քրիստոնէայ դաւանախոյններ կային Հայաստանի մէջ: Պատմութիւնը, սակայն, կը սրուէ թէ Գրիգոր Լուսաւորիչն է Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմնադիրը: Ասով կը բացատրուի անոր Լուսաւորչական անունը, մինչ ինք՝ ժողովուրդըն ալ երբեմն կը կոչուի «Որդիք Լուսաւորչի»: Գրիգոր շատ կանուի տարիքէն որդեկրած էր քրիստոնէութիւնը, որուն հետեւանքով շատ տառապած էր:

Անգամ մը, պետական ներքին զժուարութենէ մը տապալող Տրդատ թագաւորին թելադրուեցաւ որ Գրիգորի խորհուրդին զիմէ, որ այդ ասե՛ն բանտն էր: Այդպէս ըրաւ եւ Գրիգոր պատճառ եղաւ որ ան (Տրդատ) դաւանափոխ ըլլայ եւ այսպէսով քրիստոնէութիւնը եղաւ պետական կրօնք: Ասիկա տեղի ունեցաւ չորրորդ դարու սկիզբները, եւ կարժէ զիտել տալ թէ, այսպիսի արարք մը քիչ մը քաջութիւն կը պահան-

ջէր պզտիկ ազգի մը կողմէ կրօնքի մը որդեգրումը, որուն հետեւողները իրատօրէն կը հալածուէին Գիտիկեաննոս կայսրին կողմէ: Այս ձեւով է որ Մեծն Կոստանդիանոս զայն իր կայսրութեան կրօնքը ընկրէ շուրջ երեսուն տարի առաջ էր որ քրիստոնէութիւնը դարձաւ: Հայաստանի պետական կրօնքը: Նաև հետաքրքրական է նշել թէ ասիկա տեղի ունեցաւ Գրիգորի ձեռնադրութենէն առաջ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ նկարագիրը կը բացատրուի անով որ քրիստոնէական շարժման սկզբնաւորութիւնը կատարուած է աշխարհասկաններու միջոցաւ, որոնք միշտ կարեւոր դեր մը ունեցած են անոր մէջ: Գրիգորի ձեռնադրութիւնը տեղի ունեցաւ Կեսարիա, եւ այս պարագան բնական է որ ցոյց կուտայ անոր յունական եկեղեցւոյ հետ ունեցած սերտ յարաբերութիւնը: Եւ, սակայն, մինչ եկեղեցին իր ազդեցութիւնը ունեցաւ դաւանանքի, կղերականութեան եւ արարողութեան վերջայ, Գրիգորի եկեղեցին պահպանեց իր ինքնութիւնը, եւ իբրև այլ մեծ ազդեցութիւն ունեցաւ ցեղային բնազդներն ու ազգային սովորութիւնները պահպանելու գործին մէջ:

Երբ կը կարգաք հայոց պատմութիւնը, բացայայտօրէն կը տեսնէք որ Եկեղեցին շատ բան կորսնցուցած է իր պարզութենէն եւ աւետարանչական ոգիէն, որոնք այնքան յատկանշական պատկերներն էին անոր հիմնադիրին եւ աթոռակրիցներու ուսուցման, եւ թէ դերակայ դարձած էր եկեղեցւոյ պաշտօնութիւնը:

Ժամանակի ընթացքին աշխարհակալութիւնը ստուերածած է հողեկանը և սուրբերու մատուցներու եւ պատկերներու հանդէպ ցոյց տրուած մեծարանքէն զատ զարգացած է նաև ձեռնական ծիսակատարութիւն մը: Հետեւաբար, եկեղեցին քիչ կամ բնաւ չստաւորեց իր ոչ-քրիստոնէայ դրացիները: Եկեղեցին կը կորսնցնէ հուսկան կենսունակութիւնը եթէ արթուն չըզտուի իր պարտականութեան եւ իրեն վստահուած ճշմարտութիւնը տարածելու առաքելութեան հանդէպ:

Այս պատճառով իրական անկեղծութիւնը որչափ է կը տեսնուի Մովսէս Խորենացիի կողմէ պատմուած հետեւեալ պատահարին մէջ, զոր նշանաւոր յիշած է իր երկրասիրութեան Բ.

հատորի էջ 138ին մէջ: Պարսիկ հրամանատարը եւ Հայաստանի կուսակալը կը փորձեն ստիպել որ հայեր սերանան քրիստոնէութիւնը եւ որդեգրեն զրազաշտականութիւնը: Հայ գեկավարներ կը կանչուին ինչպէս երբեք եւ կամ յայտնելու թէ ինչո՞ւ չէին որդեր աջակցէն ընել:

- Ասոր վրայ՝ հայ եպիսկոպոսներ, քահանաներ եւ ազնւականներ ժողով մը զումարեցին յամի Տեառն 450ին՝ գլխաւոր քաղաք Արտաշատի մէջ՝ Յովսէփ Պատրիարքի նախագահութեանը տակ, եւ 18 եպիսկոպոսներ ստորագրեցին նամակ մը, որ բարբառնալից կը կոչուէր պարսիկ կուսակալին, եւ որուն մէջ պատասխանեցին քրիստոնէութեան ղեկ կըստ առարկութեանց, տեղեկութիւն տուին իրենց հարստքին մասին եւ եղբակացուցին հետեւեալ յայտարարութեամբ.

- Այս հաւատքէն ոչ մէկը կրնայ մեղ շարժել. ոչ հրեշտակ եւ ոչ մարդ, ոչ հուր եւ ոչ սուր, ոչ մահ ծովու մէջ, ոչ Կոթիկ շարժարանքի ստուերութիւն: Մեր բոլոր ինչքը քու ձեռքդ է: Որով չէ ըստ կամ անոնց մասին, եւ եթէ արատեստ որ մնանք մեր հաւատքին մէջ, քեզմէ զատ ո՞չ մէկ ուրիշ տէր պիտի փետուէք, ինչպէս որ ալ երկինքի մէջ Յիսուս Քրիստոսէ զատ ուրիշ Աստուած պիտի չունենանք, որովհետեւ ուրիշ Աստուած չկայ անոր կողքին: Բայց եթէ ուզես մեր այս մեծ վկայութիւնէն տարբեր բան լսել, այն ստան լսէ՛ մեր վճռականութիւնը: Մեր մարմինները քու իշխանութեանդ տակ են, ըրէ անոնց ինչ որ կը ցանկաս: Մեր պարանոցը քու իշխանութեանդ տակ է, համբերութիւնը մերն է: Դուք ունիս սուրբ, մենք ունինք պարանոցը անոր մատուցանելիք: Աւելի բաւ չենք մեր հայրերէն, որոնք իրենց հաւատքին համար զոհեցին իրենց ինչքն ու կեանքը: Որով, ուրիշ հարցումներ մի՛ ուղղեր մեզի այս հարցերուն շուրջ, որովհետեւ մարդոցմէ չէ մեր հաւատքը: Պէտք չէ որ մանուկներու պէս ուսուցանէք մեզ: Անբաժանելիօրէն: միացած ենք Աստուծոյ, եւ ոչ ինչ, ներկայիս կամ ապագայի: եւ կամ ամբողջ յաւիտենականութեան մէջ պիտի կարենայ հետացնել մեզ Անկէ:

1400 տարուան հնութիւն ունեցող հալածանքի այս սպառնալիքը յաճախ իրականութիւն կըստ է ցեղէն պատմութեան մէջ: Թուրքիա այրած կեանքիս տեսողութեան երեք անգամ ա-

կանոստես եղած եմ հարածանքի աստիճանակամ. պատկերա՛վե-
րու : 1895ին էրզրումի չարդին, 1909ին Աստանայի չարդերուն եւ
1915ի, հայերու տեղահանութեան եւ աքսորին :

1895ի աշնան էր որ Այաշիերաի շրջանը կատարած մէկ
համագորգութեան փերայարձայ էրզրում, ուր տեսայ թէ ինչ-
պէս ամբողջ շրջակայքը կը դոպար ձգտեալ էրկիւղով մը : Բայց
վտանահարցին մեկ թէ էւրոպական Համաձայնութիւնը անի-
պած էր սուլթանը որ ստորագրէր բարենորոգումներու հրամա-
նագիրը : Որով, հակառակ Տրայպիդոնի «անսխորթութեամբ»,
անկատարած էւրոպա միջոցներ ձեռք պիտի առնէր հանդարտու-
թիւնը ազատելու նպատակով : Առաւել, էրզրումի կառավար-
ութիւնը իրեն նախադուշութիւն, հակոցութիւն կը կատարէր
քաղաքին մէջ : Իւրաքանչիւրը քսան հոգիէ բողոքացած զմտու-
րական 80 պահակախումբեր իրարու շատ մօտ շրջաններու մէջ
տեսականորէն հակոցութիւն կը կատարէին : Ենթադրարար ստի-
կա կը կատարուէր որ պահպանուէր հանդարտութիւնը այն պա-
րագային երբ չլազրդիւ մահմետական բնակչութիւնը չորձը
բան մը լնէլ : Կուտակալը լաւ տրամադրուած էր հայերու հան-
դէպ : Մէկ ճոկատ բուական պիտի չլլար զսպելու ս'րեւէ հայ-
կական շարժում եթէ նման բան մը փորձուէր : Որքա՛ն կը
կոտորայ մարդուս սիրտը երբ կը զիտակցի սպառնացող փոխու-
րելի որ կրնայ իրստ կործանարար ըլլալ :

Տարածանում էր թէ Խարբերդ վնասուած էր : Խնդրե-
ցի բրիտանացի հիւպատոս, Պր. Բամպլըրպէնն որ հարցաքննու-
թիւն մը կատարէր : Իր ստացած պատասխանին մէջ ըսուած էր
՛՛՛՛՛ թէ Խարբերդ խառնութիւններ փորձուած էին, բայց շնորհիւ կայ-
սերական զինուորներու արագ միջոցառումներուն անոնք անմի-
ջապէս զսպուած էին : Միտինորները ազատով էին եւ լաւ :
Թրքական տեսանկիւնէն զիտելով կ'արժէր այսպիսի պոչուար
սուտ մը զլտորել : Քաջակերական էր ամէն անոնց համար որոնք
անտեղեակ էին իրական կացութեանն : Մինչեւ ճշտուած ժա-
մանակը միտը յարարերարար հանդարտ պահեց ասիկա :

Հոկտեմբեր 25ի առաւօտեան լսեցինք տարածանութիւն
մը, ըստ որուն Պիթլիս հարուածուած իսկ ամերիկացի միտիո-
նար Պր. Նէլի սպաննուած էր : Խորհրդակցութեան համար բրի-

տանացի հիւպատոսին դացի : Բիչ առաջ դիւշացի հայ քահանայ
մը հեռացուցած էր, որուն հանդէպ թուրքեր շատ դէժ վերաբե-
րուած ցոյց տուած եւ ստիպած էին որ դրաւոր խոստանար յա-
ջորդ առաւօտ 300 թրքական ոսկի (1300 տոլար) վճարել իրենց :
Խորհուրդ տուած էր իրեն որ անմիջապէս վառավարութիւնը
տեղեակ պահէր եւ ան, իրեն եղած յանձնարարութիւնը կատա-
րելու համար յօր մեկնած էր :

Պր. Բամպլըրպէնի հետ խորհրդակցելէ ետք որոշեցի տե-
ղեկութիւն ստանալու համար Պիթլիս հեռադրել : Հեռադրատուն
դացած ատենս շուկային մէջէն անցայ եւ շատ դրուութիւն դը-
տայ : Ոստիկան մը դաշոյն մը առած էր երկտասարդ թուրքէ մը
զոր օղին մէջ կը ճօճէր եւ սպառնալից խօսքեր կ'ընէր : Մանօթ
հայ մը տեսայ որ կը դոցէր խանութիւն : Թեւադրեցի իրեն որ
այդպէս չ'ընէ, որովհետեւ, ըսի, եթէ շատեր դոցեն իրենց խա-
նութեանը, խռովութիւնները պիտի վուրթացնեն եւ առիթ պիտի
տան թուրքերուն ըսելու որ հայեր կը դաւադրէին : Ըսաւ թէ
ճիշդ այդ պահուն յանձնարարուած էր իրեն որ խանութը դոցէ
եւ թէ թուրքեր կը հաւաքուէին թրքական թաղամասը՝ միտիո-
նարներու տան վերեւը :

Ճամբաս շարունակելով դացի հեռադրատուն եւ ստիպո-
ղական հեռադիր մը յանձնեցի : Յոյն պաշտօնեան թեւադրեց որ
չլրկեմ այդ հեռադիրը, որովհետեւ հաւանական է որ դրամս
յուժարտս դորձածած լլլայի : Պիտեցի : Պատի ժամացոյցին նա-
յեցայ ժամը արձանադրելու, եւ տեսայ որ կէսօր էր, մահմե-
տական աղօթքի ժամը :

Փողոց դարձիս տեսայ որ միտիոնարը փոխուած էր, այդ
քանի մը վայրկեաններուն եւ ելեկտրականացած՝ շարաշուք
կարելիութիւններով : Ետ՝ շուկային մէջէն քալած ատենս, ամէն
բան շատ սպառնական կ'երեւէր, թէ եւ զինուորական խումբեր
կը շրջադայէին փողոցները : Ժողովուրդը մղկիթէն դուրս կ'եր-
լնէր, ուր սովորականէն աւելի երկար մնացած էին այդ օրը : Նեղ
շուկայէն անցայ եւ բաց տեղ մը մէկ կողմէն միւսը անցած պա-
հուս յանկարծ սկսաւ հրացանաձգութիւն եւ ճիչեր լսեցի ետե-
ւէս :

Հասայ մեր փողոցին անկիւնը եւ յիշելով որ ամբողջ մը

կը հաւաքուէր միտինարներու տան վերեւը եւ վախնալով որ կրնամ ճամբաս դոցուելով անկարող ըլլալ հասնիլ այն տունը ուր կը գտնուէր իմ ընտանիքս, աճապարեցի քալել փողոցն ի վեր: Կէս ճամբան ոստիկանական քսան հոգինոց խումբէ մը հանդիպեցայ որ տակաւին հրամանի տակ էր, բայց անցած պահուսակ ամէն ուղղութեամբ կրակել: Աւելի վերջ հայ դրացիներէ տեղեկացայ որ հսկիչ ոստիկանական խումբեր դիտումնաւոր կերպով կրակած էին իմ վրաս, յետոյ ցրուած էին ջարդելու եւ թաղանելու, ինչպէս որ ըրած էին մնացեալ ութսուն պահակ զինուորները:

Մահմետականները գրգռելու նպատակով կառավարութիւնը լուր տարածանք թէ հայերը յարձակած էին կառավարութեան վրայ: Իրողութիւնը այն էր թէ վերը յիշուած հայ քահանան, որ դացած էր շղերսապի մը ներկայացնելու, առաջինը եղաւ սպաննուողներուն եւ սպաննուած էր կառավարչատան սանդուխներուն վրայ իրեն եղած յանձնառութիւնը կատարելու դացած ատեն: Միակ հայն էր այդ առաւօտ որ «յարձակած էր» կառավարութեան վրայ: Զարդը սկսաւ շեփորի կանչով կէսօրուան աղօթքի աւարտին եւ վերջացաւ մայրամուտին՝ շեփորի հնչումով:

Զարդերու երկրորդ օրը, ընկերակցութեամբ բրիտանացի եւ իտալացի հիւպատոսներու, եւ Եաքիր փաշայի թիկնապահը եղող երիտասարդ թուրք սպայի մը, անցայ քաղաքին թաղանուած մէկ մասէն: Մէկ տեսարան բաւական է ցոյց տալու սմալթեան աստիճանը: Տուն մտանք նեղ եւ աղօտ լոյսատրուած անցքէ մը: Տան ներքնամասը քանդուած դատնք: Պատուահանները ջախջախուած էին, կարասիները կտոր կտոր եղած, անկողիներ կազմածները, հագուստներն ու այլ արժէքատու արարկաները թաղանուած էին: Սենեակին պատերը փամփուշտներով ծակծկուած էին, եւ տախտակաման ու պատերը՝ բուրբըն ալ արեան բիծերով արատուորուած էին: Բայց սրտառուչ մասը կը գտնուէր իբրեւ խոհանոց դորձածուած տեղը: Տարեց կին մը նստած կը մեծէր, կարծես ցաւէ կը տառապէր, ցած, կախարդական, կարեկից եղանակով մը քայլ պահելով ճօճուող մարմնին հետ: Փախաթներու վրայ պառկած եւ փախաթներով

ծածկուած էին մայրութեան ճամբուն վրայ գտնուող իր երկու հարեւրուն մարմինները, որոնք զոհած էին իրենց կեանքը պաշտպանելու համար իրենց պատիւը - արիւնլուայ, անկենդան իրեր՝ համաձայն քանդուած տան՝ որուն ուրախութիւնն էին հազիւ քանի մը օր առաջ: Արդար է որ ըստի թէ ահարկու այս տեսարանին առջեւ երես. թուրք սպան մէկ կողմ դարձաւ զոպելու համար յուզումը եւ քողարկելու՝ արտասուքը: Նայն սպան մեծապէս վտանդելով կեանքը, կրցաւ արդիւնէլ շարժ մը վերջ տեղի ունենալիք ուրիշ պոթիկամ մը:

Կարծէք դատապարտելու նպատակով ջարդը, կառավարութիւնը սկսաւ անմիջապէս ուսուլիք բաժնել էրզրում քաղաքի հինգ հազար կարօտեալ հայերու:

Տանչորս տարի անցաւ եւ ես ինքզինքս դարձեալ գտայ ձգտուլ վիճակի մը հետեւանքով գրգռուած քաղաքի մը մէջ: Ուսմտաբար քրիստոնեաներ մեզի կուգային քաջալերուելու համար: Այս անգամուն միակ միտինարը չէի, քանի որ մեր առաքելութեան տարեկան ժողովը նիստի մէջ էր եւ մեր օրակարգի առաւօտեան մէկ պաղարին խոհմտութիւնն համարեցի կը նոջա եւ աղջկանս հետ մեր բնակարանը երթալ, որ մեր ժողով դամբարան մը ձեռքով վարձարանէն հինգ վայրկեան հեռու էր: Հազիւ թէ հասած էի մեր դուռը, երբ հրացանաձուլութիւնը լուկրաւ եւ սպիտակ փաթթոցատու թուրքեր սկսան ամբողջ քաղաքին մէջ մեղցնել, սուրել եւ թաղել: Եսս չանցած մեր բրնակարանը լեցուեցաւ դաղթականներով եւ ժողովայն զոպրոցին յարակից շէքերու հրդեհները կը սպանանային մարդկային կեանքի եւ ամերիկեան կարուածի:

Նման հրդեհ մը մարելու փորձ ըրած ատեն էր որ ամերիկացի մեր միտինարներէն երկուքին վրայ կանխամտածուած ծրագրով մը կրակեցին եւ սպաննեցին: Պր. Մայնըր Ռոնըրդն ու Փր. Մորըրն էին անոնք: Երբորդ մը Պր. Թրոպրիճ հրաշքով փրկուեցաւ: Զարդը շեղմացաւ ամբողջ օրը, զիշերը եւ յաջորդ օրը: Անդլիացի հիւպատոս, հազարապետ Տոսթի-Ուայլի, յաջողած էր խումբ մը գնուար սպահաւիլ եւ անոնց ղեւիլը անցած քաղաքը կը շրջէր օգնութիւն հասցնելու համար իրենց տան մէջ արդէլափակուածներուն եւ զօպելու խառնա-

կուսիներն ընդհանուր հոն ուր հեղինակութիւն կ'ընդունուէր: Եւ մղեց պաշարպագուէ (անկանոն) զինուորներու վճարակ մը եւ արգելեց որ կամուրջէն քաղաքին վրայ խուժեն, ինք ալ պատահաբար պաշարուած տուններուն մէկէն վիրաւորուեցաւ:

Տեսնելով որ օրը գիշեր ըլլալով հանդերձ որեւէ բարեփոխութիւն չէր կատարուած կացութեան մէջ, նամակ մը կամ բարեկարգուեցաւ եւ ստորագրուեցաւ երեւելի հայու մը, Քրաննացի յիսուսեան քահանայի մը, աղբիւցիկ մահմետականի մը եւ իմ կողմէս, աղբիւցիկ կուսակալին որ վերջ դուրսէր խուսիլեան: Բայց՝ երկրորդ առաւօտեան, մեր երկու շէնքերը եւ յիսուսեան զպրօցները ամայացած շրջանի մը միակ ապահովութեան կողմնէն էին: Նոյնիսկ անոնց ապահովութիւնը վրաստահ չէր: Լուր առնուեցաւ որ ամերիկեան զպրօցին ետեւը կ'ստնուող բաց տեղ մը հաւաքուած սմբոխ մը կը սպառնար յարձակիլ զպրօցին վրայ:

Յաւակնութիւնը չունիմ ըսելու թէ իմաստութեան, յոխորտանքի՞ թէ յուսահատութեան ողիով էր որ զայցի այդ ամբոխին մէջ եւ յանձն առի յանդիմանել զայն: Իրենցմէ մէկը սպաննուած էր անկէ առաջ՝ այդ առաւօտ եւ անոր մարմինը կը գտնուէր զպրօցին զիմացը գտնուող փողոցին մէջ: Այլ մարմինին քովը կեցած հանդարտութիւն թելադրեցի:

- Ինչո՞ւ աւելի արիւնահեղութիւն:

- Արիւնի դէմ արիւն հոսեցաւ այս առաւօտ եւ կանդակիտի չառնենք մինչեւ որ անոր վրէժը լուծենք, պոռացին մատնանշելով մարմինը:

Անոնցմէ մէկը մեր դռնուած տեղին քով գտնուող հայու մը տան պատահանէն ներս սկսաւ մտնել: Բռնեցի կացինը եւ յանդիմանեցի զայն: Չպաւ ինձի, սղղեցաւ անկիւնէն եւ ըսկըսաւ իր քանդուած դործը ուրիշ տունի մը վրայ:

Հետաքրքրական փորձառութիւն մըն էր վիճարանիլ ամբոխի մը հետ սրուն նպատակն էր արիւն եւ աւար, որ աչքին մէջ ունէր արեան ցանկութիւն եւ վիճարանութիւն՝ լեզուին վրայ: Կարեւորութեամբ շեշտեցի անոնց թէ կոչ եղած էր կուսակալին որ զարդէր նախճիրը: Պաղատեցայ իրենց որ չըսնան Ամերիկեան վարժարանին: Չկրցայ հաւատարիք ստանալ եւ որով

սկսայ դանդաղօրէն յառաջանալ փողոցն ի վար, շարունակելով գտնուել անոնց դիմաց, յուսալով որ պիտի կարենայի առանձին վերադառնալ տուն: Մեծապէս վրդովուեցայ երբ տեսայ որ ինձի կը հետեւէր այս ամբոխը: Կը սուկայի մտածելով որ անոնք պիտի հասնէին անկիւնը եւ պիտի յարձակէին զպրօցին վրայ: Հրաժարեցայ դանձր կեցնելու մտածումէն որ սրտաբանութեան աւելի մղում մըն էր, որովհետեւ զգացի որ անոյս բան էր արգելք ըլլալ ամբոխի մը որ արիւնի ծարաւ էր: Բայց ճէրբօղնեց եւ քիչ մը աւելի վիճարանութեան եւ վարժարանին ու անոր բնակիչներուն մասին ինքրեւէ ետք ճերմակ մօրուսուոր դրացի թուրք մը զբացուեցաւ: Շէնքին պատը պաշտպանելով ըսաւ.

- Կեանքս այս զպրօցին համար, բայց պատասխանատու պիտի չըլլամ շրջակայքի ուրիշ որեւէ զպրօցի համար:

Բաջալերուած՝ ըսի թէ մեր ժողովուրդէն ոմանք զպրօցին մուտքի փողոցին միւս կողմը գտնուող տունն էին:

- Թող չէնք մտնեն, ըսին:

Չորս հոգի կար, երկու օտարական տիկիներ եւ երկու հայ պատուելիներ: Փողոցն անցնելով ուղղուեցան դէպի դարձրօցին դուռը: Ամբոխը զիտեց ուշադրութեամբ եւ լուսութեամբ: Անոնց միջեւ կեցած ատենս զգացի որ սրահը շատ լուրջ էր, թէ եւ իրենց լուսելներ վտահուցութիւն ներշնչեց ինձի: Բայց երբ Պատուելի Յովակիմ երեւցաւ, յանկարծ «հայ մը» ըսելով ազագակ բարձրացաւ: Ամբոխը առաջ խուժեց, եւ ալ անոնց հետ: Բռնեցին քարոզիչը եւ եւ ալ սրտքարեցայ ազատելու զայն անոնց ձեռքէն: Նպատակս զինք զպրօցին դուռէն ներս հրել էր: Կատարել մաքարումին մէջ թեւերս անոր շուրջ դրի, մինչ կը ծեծէին եւ կը ջանային զինք իսկ ձեռքէս: Ի վերջոյ փամփուշտ մը կրակեցին անոր կրակիւն եւ դաշոյն մը մխրճեցին կողին, որով ետք անկեան թողոսկներէս վար ինկաւ:

Շատ դայրացած՝ դարձայ ամբոխին եւ ըսի.

- Բիւր առաջ «արիւնի փոխարէն արիւն» ըսիք, ալ կանդակէք: Նման բան մը տեղի չունենայ:

Դարձեալ հոն կեցած վիճարանեցանք եւ վերջապէս հաւանեցան ժամ մը սպասել: Եթէ այդ պահուն կառավարութիւնը

հրամայէր, անոնք վանդ պիտի առնէին: Վերադարձայ մեր առաքելութեան տունը: Դրան առջեւը կեցայ եւ ամբսխէն մէկը ժամանակ առ ժամանակ եկաւ յիշեցնելու ինծի որ ժամանակը կ'անցնէր: Բայց այդ ժամուն չէնքին մէջինները փրկուեցան, որովհետեւ 15 հոգինոց զինուորական ջոկատ մը երեւցաւ եւ ըստան արտօնեց որ «կրակը դադրեցուի» ի փողի կրօնը հնչեցուի մեր տանիքէն: Այդ ջոկատին հարիւրապետը խնդրեց թուրք մտլայէ մը եւ հայ քահանայէ մը եւ ինձմէ որ քաղաքին շուրջ իրեն ընկերանանք, եւ տունայտանքի դադրեցումը ապահովելու նպատակով կարեւոր կէտերու վրայ պահակներ տեղադրենք: Երկու տեղեր անհրաժեշտ եղաւ որ պահակը ժողովուրդին գլխուն վրայէն կրակէր հնազանդութիւն պարտադրելու համար:

Մեր վստահուած գործը վերջացաւ կառավարչատան մէջ ուր տեղի ունեցաւ բոլոր համայնքներու ներկայացուցիչներէ բաղկացած ժողով մը, որուն աւարտից վալին ապահովցուց որ խաղաղութիւնն ու անդորրութիւնը պիտի պահպանուէին:

Ասիկա, սակայն, պարզ դադար մըն էր: Տասը օր ետք, երբ դադարեցանք քաղաքը լեցուցած էին, երկրորդ ջարդ մը սկսաւ: Այս անգամ հրդեհ գործածուեցաւ, եւ քաղաքին կեդրոնը դարձաւ մխացող աւերակոյտերու զանգուած մը: Ետտեղ մահացան բոցերու մէջ:

Մեր ստացած թերթերէն դատելով կը տեսնէինք որ կային զանազան տեղեկութիւններ եւ դատաւարներ այն ջարդերու մասին որոնք աւերած էին քաղաքն ու Ատանայի նահանգը եւ հայ դաշուցի նախկին վիճակը վերածած էին թշուառ քեղերներու: Մահմետական սնդուամը այն էր թէ հայեր կ'օգտուէին սահմանադրութեամբ իրենց տրուած առաւելութիւններէն եւ գործօն փրօփարկանս կը մղէին հայկական ինքնավարութեան ի նպաստ եւ նոյնիսկ կ'երազէին վերահաստատել կիլիկիոյ հայկական թագաւորութիւնը: Եւ ի մտի ունենալով այս պարզուն սկսան խռովութեանց, որոնք առաջնորդեցին 1909 Ապրիլ 14-16 եւ 25-27 ջարդերուն:

Հայերը կ'ուրանային ասիկա եւ կը սնդէին թէ սահմանադրութիւնը փոխուած սահմանադրութեամբ իրենց տրուած առա-

ւելութեանց, եւ թէ վառավարութեանց եւ «Միութիւն եւ Յաւանք» կոմիտէին ծանօթ էր Հնչակ եւ Դաշնակ կազմակերպութեանց ուղղութիւնը: Թէեւ կրնայ ըլլալ որ քանի մը տարբեր գիտնէր ծայրայեղ արտայայտութիւններ ունեցան, բայց անոնք չեն ներկայացներ ժողովուրդը:

Կառավարութեան իրաւասութիւնն էր այս մարդիկը որպէս անհատներ եւ ոչ թէ պատասխանատու նկատել համայնքը՝ առանց արտայայտութեանց եւ արարքներուն համար: Հին իրաւակարգին տակ ասիկա հնարաւոր էր, բայց տրամադծօրէն հակառակ էր նոր ռեժիմի սկզբունքներուն:

Կան քանի մը իրողութիւններ որոնք կը յիշուին որպէս փաստ հայերու պատասխանատուութեան: Քաղաքական ահուժքներ հիմնեցին եւ գործածեցին զանոնք որպէս գրգռութիւն տարածելու միջոց: Ատանայի մէջ կային քաղաքական բնոյթ ունեցող ահուժքներ: Անոնց մուտքը ազատ էր թէ՛ մահմետականներու եւ թէ՛ քրիստոնեաներու համար: Չեմ կարծեր որ հաւասարապէս բոլոր մահմետական եւ քրիստոնեայ թերթերու մէջ եղածն աւելի մեծ խօսքի ազատութիւն կար ճառերուն եւ վիճարանութեանց մէջ: Այս մարդին մէջ անոնք չէին մեղանշեր սահմանադրութեամբ ճշտուած օրէնքներէն որեւէ մէկուն դէմ, բայց անոնք ըրջօրէն կը մեղանշէին հին իրաւակարգին շատ փայտայած մէկ օրէնքին դէմ եւ կը բռնարարէին բոլոր մահմետականներու դիւրապարտութիւնները:

Կեանքներու եւ մահմետականներու միջեւ հաւասարութիւնը, որ իրաւունք կուտար քրիստոնեային քննադատելու թրքական վարչութիւնը ինչպէս նաեւ մահմետականներու հետ հաւասարութիւն պահանջելը զլուէյի էր մահմետական մտայնութեան համար, այսուհանդերձ քրիստոսարք թուրքերը կ'ընդդիմանային ասոր: Հայերը պէտք էին շատ ուշադրութեամբ նըկատի առած ըլլալ ասիկա: Ետտ անխոհեմ զանուեցան, բայց չմեղանշեցին ո՛չ մէկ քաղաքական օրէնքի դէմ: Հազար անգամ նախընտրելի պիտի ըլլար իրենց համար երբ զսահմանային սահմանադրութեամբ իրենց շնորհուած իրաւունքներով, լրտեսութենէ ազատ ըլլալ, համարողութեան ազատութիւն, մամուլ ա-

դատութիւն, քոսէարկելու իրաւունք եւ երկրին կառավարութեան մասնակցելու իրաւունք եւ կարգ մը ուրիշ բաներ, առանց որեւէ ձեւով զրոգանալ խորհրդարանի կողմէ քննուող հարցերը — զոր օրինակ սպակեղբոնացում, զինուորական ծառայութիւն, եւ այլն:

Հայերու մտադրութեան մէկ ուրիշ ազդեցություն ալ զէնքի պնդումն էր: Պատրաստ չեմ ըսելու որ անոնք իմաստուն թէ անխոհեմ եղան այս հարցին մէջ: Լաւաղոյն դասակարգը ցաւեցաւ որ զէնքի առեւծալը ազատ ձգուած էր երկրին մէջ: Այսուհանդերձ կառավարական հարց մըն էր այս մէկը: Սահմանադրական երկիր մը արտօնելու չէ որ իր ժողովուրդը զինուէր: Թրքական կառավարութիւնը ազատ թողուց զէնքի եւ ռազմամթերքի պնդումը, եւ զէնք պնելու խեղադար խոհապ մը կար մահմետականներու եւ քրիստոնեաներու կողմէ հաւասարակէս:

Կոռակալին տուած ալցելութեանս համարձակեցայ յայտնելու այն միտքը թէ այդ ժամանակ ամբողջ երկրին ծանրաշուք ձգտեալ վիճակին համար լուրջ ապր մըն էր զէնքի այս ազատ պնդումը, եւ եթէ հնարաւոր էր պէտք էր որ դադարեցուէր: Պատասխանեց թէ ոչինչ կրնար ընել այդ մասին: Ժողովուրդը մահմետական եւ քրիստոնեայ հաւասարակէս ազատ էին զէնք պնելու եւ թէ կարելի էր արգելել: Քրիստոնեաներուն զէնք պնելը զբուսնէր կը պատճառէր մահմետականներու ն: Բայց հոն ուր հայեր քիչ մը առիթը ունէին իրենք զիրենք պաշտպանելու, յաջողութեամբ սրբակուեցաւ իրենց ճիւղը: Ինծի ծանօթ չէ իրենց կռիւմէ կատարուած որեւէ սկզբնական նախադրեալով: Խեղահոգութիւն յուսացին որ ասոր նման խռովութիւն մը պիտի ըլլար չին իրաւակարգին եւ նոր իրաւակարգին միջեւ, որուն մաս պիտի կազմէին թէ՛ մահմետականները եւ թէ՛ քրիստոնեաները:

Կ'ըստի թէ ջարդի անմիջական պատճառը եղած է հայու մը կողմէ երեք խուրքերու վրայ բացուած կրակը, որոնցմէ մէկը վերջը մեռած է: Ջարդերէն երկու օր առաջ կուտակալը ինծի ըսաւ թէ այս միջնակցը հայուն եւ թուրքերուն միջեւ կնոջ մը համար եղած էր եւ թէ քաղաքական ո՛չ մէկ դունաւորում ունէր: Իրականութիւն է որ շատ ցաւալի միջնակց մըն

էր որ զբողոսող մահմետականներուն հայթայթեց ճիշդ ժամանակին ստանալու իրենց ուզած դրամագրուելը՝ բոլոր քրիստոնեաներու մէջ գեղեցիկաբար համար մահմետականներուն մոլեռանդ առեւտրութիւնը:

Ասիական մասնակի գիտութիւնն մըն էր եւ որեւէ կոպ շունկը ջարդերու հետ, բացի մահմետականներուն զրգուութեան համար զայն շահագործելէ:

Ոստիկանութիւնը կը պնդէր թէ դատած վեր ծաւալուն դաւադրութիւն ցոյց տուող փաստաթուղթեր եւ հայկական ինքնավարութեան առաջնորդող վատարեալ ծրագիրներ: Ձեմ գիտեր թէ ի՞նչ կրնային ըլլալ այս փաստաթուղթերը: Ոչինչ տեսած եմ բացի կազմակերպութեանց հրատարակած «ծրագիրներէն» որոնք հրատարակուած էին կառավարութեան զիտակցութեամբ: Գիշ մը խեղաթիւրելով եւ երեւակայութիւն դործածելով կարելի էր որպէս զրգուութիւն մեկնաբանել զանոնք: Չոր օրինակ, ապակեղբոնացումի հարցը (աւելի լայն նահանգային ինքնավարութիւն), որով իրաւունք կը տրուէր նահանգին որ կառավարէր սեղանիս ընդթ ունեցող հարցերը: Լաւ սկզբունք մը, բայց կարող էր ենթարկուիլ շարաշուք մեկնաբանութեան: Այս բոլորին մէջ մեծ ազդեցութիւն ունէին կրօնական եւ ցեղային առեւտրութիւնները, որ անխուսափելիորէն գոյութիւն ունէին եւ մեծ չափով վը սոյնմանաւորէին երկու համայնքներու միջարարութիւնները:

Հայերը մերժեցին յանցապարտութեան այս վերադրումները եւ զոհացան ըսելով որ կը դործէին ճիշդ Սահմանադրութեամբ նախատեսուած առաւելութիւններով եւ թէ հաւատարիմ էին անոր:

Այս թէ՛ղը պաշտպանելու համար կ'ըսէին թէ չունէին որեւէ պատրաստութիւն: Ծառեր զնամ էին վեցարուածեաններ, սրտի հրացաններ եւ հրազեններ: Կառավարութիւնը կ'արտօնէր սոսկիւ եւ նոյնիսկ վը քաջարէր՝ արտօնելով զէնքերու անարգել ներածումը եւ վաճառումը: Ասիկ զատ, քրիստոնեաներու ձեռքը դառնուող ռազմամթերքի քանակը բացարձակապէս անգոհացուցիչ էր հաւաքական գործողութեան մը պարագային:

Վեց տարի անցաւ եւ համաշխարհային պատերազմով ա-

զատ ձգուած ինթուրիլը անցաւ այս երկիրին, վրայէն: Անոր պատճառաւ կործանումին հետ բազդատուութեան դրուելու սրբազային նախորդ սղբերգութիւնները մ'ըլլային չնչին պատահարներ:

Մեծ պատերազմի ընթացքին Թուրքիոյ հայ բնակչութեան մեծ մասին աքսորը անպուժ ծրարիւր մըն էր, որ մ'երևի թէ յղացուած էր սերմանական ուղեւորներու մէջ և գործադրութեան սրուած թուրքերու կողմէ: Տարուսեան լեռներուն վրայ, Կիլիկիան դաշտագետնին և Տէր-գորեան անտառաները եկան այրեր, կրկներ և մանուկներ: Կարեքի էր հանդիպել փոշոտ ճամբէն քարոյ 15 կամ 20 սլուզացի հայերէ՛ գաղղացած խումբով մը, զինեալ պահակ մը վթափորին առջեւը և ետեւը, աւանակի մը վրայ հեծած և գիւրկը մանուկ մը ունեցած կին մը, հետիտըն քաղաղ յունարեկ ծերունի մը՝ իր բախտին համակերպողի մը արտայայտութեամբ, յամառ նայուածքով աւելի երխտասարդ մարդ մը - չէին: Գիտեր թէ ո՛ւր և ինչո՛ւ կ'երթային, բացի այ՛ն իրողութենէն թէ հայ էին: Եւ կամ քաղաքի մը բնակչութեան մեծ մասին մը հրամայուէր աքսորուել:

1915 Սեպտեմբերին տեսայ այն քսան հազար ժողովուրդին մեծ մասը, որոնք 1909ի Ատանայի ջարդերէն ետք ամէն ջանք թափած էին որ կարենան իրենք իրենց համար արաճովիկ հանդիստ կեանք և գրազում, և որոնք, սակայն, անգութօրէն աքսորուած էին, մէկ հարուածով դառնալով իրաւագրիւած և թշուառ համայնք մը: Այս ընթացքով անկարագրելի տառապանքի ենթարկուած և ամէն դասակարգի, տարիքի և սեռի պատկանող տանեակ հազարաւոր մարդիկ կամ ջարդուեցան և կամ խճճալի վիճակի մէջ ճամբան վիճացան: Վերապրողներ, վիրաւոր սաքերով, յոգնարեկ և սրտարեկ, կը սրաքարէին վրենց հարստահարիչներուն անխիղճ խարազանի հարուածներուն տակ, վեճեւացած անմիտիթար յոյսով մը, որ օգնութիւն պիտի հասնէր իրենց և պիտի վերկուէին:

Այդ ջրճանին, Թուրքիայէն մեր մեկնումէն ետք, հետեւեալը գրեցի նախագահ Ուլիսընին.

Մեկերկայի Միացեալ Նահանգներու նախագահին,
Ուաշինգթըն, Տի. Սի.

Յարգելի Պր. նախագահ,

Թերեւս կը յիշէք կամ ոչ, որ ես մէկ անգամն էի Փրինսթըն համալսարանի 1876 տարուան շրջանաւարտ դասարանին: Յետագարձ երկար ակնարկ մըն է ասիկա:

Շատեր որ կը ճանչնային ձեզ այն ատեն և անկէ ի վեր հետեւած են ձեր գործին և ընտանեկան փոքր հպարտութիւն չէ որ կը զգան ձեզի հանդէպ, որ սքանչելիօրէն կը զեկալարէք երկիրին հարցերը, ներկայիս՝ երբ կարծէք մարդոց հոգիները իրակով կը փորձուին: Աստուծոյ բարի ձեռքը ձեր վըրայ ըլլայ և անխախտ պահէ ու զօրացնէ ձեր սիրան ու ձեռքերը և շարունակէ իմաստութեան շնորհը ձեր նկատառութեան ենթարկուելիք բոլոր հարցերուն մէջ:

Նոր ժամանեցի Ատանայէն, Թուրքիա: Մեծ և փոքրաթիւ տաններու հողինոց միախոնարներու խումբ մըն էինք: Շնորհի Պորոյ զեպան Մորկընթաուի և Մերսիի հիւպատոս Նեաշընի քաղաքութեան, արտօնութիւն սրուեցաւ մեզի որ ամերիկեան գրահաւար Տէ Մոյնզով Մերսիի նաւամատոցէն երկրէն հեռանաք: Սուրբին կողմէ կը վախաքի՛՛ջ յայտնել մեր երախտագիտութիւնը և մեր դնահատանքը մեզի եղած օգնութեան Տէ Մոյնզի նաւապետ Պլէյչլի և միւս սպաներուն ու զինուորներուն մեզի հանդէպ ցուցարեւած ազնուութեան համար:

Առիթն ունեցայ շոյենալին վրայ կերակորեայ պաշտամունք մը կատարելու - նոր և հիասքանչ բան մը ինծի համար: Կեցած էի մէկ ձեռքս խոշոր թնդանթի մը վրայ, իսկ միւսին մէջ ալ ունէի Աւետարանը - մէկը շինուած մարդոց կործանումին համար, մինչ մեւսը կը յայտնէր անոնց կեանքն ու խաղաղութիւնը: Կրնայի զոհացնել ինքզինքս միայն այն մըտածումով որ աշխարհ պէտք ունէր երկուքին ալ: Զեզ նման անձերու ձեռքին մէջ մին պիտի գործածուէր չարը զսպելու, իսկ միւսը՝ արդարութիւն և բարեկամեցողութիւն զարգացնելու մարդոց մէջ:

Առիկա կ'առաջնորդէ զիս լռելու որ Թուրքիոյ հայերուն վիճակը այնքան սոսկալի է իր աճուելի անդթութեան և այդ ժողովուրդին անողորմ լնաջնջումին մէջ, որ մարդ պիտի փա-

«ԵՈՒՆՈՒԼՈՒՒԹ»

Վարկեր որ Միացեալ Նահանգներու նման պետութիւն մը այն-
քան զօրանար ցամաքի եւ ծովու վրայ որ Թուրքիոյ նման կա-
ռավարութիւն մը երբեք չհամարձակէր այսպիսի քսածնելի ու-
ճիր մը զօրձելու :

Երանի թէ ձեր ազգեցութիւնը կերպով մը զօրձողութեան
զսպելու համար եղծանելը եւ վրկելու մնացորդացը : Գարնան
- եթէ ներկայ կացութիւնք շարունակուի - անոնք պիտի նը-
մանին կոստայայ վերքին ԺՉ. դիտուն 14րդ համարին մէջ նը-
կարագրուած Մովաքի ժողովուրդին - «Եւ մնացորդը խիստ
վտար եւ տկար պիտի ըլլայ» :

Ձերդ՝ շատ անկեղծօրէն
ՈՒՆՑԵՅՄՊՈՐԸ

ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ
Ուսչիւնիթըն

13 Դեկտեմբեր 1915

Սիրելի Պր. Չէյմպըրը,

Ստացայ ձեր Դեկտեմբեր 10 թուակիրը, զոր կարգացի
մեծ հետաքրքրութեամբ : Մտտայինս ուրախ եմ որ սպասով
կերպով Թուրքիայէն զօրս ելած էք եւ անկեղծօրէն շնորհա-
կալ եմ ձեր նախակին անձնական մասին համար :

Հայերուն վիճակը սոսկալէն նուազ բան մը չէ : Կրնար
վստահ ըլլալ որ կը շարունակենք ընել ինչ որ գիւտնազիտօրէն
հնարատր է՝ զազրեցնելու համար անաւոր կացութիւնը :

Աճապարանքով եւ յարգանքով
Ձերդ անկեղծօրէն,

(Ստոր.) ՈՒՈՒՏՐՕ ՈՒԻԼՍԸՆ

Այն ոգին որով անոնցմէ շատեր գիմաւորեցին այս նոր-
բինակ եւ շարունակուող հալածանքը, կտրելի է գտնել հետեւ-
եալ օրինակներուն մէջ : Առանայի Աւետարանական եկեղեց-
ոյ քարոզիչը մանկիկը գիւրկը կնոջը հետ աքսորուելու նա-
խօրեակին զբաժ կը :

- Հիմա կը հասկնանք որ մեծ հրաշք մըն է որ մեր ժո-

ղովուրդը այսքան երկար տարիներ ապրած է այսպիսի ազդի
մը մէջ : Սակէ կը տեսնենք որ Աստուած կրնար գոցեք եւ դո-
ցած է առիւծներուն բերանը շատ տարիներ : Կը վախնամ որ
մեղմէ ոմանք պիտի սպաննուին, ոմանք պիտի դատաւարտը
ւին անդուք անօթութեան, իսկ մնացեալները պիտի քուլին
թափառելու : Շատ քիչ յոյս ունիմ կրկին այս աշխարհին մէջ
ձեզ տեսնելու : Բայց վստահ եղէք որ լաւագոյնս պիտի ընեմ
քաջալերելու որ ուրիշներ առնական մահով մը մեռնին : Ես
նաեւ պիտի սպասեմ Աստուծոյ օգնութեան որ իբրեւ քրիս-
տոնեայ մեռնիմ : Կը մաղթեմ որ այս երկիրը տեսնէ որ եթէ
մենք չենք կրնար վերեւ մարդ սպրիւ հոս, բայց կրնանք իբ-
րեւ մարդ մեռնիլ : Թող Աստուած ներէ այս ազգին անդի-
տակցաբար զօրձած իրենց բոլոր մեղքերը : Հայերը իրենց
մահովը սրտի սորվեցնեն Յիսուսի կեանքը, զոր չկրցան սոր-
վեցնել իրենց կեանքովը, եւ կամ չկրցան արտաբայտել զայն :
Երբ պատերազմէն ետք, աքսորեալներու արտօնուեցաւ
որ վերադառնան, իրենց բնակութիւնը եղաւ կարճատեւ, ու
բովհետեւ «Թուրքիան թուրքերու համար» նշանաբան ունե-
ցող կառավարութեան մը վարժութեանէն ետք՝ սպրդած նման
խոնքեր նախընտրեցին կառավարաբնա աքսորուիլ :
Հայ աքսորեալները տարտղնուած են ամբողջ աշխարհի
վրայ - Սուրիա, Եգիպտոս, Պրանսա, Հիւսիսային եւ Հարա-
ւային Ամերիկաներ : Ամէն տեղ արձատախիլ եղած, երբեմն
կրորդ, չորրորդ, հինգերորդ անգամ ըլլալով, քաջ պայքար
կը մղեն բնակարան մը եւ դբաղում, մը ճարելու իրենց նոր հա-
մայնքին մէջ : Նոյնիսկ դաղթակայանի վրենց քարիւղի թի-
թեղեայ բնակարաններուն մէջ զարմանալիօրէն քարոյական
բարձր ոգի մը կը սպասանուի :

Սակայն եւ այսպէս, երբ կը դիտեմ այս ժողովուրդին
տարտղնուած եւ քայքայուած մնացորդը, որ անցեալին իր
լեռնային ամբուլթեանէն քաջաբար ասպարեզ կը կարգար Ասո-
րիստանին, յայտարարելով Տիմուուած խառնըն եկեղեցոյ
վառքը, եւ ներկայիս սպրելով իրենց յոյսերուն՝ տփուում
աւերակներուն մէջ, կը վերյիշեմ Արարատի ստորտը Պայա-
զիտի մօտ գտնուող Սուրբ Յովհաննէս վանքը : Երբ ըջարա-
կէն ներս մտանք, խորապէս սպաւորուեցայ երբ լքեալ վիճակը
պատկերացուեցաւ մեր առջեւ :

Եկեղեցին գեղեցիկ շէնք մը, որ գոյութիւն ունեցած է քրիստոնեայ Հայաստանի առաջին տարիներէն սկսեալ: Հեթանոս տաճարի մը տեղը հիմը դրուած է այս եկեղեցիին: Արեւելեան պատէն քարընկէց մը հեռուն կայ խոշոր քար մը, որ կ'ըսուի Քէ նախնական տաճարին վերջին հեթանոս քահանային գերեզմանն է: Վանքը կը գտնուի Մուրատ գետին աջ ափին, ուր Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնեայ մկրտած է մեծ թիւով հայեր: Վանքը ինքնին գեղեցիկ, զօրաւոր կառոյց մը, տեսած է ուժի եւ քարդաւանդի, ինչպէս նաեւ տկարութեան եւ հակառակութեան օրեր: Անցած է փառքի եւ խաղաղութեան, ինչպէս նաեւ անկումի, արիւնոտ պատերազմի եւ անդուժ ջարդի մէջէն: Բայց այն ժամանակ որուն մասին կը զըրեմ, ափ մը լքուած, թշուառացած անձեր մնացած էին սրաշտամուռք կատարելու անոր շնորհման եւ սրբազան շրջապատին մէջ: Իր բոլոր որմնակարները ջնջուած, կսկ իր սենեակները քայքայուած վիճակի մէջ էին:

Քիւրտերը խորացուցած էին շատ կալուած եւ դողցած էին վանքապատկան ինչքին մեծ մասը, այնպէս որ երբեմնի հարուստ եկեղեցին, շատ քան չունէր իր բնակիչները կերակրելու համար: Բայց այն ինչ որ տխուր շուք մը կը ձգէր տեսարանին վրայ, այն իրողութիւնն էր Քէ տարիքոտ եպիսկոպոսը, Յովհաննէս, պառկած էր քովնուի պատի մը տակ որ կը թուէր ըլլալ իր մահուան անկողինը: Զօրաւոր կազմուածքով եւ անխախտ սրտով մարդ մը, որ անհաւասար բայց քաջ պայքար մղած էր թալանող քիւրտերու եւ հարստահարիչ թուրքերուն դէմ, կանխահասօրէն ծերացած եւ դառամած էր եւ իր վերջին շունչը կը փչէր երբեմնի այս գեղեցիկ վանքի առանձնութեան մէջ:

Տխրութեան եւ անորոշ երկիւղի զգացումի մը մէջ է որ երախտաբերութեամբ հրաժեշտ առի մեր ազնիւ հիւրընկալներէն, եւ հազիւ թէ լսեցի շիջելու վրայ եղող եպիսկոպոսին օրհնութեան մրմունջը, երբ թուլարար ձեռքս սեղմեց մեկնած պահուած: Արդեօք մարդարէական էր այդ երկիւղը: Այս ժողովուրդը որպէս ազգ իր վերջին շունչն է որ կ'առնէ աքսորի աւերումին եւ ամայութեանը մէջ:

Ը. ԳՂՈՒԿ

ՄԵՂՄԱՅՈՒՑԻՉ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԹՐԲԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԻՄ

Անցեալին թափուած արիւնին համար թուրքը մեղադրած ատեն, արդարութեան սիրոյն մտարեբելու ենք զուգահէտ զէպքեր, զորս ան կրնայ մեր վրայ չպրտել. կարգ մը բաներ կատարուած են սանձարձակ անդթութեամբ, ուրիշներ՝ կրօնական մոլեռանդութեամբ, լինչի ենթարկելով, վհուկներ այրելով, Սուրբ Բարթոլոմէոսի Նախատօնակի ջարդը (կ'ակնարկէ 1572ին Փրանսայի մէջ կատարուածին - Մ. Թ.), Բլաւբլըհաստի եւ նմանները: Բայց Մեծ սրատերազմին վիճակուեցաւ ցոյց տալու մեզի թէ մարդկային էակներ, չըսելու համար քրիստոնէութիւնը, սատանայական ինչ ծայրայեղութիւններ կրնան դործել: Երբ Լիէժ, Նամուր եւ Լուվէն բոլորին շրթներուն վրայ էին, թուրք մը խնձի հետ խօսակցած աստե՛ն սուր քամա՛ն բանքով մը ըսաւ.

- Մենք բարբարոս կը կոչուինք. եթէ մենք ըրած ըլլա՛մնք այդ բաները, աշխարհ սրիտի ըսէր որ կ'ակնկալուէր բարբարոսներէն: Բայց քաղաքակրթութիւնը ի՞նչ կրնայ ըսել հիմա:

Ապա անդունումի թոնով մը ըսաւ.

- Շուները իրա՛ր կ'ուտեն կոր. թո՛ղ ուտեն:

Տարր մը գոյութիւն ունեցած է թրքական կառավարութեան մէջ, որ խօսքի եւ դործքի նկատելի ազատութիւն չնորհած է ոչ-իսլամ խմբակցութեանց. զտնուած են նաեւ ազնիւ նկարագրի տէր մարդիկ, որոնք իրենց լաւագոյնը ըրած են բա-

րեւութեամբ համար կացութիւնը: Թէև իրողութիւն է, այս համայնքներուն պատկանողներ կը նկատուէին հպատակ եւ ոչ թէ քաղաքացի, բայց բաւական լայն առանձնաշնորհումներ ապահովուած էին անոնց, որպէս կազմակերպուած «միաւորներ» (համայնքներ), որոնց մէջ շատ բան կը կատարուէր անոնց պաշտպանութեան համար: Այս դիջումը կը շնորհուէր գլխաւորաբար կրօնական կազմակերպութեան հիման վրայ, բայց անոր կ'ընկերանար նաեւ շատ մը քաղաքային առանձնաշնորհումներ: Հին եկեղեցիներու եկեղեցական պետերը նոյն ատեն համայնքներու ներկայացուցիչներն էին անշնորհական հարցերու մէջ: Բողոքական համայնքը կը ներկայացուէր աշխարհական անձով մը: Իւրաքանչիւր համայնքին կենսքը կազմակերպուած էր եւ անջատ, իսկ եկեղեցին արտօնուած էր լայն իրաւասութիւններ ունենալ իր ժողովուրդին վրայ: Կրթական ընդհանուր տուրք մը դրուած էր բոլոր համայնքներուն վրայ, որմէ գոյացած դոմարներէն մաս մը կը յատկացուէր զանազան համայնքներու իրենց կրթական մասնաւոր դործերուն: Ոչ-խլամ համայնքներու անդամներ, որպէս ամուսնանաւորներ, կը ծառայէին կառավարական պաշտօնատուներու մէջ եւ կարգ մը անիթներով անոնք բարձրացան վարչական վարերու ղեկներու:

1895ին էրդրումի աշխարհական կառավարիչը վալին, իր դործը լաւ կատարելու անկեղծ փորձը ունեցող մարդ մըն էր: Չարդը դործադրուած էր զինուորական իշխանութեանց կողմէ՝ յայտնապէս աշխարհական վարչութեանը ղեկուն վերայէն: Կառավարիչը, սակայն, յաջողեցաւ որոշ ժամերու սահմանափակել զայն: Միջոցի ճնամաղջի (աղօթաժամ) աւարտին, թուրքերը մղկիթէն ելած ատեն կը հնչէր փողը եւ կը սկսէր նախճիրը:

Երեւր ժամ վերջ կրկին կը հնչէր փողը եւ սպանութիւնը մեծ մասամբ կը դադրէր եւ միայն թալանը կ'արտօնուէր մինչեւ մայրամուտ եւ Չարդը բոլորովին վերջ կը դադրէր: Արևնահազարակեան առանձին պարագաներ՝ պատահեցան քաղաքին մեկուսի վարերը: Երկու օր ետք ճերմակ վաթթրեցաւ թուրքերու ամբոխ մը հաւաքուեցաւ յարձակելու հայկական թա-

ղին վրայ: Տեսան որ իրենց ճամբան դոցուած էր զինուորներու ջոխտէ մը, որ մասնակցած էր երկու օր առաջուան ջարդին: Այդ օրը այցելութեան դացի կառավարիչին: Խոր մտահոգութիւն յայտնեց կացութեան մասին, ընդունելով որ անուշի աղէտ եւ սարսափ մըն էր: Խօսակցութեան ընթացքին լրատ:

— Ասիկա կատարուած է մի քանի հայ յեղափոխականներ ձերբակալելու նպատակով (քաղաքին մէջ կային այսպիսի քանի մը հայեր): Բայց դիտեմ որ անմեղ էր զոհերուն հարկերին 98-ը: Հայ դադութը, որպէս դադութ, օրինապահ, հանդարտ եւ աշխատասէր էր: Սկսաւ օրական ուժիկ բաժնել 4-5 հազար հայերու, որոնք չբաւոր մնացած էին այդ ղեկներուն հետեւանքով: Ան շարունակեց ընել ասիկա մինչեւ որ կարգադրութիւններ կարենային ընել կազմակերպուել նպատամատոյցի աշխատանքին համար:

Պայտուրթ քաղաքին մէջ թուրք մը ունէր երկու յարակից տուն: Մէկուն մէջ կը բնակէր իր ընտանիքը, իսկ միւսին մէջ՝ հայ ընտանիք մը: 1895ի ջարդին օրը, ան իր դուռը բացաւ սարսափահար հայերուն առջև, եւ շատեր սպաստանեցան երկու տուներու մէջ ալ: Ան դիրք քոնեց մէկ տան դուռն առջև, իսկ կինն ալ միւսին առջև, եւ անոնք քաջարար դիմադրեցին ամբոխին դէմ եւ ազատեցին հայերը վնասէ:

Հեծելանուորդ Լենդի սպանութիւնը քննելու նպատակով նշանակուած յանձնախումբին հետ ճամբորդած ատենս, մեծ թիւով Համիտեան թուրքեր հաւաքուած էին պատուելու Ծաքիր փաշան — բարենորոգութեանց կայսերական մարզպանը, պետը այս յանձնախումբին: Այս թուրքերը կը սպառնային հայերուն, խոստանալով բնաջնջել զանոնք, երբ մենք Ալաշկերտի շրջանին անցնէինք էրդրում Աւելորդ է ըսել հայերը մեծ քարսափի մէջ էին, եւ ամէն պատճառ ունէին այդպէս լրջալու: Լուրեր կը շրջէին թէ ջարդեր տեղի ունեցած էին Տրապիզոնի մէջ եւ թուրքերը մեծասպէս դրդուած էին: Ասիկա առաջինն էր 1895ի ջարդերուն:

Շատ զարմացանք որ կարեւոր ոչինչ պատահեցաւ այդ Ալաշկերտի շրջանին մէջ, հակառակ այն իրողութեան թէ այդ

նոյն քիւրտերը նախորդ տարի հայու արիւն համտեսած էին Սասունի ջարդին, քիչ տարի ետք, հեռաւոր քաղաք մը տեղական թուրք կառավարիչին հետ ունեցած խօսակցութեանս ընթացքին զարմանքս յայտնեցի: Առեղծուածը բացատրեց: Ճիշդ այդ սրահուն կառավարիչ նշանակուած էր Ալաշկերտի շրջանին: Ջարդի քաղաքակրթական հանդէպ համակրութիւն չունենալուն, վրձնած ըլլալով հնարաւորութեան սահմանին մէջ արգելք հանդիսանալու անոր եւ տեսնելով որ շրջանի ղինուորական սպան իրեն համակիր էր, հրամայած էր որ շրջանը խողազ սրահուէր: Սպան, որ անհամբեր էր հարուածելու քիւրտերը եւ դաս մը տալու անոնց, ածապարանօք եւ զաղտնի արշաւանք մը կը կատարէ դէպի հայկական դիւղ մը, զոր քիւրտերը կը թալանէին: Օտէնքը կը պահանջէ, որ բազմութիւն մը ցրուելու համար տրուելիք հրամանը կրկնուելու է սեփի ղիմելէ առաջ: Սպան կը վախճայ որ բազմութիւնը պիտի ցրուէր առաջին կամ երկրորդ հրամանին վրայ եւ ինք պիտի կորսնցնէր անոնց տրուելիք բաղձալի դասը, որ դաս պիտի ըլլար քրտական ուրիշ խումբերու, որոնք կրնային դործողութեանց ձեռնարկել ուրիշ գիւղերու վրայ: Որով, ցըրուելու հրամանով կուտայ երեք անգամ՝ առանց ընդմիջումի եւ նոյն շնչով կը հրամայէ պահակախումբին որ կրակեն՝ ասպատակները հասկնալէ առաջ թէ ի՞նչ կը պատահէր: Դասը կ'ըլլայ օգտաշահ եւ ազդու, թալանը կը դադրի, եւ որով ոչ մէկ ջարդ պատահեցաւ շրջանին մէջ: Կառավարիչը պատմեց եղելութիւնը մեծ դժուրեւեղութեամբ: Ասիկա բաւական էր բացատրելու թէ ինչո՞ւ նախորդ տարուան իրենց ունեցած փորձառութեանց հետեւանքով այդ շրջանի արեանք եւ թալանի ծարաւ քիւրտերը մեծ մասամբ հանդարտ մնացած էին 1895ի ընդհանուր ջարդերու ընթացքին:

Վերեւ յիշուած կառավարիչը յաջողեցաւ հրաման սպահովել, որ հսկողութեան տակ Պոլիս զրկուէր ազդեցիկ քիւրտ պէյ մը, փր աւազակութեանց եւ հայերը կեղեքած ըլլալուն համար տիրահաշակ դարձած, մէկը որ աչքառու մաս ունեցած էր ջարդերու խռովութեանց մէջ: Իր ճամբուն էր զրուածին անցաւ: Հոն դռնուած ատեն, ստիկան սեփերու հայ փոխ-հրամանատարը, յաջս կառավարիչին ղիս վարկաբեկելու նպատակով կեղծ յայ-

տարարութիւն մը կ'ընէ թէ բարեկամական այցելութիւնն առած էր աւազակին, որուն տունը հիւրասիրուած էր քանի մը տարի առաջ: Կառավարիչը մեծապէս կը շփոթի եւ բարեկամական գիտողութիւն մը կ'ընէ հիւպատոսին, իր զարմանքը յայտնելով որ կրնայի յարարութիւն մշակած ըլլալ կառավարական հրահրութեան տակ դռնուոյ վատահամբաւ աւազակի մը հետ, որ ամբաստանուելու վրայ էր մարդասպանութեան յանցանքով: Վստահ էր որ Պոլիս հասնելուն պիտի կախուէր: Ո՛րքան մեծ եղաւ վիշտը, երբ Սուլթան Համիտին այցելելու պարտադրուելէն ետք մարդը պատուներով վերադարձաւ իր ծննդավայրը:

Անտարակոյս, 1909ի Ատանայի ջարդերու պատասխանատուներուն նպատակն էր ընդհանրացնել զանոնք: Շատ մը վայրեր իրաւովի ձեռնարկուած ոչ-համակիր պաշտօնատարներ արգելք եղան անոնց: Այդ ատենուան Ատանայի կառավարիչին չափ կեղծասոր եւ սեւասիրտ մարդ գրեթէ չեմ տեսած: Ջարդէն երկու օր առաջ երեւութական բայրաճակ ապահովութիւն տրուաւ թէ կայսրութեան տէր էին եւ թէ հնարաւոր չէր որ խռովութիւններ պատահէին: Եւ սակայն ըրաւ իր կարելին զանոնք բոլորքէլ տալու, քանի որ վատազի էր:

Յայտնապէս հակառակն էր Մերսինի Վիլքեսարըֆին (քաղաքապետ) արարքը, որ ղիմազբաւեց քրիստոնեաները թալանելու եւ ջարդելու համար հաւաքուած ամբոխը, եւ յայտարարեց որ պիտի զարնէր առաջին անձը եւ ամէն ով որ փորձէր խռովութիւն յառաջացնել: Մերսինը ազատեցաւ շարիքէ, մինչդեռ քսան եւ քսասուն մզոն հեռուն դռնուոյ թարսուսի եւ Ատանայի հայկական թաղերը թալանուեցան, այրուեցան եւ բազմութիւններ ենթարկուեցան անուրի տառապանքներու, ու չատեր ալ այրուեցան:

Ջարդերէն քանի մը ամիս ետք, ձեմալ Պէյ, Մեծ Պատերազմի շրջանի տիրահաշակ եռասպետութեան ձեմալ փաշան, Ատանայի կառավարիչ նշանակուեցաւ:

Ամէն գովեստի արժանի է նպատի եւ վերակառուցումի ի նպատակատարած իր գործը: Ո՛չ ոք կրնար իրմ աւելին կամ աւելի լաւը ընել: Կազմակերպեց նպատի եւ վերակառու-

ցումի յանձնախումբ մը, որուն մէջ ներկայացուած էին զանազան համայնքները՝ թէ՛ իսլամ եւ թէ՛ քրիստոնեայ: Լրջն յատկացումներ ապահովեց կեդրոնական կառավարութեան, որոնք ինստիտուցիաներ եւ օգտակարապէս զործածուեցան հայերու նպատին: Յատկացումներ ըրաւ ուսելիքի եւ այրած տուներու վերակառուցումին: Յաճ տոկոսով եւ երկար պայմանաժամով ու դիւրին պայմաններով փոխատուութիւններ ըրաւ, որ մեծ թիւով անձեր վերսկսէին գործի, իսկ հողագործեր ալ վերականգնէին իրենց աղարակի աշխատանքը: Ասիկա շատ մեծ շնորհ մըն էր գետնամած վիճակի մէջ դռնուող շրջանին համար: Նպաստը սահմանափակուած էր վնաս կրած քրիստոնեաներուն:

Իսլայ իր ամէնէն հոյակապ եւ հիմնական ձեռնարկը եղաւ ջարդին պատասխանատուները դատելու եւ պատժելու նը պատակով կազմուած պատերազմական ատեանները: Ասոնք զործեցին բազմաթիւ ամիսներ եւ արդիւնքը այն եղաւ որ յիսունէ աւելի թուրքեր մահուան դատապարտուեցան, շատ քիչ տեր՝ զանազան տեսողութեամբ բանտարկութեան: Շատ մեծ սպաւորութիւն թողուց քաղաքին վրայ, երբ մահաւճիւղը զործադրուեցաւ առաջին տասնհինգի պարագային: Ոչ մէկ յայտարարութիւն եղաւ հանրութեան եւ մահաւճիւղը զործադրուած էր դիշերը, այնպէս որ երբ ժողովուրդը արթնացաւ, տեսաւ որ այս մարդիկը կախուած էին հինգ հողինոց խումբերով, իւրաքանչիւր խումբը քաղաքին մէկ տարբեր վայրին մէջ: Այդ առաւօտ փողոցներէն հետիոտն անցած ատենս խորապէս հետաքրքրական էր ինձի հաստատել բազմութեան ընկճուած վիճակը: Կը թուէին սահմանափակ ըլլալ եւ նոյնիսկ անկարող խօսելու: Չկար որեւէ տեսակի ցոյց: Քանի մը ամիս առաջ նոյն ժողովուրդին վերաբերուած հակապատկերն էր, զոր ստուգած էի ջարդը սկսելէն քանի մը ժամ առաջ: Այն ատեն սպիտակ փաթիթոցաւոր բազմութիւնը արթուն էր եւ պարաստ, զինուած եւ դժուարաւ քղարկուած անհամբերութեամբ սպասելով ազդանշանին որ սկսելին թալանի եւ սպանութեան: Այժմ ոչ իսկ միմունջ մը: Ձանք թափուած էր որ հայերն ալ ցոյց տրուէին որպէս դատապարտութեան մեղսակիցներ եւ հինգը

կախուած էր - եղեանական ծոնք սխալ մը: Յետագային կառավարական յանձնախումբ մը անձեզ հաշակեց հայ համայնքի:

Այս քաջ երիտասարդ պաշտօնատարը ծունկի բերաւ բազմութիւնը: Կը յիշեմ տեսարան մը, երբ հետեւելով անոր ուղղութեան, նոյնիսկ դատապարտեցին իրենք զիրենք: Չինք կառավարիչ նշանակող ֆերմանին (պաշտօնական հրամանագիր) մեծ բազմութեան մը առջեւ կատարուած հրապարակային ընթերցումին առթիւ - որուն ստուար մեծամասնութիւնը զսպիտակ փաթիթոցաւոր խաւովներ եւ փոքր խումբ մըն ալ քրիստոնեաներ էին - իրրեւ պատասխան ձեռնալ փաշան պերճախօս ճառ մը արտասանեց, առջով ճաղատութիւն, հաւասարութիւն եւ երրայրութիւն» բառերուն ազդի մը կեանքին եւ գործունէութեան մէջ ունեցած կարեւորութիւնը: Նկարագրեց քաղաքին մօտեցած ատեն ունեցած զրացումները, երբ տեսած էր մեծ բազմութիւն մը ճմեր քրիստոնեայ համաքաղաքացիներու - անտուն, դուրսը՝ բացօթեայ վայրեր մնացած՝ զրեթէ առանց պատապարանի - Սիրտս լացաւ արեան արտասուք»: Քաղաքին ամառացած, քանդուած եւ այրած թաղէն ձիով անցած ատեն նկատուած էր ահաւի ամոյութիւնը եւ ըմբռնած էր անոր իմաստը: Այս պերճախօս եւ ազդու հաստատման՝ երկվայրկեան մը կանգ առաւ եւ բացազանչեց:

- Ալլահին անէճքը ըլլայ անոնց վրայ, որոնք գործադրեցին այս ջարդը:

Դարձեալ սպիտակ փաթիթոցաւոր բազմութիւնը փոխադարձեց բարձրաձայն «ամէն» ըսելով:

Կը խոստովանիմ որ այս տեսարանը խոր սպաւորութիւնը բաւ իմ վրաս: Պատուանդանին վրայ կար այս երիտասարդ եւ ետանդուն հայրենասէրը, իսլամ մը, որ կը պաշտպանէր «համաքաղաքացի» ոչ-իսլամ դատը եւ կը դատապարտէր անշտիթի համեմատութիւններով անոնց զէմ զործուած զապանութիւնները: Համոզուած եմ որ խորապէս նախաձեռնողը էր եւ անկեղծ իր կեցողածքին մէջ: Միւս կողմի կար սպիտակ փաթիթոցաւոր խաւովներ բազմութիւնը, որ բարձրազայակ ճամկնով կը պատասխանէր նշովքին եւ կասկածէ վեր էր որ այդ բաց-

մութան մեծամասնությունը կղեկավարող մասնակցություն ունեցած էր Նորդին մէջ: Այնպէս կ'երևէր որ շէին անդրադառնալ որ կը գոտապարտէին այն ինչ որ իրենք ըրած էին և նրազովք կը հրաւիրէին իրենք իրենց գլխուն: Սոսկալի էր Նորդը, բայց այս վերաբերումը տարարտաբան էր ակտիւ կը թուէր ինծի, որովհետեւ չէին գիտեր իրենց կեցուածքին նշանակութիւնը:

Դպաստամատոյցի աշխատանքին հետամղուածին մէջ կային երկու ձեռնարկներ, զորս ձեռնալ փաշա կազմակերպած էր: Ան առէն ճիւղ թափեց որ մնալուն չիմի վրայ գրաւին աւանք: Աստիցմէ մէկն էր սրբանոց մը, որուն մասին արդէն իսկ խօսած եմ, որուն համար, գլխաւորաբար կամուար մասնակցութեամբ, 30-40 հազար սուլար գոյացուց: Անիկա բաց պիտի ըլլար բոլոր համայնքներուն համար: Սակայն, ան լեցուած էր ջարդերէն սրբացած շուքէ երկու հարիւր սրբերով: Կառավարութիւնը կը հողար ծախքերը և ան սմբողջութեամբ կառավարութեան կողմէ նշանակուած հայերու ձեռքն էր:

Միւս ձեռնարկը կ'ընկերու և աղջիկներու ըլլալիք ճարտարութեամբ սօշոթիւնն էր, որուն համար թուրքէ մը, սուրիացիէ մը, երեք հայերէ և ամերիկացի միտինարնէն բազկացած յանձնարար մը նշանակուած էր: Ընտան յայտնեց իր վնասահութիւնը ամերիկացի միտինարներուն հանդէպ և իր համակրութիւնը անոնց իտէալներուն, յանձնարարներն նախագահը նշանակելով միտինարը, այդպիսով իմ արամադրութեանս տակ գրաւ շուքէ 17 հազար սուլարի գումար մը (թրքական 1000 հնչուն ոսկի), որ պիտի ծախսուէր կատարուելիք գործին համար: Այս երկու ձեռնարկներն ալ բաւական յաջող ընթացքի մէջ էին մինչև պատերազմ, երբ բոլորովին խանդարուեցաւ յանձնարարներն աշխատանքը:

Ընտան փաշայի հետ մշակուած այս հանկի յարաբերութիւնը իր բարեբար հետեւանքը ունեցաւ Մեծ պատերազմին ընթացքին: 1914 աշնան թուրքիոյ պատերազմի մտնելով՝ կացութիւնը լրջացաւ Ատանայի մէջ: Ատեն մը բաւական մտահոգութիւն կար որ Դաշնակիցները պիտի փորձէին գրաւել կիլիկիան: Եւ Ատանայի մէջ իրախանել Պաղտատի երկաթուղին:

Տարօրինակ էր որ նման փորձ մը չեղաւ, թէ և զինուորականներ կը խորհէին որ 40-50 հազար զինուոր բաւական պիտի ըլլար կարելու արեւմտաքէն, մեկուսացեալ Սուրիայէն և Միջագետքէն գալիք պաշարը: Այսուհանդերձ, Դաշնակիցներն, արեւելեան Միջերկրականի գաշնակից պատերազմական նաւերը սպառնացին ուրակոծել Ալեքսանդրէթը: Երբ ասիկա գիտացուեցաւ, թրքական իշխանութիւնները հրամայեցին որ ձերբակալուին բոլոր բրիտանացի աշրերը: Մեզմէ 26 հազար - որոնցմէ 18-ը իսլամ՝ Հեղկաստանէն և Աֆղանիստանէն - ոտակաւատան կանչուեցաւ և քանի մը ժամ փար գրուելէ ետք, որուն ընթացքին ուղին կրցանք երեւան հանել կառավարութեան մը տաղբութեան մասին, հրամայեցին մեզի որ «չարքի մտնենք»: Իրենց սուրը անցուցած պահակ զինուորներով չըջապատուած՝ քաղաքին մէջէն հետիտան անցուելով տարուեցանք թրքական թաղը և բանտարկուեցանք - ութը և բոսնացիները մէկ սենեակի, իսկ 18 ասիացիներն ալ ուրիշ սենեակի մը մէջ: Ոչ մեր սենեակը և ոչ ալ միւսը կտոր մը իսկ կարասի ունէր: Մեր բարեկամները չէին կրցած գիտնալ թէ ինչ պատահած էր մեզի և անոնց մտահոգութիւնը մեծապէս աւելցած էր այն յաշտարարութեանէն ետք, թէ իրրեւ պատանդ կը պահուէինք մինչև Ալեքսանդրէթի ուրակոծումը և թէ որեւէ օսմանեան չը պատահ վնասուելու պարագային կեանքի դէմ կեանքով պիտի փոխադարձէին: Ռմբակոծումը շատ ճարպիկութեամբ կատարուեցաւ: Յամաքահանումի խումբ մը ծախքերը երած և Պաղտատի երկաթուղիին ճիւղը խանդարած էր՝ առանց որեւէ անձի վնասի: 48 ժամ սրդէս պատերազմական զերի վար գրուելէ ետք պատար ձեռնակուեցանք: Այդ ատեն ընտան փաշան հրամանատարն էր Սուրիական զորարանակին: Երբ ընտանիքս կը գիմէ իրեն, պաշտպանութեանս մասին վստահութիւն կուտայ, և յաջորդող տասը ամիսներուն Ատանա բնակութեանս տեսլութեանս առէն կերպով լաւ վերաբերում ընծայուեցաւ ինձի թուրք պաշտանատարներու կողմէ և ոչ մէկ պատահաւ ունէի զանդատելու:

Ընտան փաշայի հետ ունեցած վերջին թղթակցութիւնս՝ Փրինսթըն համալսարանէն ինձի ընծայուած պատուոյ տաղապի մը տօթիւ՝ իրմէ ստացուած անձնական նամակ մըն էր:

Անիէտ ճեմալ Պէյէն (Պաղտատ)
Ու. Ն. Զէյնալլըրզին (Ատանա)

Պաղտատ, 27 Բիսնուենու Էլվէլ 1327
26 Դեկտեմբեր 1917

(Մ. Թ. Իսլամական 1327 տարին կը համարուի իսլամական 1917ին եւ ոչ թէ 1917Է, ինչպէս որ ձուս ցոյց կը տրուի: Թեքէս տպագրական վրիպակ մըն է:)

Յարգելի բարեկամ,

Մեծ հաճոյքով կարգացի անկեղծութիւն բուրով ձեր նամակը, որուն իւրաքանչիւր տողը զբուսած էր ճշմարիտ բարեկամութեամբ: Ինչպէ՞ս կարելի է մոռնալ ավնուական դէմքը Ամերիկայի մարդկայնասէր այն զանգին, որ անխնայ ջանքով եւ համբերատար ճիղով աշխատեցաւ ինձի հետ, անկեղծ ճիւղիս մէջ, երբ պաշտօնեայ նշանակուեցայ, վաթթիւու մարդկութեան կոտորածով վէրքերէն ոմանք: Ի՞նչպէս կրնայ սիրաս յարաճուն զարկով չբարախել, երբ կը կարդամ այն նամակը, որ կը մտաբերէ համբերատար ջանքը անցեալի վշտալի օրերուն:

Կը վստահեցնեմ ձեզ թէ մեծ դժուարութեամբ հեռացայ Ատանայէն: Պոլսոյ մէջ զանազան ամենամօտիկ բարեկամներ երկու ամիս տեսականորէն աշխատեցան եւ միայն անկէ վերջէր որ յաջողեցան համոզել որ ընդունելով Պաղտատը: Այնպէս կը թուէր որ եթէ հեռանայի Ատանայէն, Ատանայի ժողովուրդը պիտի որբանար եւ կամ պիտի դրկուէի իմ սիրելի ժողովուրդէս: Եկատի ունենալով այն պարագան թէ բարդամամբ Պաղտատի պատասխանատուութիւնները Ատանայէն չուրջ տարը անգամ աւելի են, կը խնդրեմ որ աղօթէք ինձի համար որ Աստուած (Ճենապ-ը Հաք) ուժ եւ կարողութիւն տայ ինձի:

Ծնորձուած պատուոյ տիրոջը Համալսարանին կողմէ - որ ձեզի նման այնքան արժանաւոր եւ մշակուած մէկը արտադրած է, ի զնահատութիւն ձեր իրական արժանիքին եւ յաջողութեան - բուրբովին անբաւարար կը թուի ինձի, ասոր դրահանատութիւնը շատ առաջ ստացած էր Ճենապ-ը Հաքէն:

Ճենապ-ը Հաք խաղաղութիւն տայ ձեզի եւ ձեր ընտանիքին: Կողջունեմ Ատանայի բոլոր բարեկամներս:

Ձեր անկեղծ բարեկամը, որ միշտ յարգանքով կը յիշէ ձեզ եւ կ'աղօթէ ձեր բարօրութեան համար:

(Ստորագրուած) Ահմէտ ճեմալ (նախկին կառավարիչ Ատանայի):

Թրքական կառավարական պաշտօնատարներու հետ վերջին յարաբերութիւնս տեղի ունեցաւ 1921ին Անքարայի մէջ Բեմալականներու հետ ստորագրուած ֆրանսական դաշնագրի ատեն, որով կիլիկիան կը վերադարձուէր Թուրքերուն:

Ֆրանքլին Պուլթոն բանակեցցաւ այդ դաշնագրին շուրջ եւ Ատանա եկաւ զայն դործադրութեան դնելու: Նշանակուած երկու Թուրք պաշտօնատարներն էին՝ զինուորական կառավարիչը՝ Մուհիտտին փաշա եւ աշխարհական կառավարիչը՝ Համիտ պէյ: Ինչ որ ալ ըսուի Ֆրանքլին Պուլթոնի կողմէ Աղգայնականներու հետ դժբացած համաձայնութեան մասին, ես այս մարդիկը զտայ անկեղծ եւ լրջախոհ: Ամէն ջանք թափեցին յողովուրդ համար իրենց աշխատանքին մէջ:

Ֆրանքլին Պուլթոն - համալսարանային հարցերու մէջ մեծ փորձառութիւն ունեցող մէկը, աքսորականի մը զաւակը, ծնած Անգլիա եւ ուսած Քէյթսթրիմ (համալսարանը), անգլերէնը կը խօսէր այնպէս, որ կարծէք իր մայրենի լեզուն ըլլար ան: Համարձակ էր իր վարուելակերպին եւ զազաւարներու արտայայտութեան մէջ, եւ ես տարուորուեցայ այն բանով որ անկեղծութիւն եւ լուրջ նպատակ թուեցաւ ինձի: Ծատ դժուար դործ մը յանձնուած էր իրեն, եւ կը դգամ թէ կը ջանար ի կատար ածել զայն այնպիսի կերպով մը, որ խաղաղութիւն եւ հանգարտութիւն դոյանար: Թէ անիկա, ոմանց ըսածին նման, նպատակադրուած էր անձնատուութիւն մը ըլլալու Թուրքերուն եւ կամ զիջում մը, որ ան հաւատացած էր լաւագոյնս պիտի ծառայէր բոլոր շահաբերողներուն, կախում ունի դաշնաւորը արտայայտող անձին տեսակէտէն: Ոմանք զայն նոյնիսկ յորջորջած են հայերու դէմ դործուած դաւաճանութիւն մը - արդարեւ դաւաճանութիւն բոլոր քրիստոնեաներուն դէմ: Ինչ որ ալ վերադրուի անոր, ես եկայ այն եղրակացութեան թէ Պր.

Ֆրանքլին Պուլթոն ջանացած էր իր լաւագոյնը ընել արուած պայմաններու տակ :

Ինչ որ լաւագոյն էր, ան ջանացած էր այնպիսի ձեւով մը գործադրութեան ղնել ծրարելով, որ առաւելագոյն չափով պիտի ջնջուէր տառապանքը : Իրեն համար անակնկալ հասեալ շատ մեծ յուսախարութիւն էր, երբ Անքարայէն վերադարձին արտադաղթը գտաւ այնպիսի համեմատութիւններու հասած, որ իր կողմէ ըլլալէ ո՛րեւէ փորձ պիտի չկարենար կասեցնել հոսանքը : Բարեփոխութիւններ ապահովեց համաձայնութեան մէջ նոր պայմաններուն զոհացում տալու նպատակով եւ դրաւ զրաւ Ֆրանսայի ինչպէս նաեւ Թուրքիոյ պատիւը, որպէս եւրաշխաւորութիւն քրիստոնէաներուն եւ դիւրութիւններ տուաւ անոնց վերադարձին համար : Վեց ամիսով երկարել տուաւ զինուորական ծառայութենէ զերծ կացուցուելու ժամանակը եւ յանձնախումբ մը կազմեց որ հոգ տարուի եւ յանձնաձուկ լըքեալ գոյքերը՝ յօգուտ անոնց սեփականատէրերուն : Ասիկա մէկ տարի գործեց, այն յոյսով որ ժողովուրդէն վերադարձողներ կրնային ըլլալ : Ետտ սիրալիւր վերաբերում ցոյց տուաւ միախոնարակամ խումբին հանդէպ եւ մեզ բոլորս վստահեցուց որ Ֆրանսական ընդհանուր հիւպատոսը պատրաստ պիտի ըլլար հնարաւոր որեւէ ծառայութիւն մատուցանելու ի շահ մեզի :

Ձօր. Մուհիտտին փաշա լաւ զարգացած մէկն էր, որ հետաքրքրական փորձառութիւններ ունեցած էր իր կեանքի ընթացքին : Սուլթան Համիտի օրով քաղաքակամ իր տեսակետներուն հետեւանքով աքսորուած էր եւ ենթարկուած այլազան զրկանքներու : Ետանդուն յառաջընթացական մըն էր, նուիրուած բարեփոխութեան եւ կը պնդէր որ արդարութեամբ յանձնաձուկէր կառավարութիւնը : Կ'ըսուէր թէ լաւ ծառայութիւն մատուցած էր տարիներ առաջ մղուած յունական ինչպէս նաեւ վերջին պատերազմին : Յայտարարեց որ իր փափաքն էր կառավարական իր պաշտօնատունը վարել բոլոր ազգութեանց հաւասար արդարութեան հիման վրայ : Համեստ էր իր վարուելակերպին, ազնուական՝ կենցաղագիտութեան եւ սիրալիւր՝ իր վերաբերումին մէջ : Ինծի ըսաւ. «Գիտեմ թէ ի՞նչ կը նշանակէ

աքսորը : Հաղաք մեզք որ այս մարդիկը (հայեր, եւայն) իրենք զիրենք աքսորած են : Ետտ կը փափաքեմ որ վերադառնան : Երկրին մէջ տեղ կայ բոլորին եւ ապրելու ենք միասին՝ իրարու օգնելով» : Ետտ զօրաւոր կերպով կը մեղադրէր էն-վէր - Թալաթ վարչակարգը, որ պատճառ եղաւ երկրին այնքան սոսկալի կործանումին : Իր ըրած մէկ ուրիշ յայտարարութիւնն ալ այն էր թէ անոնք (վժուրքերը) ներկայիս կը դատուէին : Եւրոպա եւ Ամերիկա այլեւս չեն վստահիր անոնց : «Եթէ ձախողին այս ճիղերը, յոյս պիտի չըլլայ վերահաստատելու Թուրքիոյ վարկը յաշտ աշխարհի» :

Համիտ Պէյը աշխարհական կառավարիչն էր ամբողջ շրջանին, որ թէեւ նախապէս զբաւուած էր Ֆրանսացիներու կողմէ, բայց յետագային անցած էր թրքական իշխանութեան տակ՝ մէջն ըլլալով Մարաշն ու Այնթապը : Ան նոյն ատեն կը վարէր Ատանա վիլայէթի կուսակալի (վալի) պաշտօնը : Վալիին՝ իր զբաւեանակիւն մէջ տեղի ունեցած թերութեան մը հետեւանքով ընդհուպ պաշտօնազրկուած էր : Համիտ Պէյը բաւական կուտ էր իր վարուելակերպին մէջ - բոլորովին տարբեր բարեկիրթ, նոյն ատեն ազնիւ խոսնուածքով եւ յայտնապէս լաւ տրամադրուած Մուհիտտին փաշայէն : Անքարայի մէջ զահլիճին մաս կազմած էր : Չուստիս էր զբաւեանակալին աշխատանքին մէջ եւ կարող՝ իր ծայրայեղ անաչառութեան եւ գործերու արագ գործադրութեան մէջ : Սկզբունքի եւ նպատակի իր յայտարարութիւնները յար եւ նման էին Մուհիտտին փաշայինին հետ : Անոնք ըմբռնեցին որ շատ մեծ աննպաստ կացութեան մէջ կը գտնուէին, որովհետեւ օտար երկիրներ զլրեթէ բնաւ վստահութիւն չունէին թուրքերուն վրայ : Կը խորհիմ որ այս մարդիկը պահպանած պիտի ըլլային հանդարտութիւնը եւ յարգալիւր վերաբերում ցոյց տուած պիտի ըլլային քրիստոնէաներուն հանդէպ, բայց կասկածն ու սարսափը մեծ ազդեցութիւն բանեցուցին անոնց վրայ, որուն հետեւանքով տեղի ունեցաւ զանգուածային զարմանալի արտադաղթը : Մարդ չի կրնար զարմանալ անոր վրայ, բայց ծայրայեղօրէն խղճաւի էր : Անկարելի կացութիւն կը ստեղծուի եթէ վստահութիւնը քայքայուի :

Այդ ժամանակ Բրիտանական կառավարութիւնը հազար-
 զազրուեցին մը զբիւնց, զլուշայնելով՝ բոլոր բրիտանական
 հպատակները, որ անոնք իրենք իրենց անձնական պատասխա-
 նատուութեան տակ կը գտնուէին Երկրին մէջ, և թէ խոր-
 տանաւ մը զբիւնց էր Մերտին՝ մեկ սեղափոխելու: Սկիզբը
 լրջօրէն մտածեցինք հեռանալու մասին, բայց պաշտօնատար-
 ները այնքան սրտանց հաւաստիք կուտային ասպանութեան
 մասին և իմաստուն վարչութեան նպատակներուն հանդէպ ի-
 րենց ունեցած փափաքին մէջ այնքան անկեղծ էին, որ մեկ-
 նում պիտի նշանակէր արարք մը, որով ցոյց պիտի տրուէր
 թէ վստահութիւն ընաւ զոյուեթիւն չունէր: Մնացինք և ար-
 դարացաւ իրենց անկեղծութեան հանդէպ ունեցած մեր վստա-
 հութիւնը: Աշխատանքս Սուրիա դառնուող կիլիկիցի զազթա-
 կաններուն մէջ շարունակելու նպատակով էր որ 1923ին հեռա-
 ցայ Ատանայէն:

Թրքական բարեկամեցողութեան այս պարագաները ցոյց
 կուտան ազնիւ սրբի մը և իրենց անձին սպանացող վտանգին
 հանդէպ ցուցարարութեամբ ոչ նուազ քաջութիւն: Այսուհանդերձ,
 անոնք չեն տկարացներ անցեալին դժբախտ զազանութիւննե-
 րուն համար թրքական կայսերական վարչութեան ղէմ կցած
 ամբաստանութիւնը: Շատ մը անհատներու պարագային անոնք
 աստիճան մը կը մեղմացնեն կացութեան ծայրայեղ ահռելիու-
 թիւնը: Անոնք ցոյց կուտան որ նկատելի տարր մը թուրքերու
 մէջ կը զնահատէր քաղաքակրթութեան և յառաջդիմութեան
 լաւ բաները և փափաք կը բացայայտէր անոնց հանդէպ և
 բարեկամեցողութիւն՝ իր զբայիններուն: Անոնք նաև ցոյց կու-
 տան որ չին իրաւաւորը կանխամտածուած ձեւով ծրարած
 էր փոքրամասնութեանց հալածանքը, և ցեղային հակառակու-
 թիւն և կրօնական մոլեռանդութիւն դժբախտ էր իր լաւ բը-
 նակցութիւնը իրեն դժբախտ բնելու համար:

Թ. ԳԼՈՒԽ

ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ՃԻԳ

Կիլիկիան դաշտագետինը կը դառնուի երկու լեռնաշղթա-
 ներու միջև - Տաւրոսը՝ արեւմուտքը և Ամանոսը՝ արեւելքը:
 Շատ յաճախ Ատանայի մեր տան կտուրէն դիտած եմ մայրա-
 մուտը երբ շատ ամպոտ էր երկինքը: Արեւմուտքը: Տաւրոսի
 վրայի մայրամուտի դոյները նոյնքան զեղեցկութեամբ կ'ար-
 տացուան, արեւելքը՝ Ամանոսի վրայ, տալով իրական արեւա-
 ծագի մը երևույթը: Թուրքիա ունեցած 45 տարուան միսիոնա-
 րական աշխատանքիս աւարտին, ամպամած կը գտնեմ երկին-
 քը, բայց կան դոյնի գեղեցիկ երկինքեր: Հարց կը ծագի թէ
 մայրամուտ է թէ արեւածագը:

Երբ ամերիկացի միսիոնարները Թուրքիա մտան շուրջ
 հարիւր տարի առաջ, անոնք եկան ամէնէն աւելի ի մտի ունե-
 նալով ոչ-քրիստոնեաներուն և ոչ թէ՛ հայերուն, Աւետարանը
 քարոզելու ընդհանուր շահը: Անհանգիստ հոգիներ կային հա-
 յերու մէջ, որոնք մեծ փափաք ունէին սորվելու, նաև բարե-
 կարգելու իրենց եկեղեցին, ազատագրելու դայն պարզ ծիսակա-
 նութենէ և վերստին ներմուծելու աւետարանական ոգի մը:
 Անոնց հակազդեցութիւնը միսիոնարներուն ուշադրութիւնը
 կեղերնացուց համայնքին վրայ, աւետարանական ձգտարու-
 թիւնը իր պարզութեանը մէջ հնօրեայ եկեղեցւոյն ներարկելու
 նպատակով:

Սկզբնական շրջանին այնքան համակիր էին եկեղեցւոյ
 պետերը, որ Նոր Կտակարանը թարգմանուեցաւ կովկասեան
 թուրքերէնի ու տպուեցաւ հայերէն տառերով ու 1819ին հրա-
 տարակուեցաւ: Ամերիկեան Աստուածաշնչական Ընկերակցու-

թեան կողմէ, էջմիածնայ հայ կաթողիկոս Եփրեմի եւ Պոլսոյ Պօղոս Պատրիարքի վաւերացումովը: Այնպէս որ, երբ 1832ին միսիոնարները Պոլսոյ մէջ սկսան իրենց աշխատանքին, ո՛րեւէ ուրիշ համայնքէ աւելի հայերը ընդառաջեցին: Որովհետեւ ժողովուրդը եկեղեցիէն չհեռանար եւ երկփեղկում չյառաջանար, միսիոնարական իտէալն էր զօրացնել այս ներքին շարժումները եւ քաջալերել որ աւելի լաւ դաստիարակուին թէ՛ կղերականութիւնը եւ թէ՛ աշխարհական դասը: Եստ քաջալերական եղած է բարեկարգութեան եւ յառաջդիմութեան հեռանկարը՝ մինչեւ Մատթէոս Պատրիարքի պաշտօնի կոչումը, որ 1844ին, ի միջի ալրոց զրոծ է էրզրումի շրջանի քահանայի մը եւ հրամայած է որ հնարաւոր ամէն ինչ ընէր՝ հակազդելու համար օտարականներու (միսիոնարներու) աղղեցութեան, հաւաքէր եւ փճացնէր անոնց կողմէ ցրուուած բոլոր դիրքերն ու թառցիկները, ըստ դուշացնէր ժողովուրդը, որ որեւէ յարաբերութիւն չունենար անոնց հետ եւ խիստ վերարեւում ցոյց տար այս խորհուրդին անաստողներուն հանդէպ:

Պր. Ճեքսըն եղած է էրզրումի առաջին միսիոնարը, որուն 1833ին ժամանած ատեն Մատթէոս Պատրիարքի վերաբերումը սկսած էր ինքզինք զբալի դարձնել: Պր. Ճեքսըն էրզրում մտած ասեն ո՛չ ոք կ'երթայ դինք դիմաւորելու: Եռտուով ամենասուղ հակառակութեամբ դէմ յանդիման կը գտնուի եւ ո՛չ ոք դոյզն քաջալերութիւնն իսկ ցոյց կուտայ իրեն՝ Աստուածաշունչի ընթերցման հարցին մէջ: Ժամանակ եղած է երբ ինք եւ կինը գրեթէ բոլորովին խզուած են ժողովուրդէն: Անոնց մօտեցող քանի մը անձեր ենթարկուած են դանակոծումի եւ բանաւոր կութեան, եւ որով խղած են իրենց յարաբերութիւնը: Երբ, քաղաքին մէջ, կը նայի իր շուրջը եւ կը խորհրդածէ տղիտութեան, նախապաշարումի եւ անօրինութեան մասին, որոնք մութ ամպի նման կը ճնշէին անոր վրայ, կը զբայ որ աւելի դիւրին պիտի լըլար իրեն իր պարզ ձեռքերով ներուզի մը բանալ դաշտագետինը շրջապատող ժայռոտ լեռներուն մէջէն եւ ալպիստի դուրս ելլելու ճամբայ մը ապահովել, քան թէ Աւետարանի լոյսը թափանցել տալ քաղաքը պարտերոյ խաւարի եւ ալպիստի մուտք դործել ժողովուրդին մէջ:

Բայց երբ Աւետարանը իսկապէս սկսաւ ճամբայ մը գտնել եւ յաջողեցաւ քանի մը համակիր ապահովել, անոնք բանտարկուեցան, ձեծուեցան եւ աքսորուեցան: «Աստուածունչ կարգադրուեցաւ» եւ «յառաջդիմականները» Եկեղեցիէն դուրս քուսեցան եւ ստիպուեցան առանձին համայնք մը (միւլ լէթ) կազմել, որպէս Բողոքականներ, որպէսզի կարենային պաշտպանութիւն ունենալ եւ վայելել իրենց կրօնական եւ քաղաքական իրաւունքները: Այս շարժումը շուտով զօրացաւ եւ աւետարանական խումբեր կազմուեցան ամբողջ երկրին մէջ: Պնդողներ եղան որ այս մարդիկը եկեղեցիէն հեռանալով կորսընցուցած էին հայ դասուելու իրենց իրաւունքը եւ դարձած էին աղբալու: Բայց հարաձանքը աստիճանաբար ցանցառացաւ եւ հուսկ ապա անյայտացաւ: Միսիոնարական ձիւղ որոշ ձեւ մը ստաւ աւետարանական եկեղեցիներու, դպրոցներու եւ քոլէճներու կազմակերպութեան մէջ: Ասոնք խանդավառութեամբ ընդառաջեցին, եւ ինքնավար ու ինքնաբաւ եկեղեցիներ շուտով ցոյց տուին շարժման կենսունակութիւնը:

Պր. Ճեքսընի ժամանումէն յետոյ տարի ետք հիանալի հակադրութիւն մը կար: էրզրումի մէջ կար լաւ կազմակերպուած աւետարանական եկեղեցի մը եւ ղիւնթոթիկ երկրորդական վարժարաններ թէ՛ մանչերու եւ թէ՛ աղջկանց: Հեռաւոր շրջանները կային կարգ մը աւետարանական համայնքներ՝ իրենց եկեղեցական եւ դպրոցական կազմակերպութիւններով: Հ. Յ. Պ. Լինչ իր «Հայկական ճամբորդութիւններ եւ ուսումնասիրութիւններ» գիրքին մէջ կը գրէ.

«Ամերիկացի միսիոնարները էրզրումի մէջ ունին ընդարձակ հաստատութիւն մը, որ հիմնուած է 1839ին: Իմ բընակութեանս շրջանին անոր նախապահն էր վերապատուելի Ու. Ն. Չէյմպըրը, վայելուչ արտաքինով երիտասարդ մը... իր տիկինը եւ արժանաւոր ընկերակիցը — ամէնէն ղեղաղէմ եւ զարկացած կիներէն մէկը — յարասուօրէն զրաղած էր իր աղջկանց վարժարանովը: Մարդ կը տարուէր մտածելու այսպիսի տիպարի մը հայկական ցեղի կանանց սեռին վրայ ունեցած արժէքին մասին: Ամերիկեան միսիոնարներէն մարդ հը-

բաժնետ ասած ատեն, հասնելի է կանգ առնել այս յուշին՝ վերա, որ, արդարեւ, կը բացատրէ անոնց՝ երկրին շնորհած օղորտներու տեսակը՝ աւելի լաւ քան թէ իրենց տեղեկագիրներուն մէջ տրուած թուանշանները:

«Հարկ է որ աւելցնեմ որ անոնց միախոնութիւնները կը դեկլարուին բացառիկ կարողութիւններով օժտուած այրերու եւ կիներու կողմէ, որոնք կը պատկանին տխրարի եւ թերեւս դատակարգի մը, որ շատ աւելի բարձր է քան ինչ որ կ'ակնկալուի: Կը հիանաք անոնց լայն հանդուրժողութեանը եւ ամէն կարգի անուղիղ նպատակներու ամբողջական բացակայութեանը վրայ: Մարդ սիրտին խորէն մնաք բարով կ'ըսէ»:

Հ. Յ. Պ. ԼԻՆՉ

(Էջ 217, «Հայկական Ֆամբոյդուրիւններ եւ ուսումնասիրութիւններ», 1901)

Ամէնէն հիանալի փոփոխութիւնը հայկական հին համայնքի վերաբերումին մէջ տեղի ունեցածն էր: Ո՛չ միայն օտար միախոնարներն ու աւետարանիչները չէին բանադրուէր, այլ նաեւ շատ բարեկամական յարաբերութիւններ հաստատուած էին: Նոյնիսկ շինականներ սկսան խօսիլ զպրօցներու եւ եկեղեցւոյ բարեկարգութեան մասին: 1879ին միախոնարները պատուոյ հիւրերն էին Հայ Լուսաւորչական նոր երկրորդական վարժարանին մէջ տրուած մեծ ճաշկերոյթին: 1895ի ջարդին հայ եղիսկոպոսը տքորուեցաւ: Ասպէ քահանան, որ իր երկտասարդութեանը կատարի հալածիչը եղած էր աւետարանականներուն, իր անցուցած մէկ արկածին հետեւանքով անկարելի եղած էր իրեն տունէն դուրս ելլել: Պնդեց որ ես, աւետարանիչ միախոնարս, ամէն օր այցելեմ իրեն, խորհրդակցելու նպատամատոյցի աշխատանքի մասին, իմ արամազրութեանս տակ զննելով կարեւոր դոմար մը, որ պիտի ծախուէր ըստ իմ հայեցողութեանս: Ասոնք օրինակներ են հին կղերականներու վերաբերումին մէջ տեղի ունեցած փոփոխութեանց: Յարաբերութիւնները տակաւ առ տակաւ դարձան աւելի սերտ

եւ նոյնիսկ հարց ծաղեցաւ թէ արդեօք հնարաւոր պիտի չըլլա՞ր միութիւնը: Կացութիւնը լուսադոյնս բացատրեց լուսաւորչական քահանայ մը, որ ըսաւ.

- Մեր եկեղեցին իր պատմութեան ընթացքին իրեն օտար շատ բաներ որդեկրած է: Ժամանակը կը մօտենայ երբ պիտի ջնջենք օտարտի այս բաները եւ դարձեալ աւետարանական պիտի ըլլանք, թէեւ թերեւս ոչ այնքան պարզ մեր պաշտամունքի կերպին մէջ, որքան որ բողոքականներն են»:

Լուսաւորչական եկեղեցւոյ աւետարանականութեան դէմ որդեկրած կեցուածքը զօրաւոր կերպով յայտնուեցաւ ռուսական սահմանէն անդին՝ Ռուս Օրթոտոքս եկեղեցւոյ կողմէ: Հոն ստացուած կառավարական աջակցութեամբ, ռուսական եկեղեցին կրնար բացարձակապէս արդիւնէ իր հօտէն հեռացում, պատմել հերձուած, եւ մերժել օտար եկեղեցականներուն երկրին մէջ բնակութեան արտօնութիւն, կամ նոյնիսկ մուտք, բացի շատ ծանր պայմաններու տակ: Այսուհանդերձ, ազդեցութիւններ կը դորձէին: Տարբեր լեզուներով տպուած Աստուածաշունչը լայնօրէն կը ցրուէր երկրին մէջ, Սուրբ Մինոտի հասնութեամբ: Գերման բողոքական միախոնարներ Աշիքսանդր Ա.ի մէկ հրովարտակովը արտօնուած էին աշխատելու Կովկասի խալաններուն մէջ: Թէեւ տրուած արտօնութեան պայմանները հայերու մէջ աշխատելով խախտուած ըլլալուն Նիքոլա Ա.ի կողմէ երկրէն վտարուած էին, բայց ցանուած սերմերու հետեւանքով աւետարանական բաւական զօրաւոր համայնքներ հաստատուած էին Կովկասեան լեռներու ճիւղ հարաւը զսնուող աշխարհան փայրերու մէջ: Երբ Կարսը 1877-1878ի ռուս-թրքական պատերազմէն առաջ թրքական հող էր, բողոքական վարժարան մը յաջողապէս կը գործէր: Այդ քաղաքին Ռուսիոյ զինուորէն ետք, աւետարանականներու խմբակը արտօնութիւն ստացաւ առաջուան ձեւով շարունակելու իր դոյութիւնը: Յետագային այս եւ կարգ մը ուրիշ համայնքներ իրարու միանալով արտագաղթեցին խալաններու կողմէ պարտուած շրջան մը եւ ստացան կառավարական ճանաչում: Ասիկա ծանօթ էր «Բողոքական Գաւա Գալստ զիւղ» անունով: Բարձրագույն առիթներով այցելեցի այս խումբերուն: Այսպիսի շրջապատներուն միշտ կը դռնը

ւէի ուսական ոստիկանութեան զիտող աչքին տակ եւ անգամ մը Էջմիածնի մէջ որոշապէս աղքատարուեցաւ ինծի նաշտընիկին (տեղական կառավարիչ) կողմէ թէ հսկողութեան տակ երկրէն պիտի վտարուէի եթէ երեք հոգի հաւաքէի ժողով դուժարելու: Սոմարի մէջ բարեկամներս տեղեակ պահեցի եղած սորառնալիքի մասին, եւ ըսի որ չէի վստիսար անկէ աջ կը վախնայի անոնց վրայ ունենալիք հետեւանքներէն:

- Եկած էք Աւետարանը քարոզելու, մեզի ըլլալիք վախը չ'արգէլելը ձեզ, եղաւ սրտասխանը:

Այն տեղի եւ Էջմիածնի ժողովները դոժարուեցան, անարգել: Այս խումբերուն տրուած յաճախակի այցելութիւնները ներշնչումի աղբիւր էին ինծի, եւ ես մեծ յոյսեր սնուցի անոնց հանդէպ:

Ատանայի մէջ աւետարանական ճիղը սկսաւ 1853ին: Ընդդիմութիւնը, թէեւ զօրաւոր, բայց էրզրումի եղածին չափ բուռն չէր: Առաջին աւետարանիչներէն մեկը ձերբակալուելով իշու մը վրայ կը նստեցուի դէմքը դէպի ետեւ դարձուած, եւ քաղաքէն դուրս կը քուռի ամբոխի մը կողմէ, որուն առջեւ կը քալէր ձեռքին տակ աւել մը բարձր բռնած սափրիչ մը, ցոյց տալու որ քաղաքը մաքրուած էր բողոքականութենէ: 35-40 տարի ետք կար բողոքական եկեղեցարան կազմակերպութիւն մը, որ ունէր շուրջ հազար հոգինոց սրահ մը: Համայնքներու յարաբերութիւնները այնքան լաւ էին որ երբ այս եկեղեցին այրուեցաւ ջարդերու շրջանին, լուսաւորչական եկեղեցոյ պատասխանատուները իրենց եկեղեցին դրին բողոքականներու տըրամադրութեան տակ որ կարենային պաշտամունքի համար հաւաքուիլ ամէն Կիրակի կէսօրէ ետք:

Այս դիրբութիւնը շարունակուեցաւ մինչեւ բողոքական եկեղեցոյ վերաշինութիւնը: Շատ յատակ կերպով կը յիշեմ աւետարանական համայնքին լուսաւորչական եկեղեցոյ մէջ ունեցած վերջին ժողովը: Ամերիկեան Պորթի ներկայացուցիչ Տոքթ. Գորնիլլըս Փեթընի այցելութեան օրերուն էր: Այնպէս պատահեցաւ որ նոր նշանակուած վարդապետը նախորդ օրը ժամանած էր: Այդ թեմին նշանակուած ըլլալը պիտի յայտարարուէր այդ առաւօտ: Կարգադրուած էր որ բողոքականներու վեր-

ջին պաշտամունքը պիտի կատարուէր լուսաւորչական առաւօտեան պաշտամունքին հետ միասին: Ժամը եօթին եկեղեցին լեցուած էր, թերեւս աւելի քան 3000 (երեք հազար) հոգի հաւաքուած էր: Լուսաւորչական պատարապէն ետք, վարդապետը ներկայացուց բողոքական հովիւը, վերապատուելի Աշճեանը, որ խօսեցաւ թուրքերէն: Ապա ամերիկացի միսիոնարը խօսեցաւ հայերէն, որուն յաջորդեց Տոքթ. Փէթընի ուղերձը, զոր հովիւը թարգմանեց: Գրեթոննական միութեան շուրջ յարմարագոյն ժամանակին խօսուած քարոզ մըն էր:

Բարեկամեցուցութեան զարգացող այս վերաբերումը հնարաւոր դարձուց որ մեծ թիւով հայեր յաճախեն բողոքական վարժարաններ: Աշխարհարար Ատուածաշունչը այլևս արզիլուած չէր: Բարձրագոյն ուսման պահանջը հնարաւոր դարձուց վարժարաններու եւ զոյգճներու զարգացումը, այնպէս ինչպէս որ կը տեսնենք զանոնք այսօր:

Բայց եկեղեցական միութեան ամէնէն քաջալերական փորձառութիւնս ունեցայ, երբ, Ատանայի ջարդերէն ետք, զըրիստոնեայ եօթը տարբեր համայնքներու պատկանող խումբ մը մարդիկ յանձնախումբի մը մէջ միասնարար աշխատեցան: Անոնք կը պատկանէին տարբեր ցեղերու, կրօնական համոզումներու եւ ծխերու, ուր այս բաժանումները ոչ թէ սահմաններ են, այլ պատնէշներ - հայ լուսաւորչական, հայ կաթոլիկ, սուրիացի կաթոլիկ, քաղզական կաթոլիկ, հին սուրիացի, յոյն օրթոտոքս եւ բողոքական: Այս մարդիկը ցոյց տըւին որ մարդասիրական մղում մը կրնար նախադասուիլ եկեղեցական նախադաշարումներէն: Նուազ քաջութիւն ցոյց չտըւին անոնք վտանգաւոր պայմաններու տակ: Երբ բանտերը լեցուած էին քրիստոնեայ բանտարկեալներով եւ հանրային կարծիքը զօրաւոր կերպով այն կարծիքէն էր թէ քրիստոնեաները ըմբոստ կեցուածք մը օրկեղրած էին եւ կը դաւադրէին տեսակ մը ինքնավարութեան կամ անկախութեան աիրանայու, անոնք միասնարար բողոքեցին չարամիտ այս ամբաստանութեանց դէմ եւ մեծ ազդեցութիւն ունեցան, որով փոխուեցաւ այս հարցին կապակցութեամբ կարգմուտը իսլամ մտածելակերպը: Հետեւեալ նամակը փաստ մըն է ջարդերէն ետք եղած նը-

իրատուութեանց հանդէպ այս մարմիններուն զգացած գնահատանքին,

Առ Վերստպատուելի Ու. Ն. Զէյմովըրդ, նախագահ Միջազգային Նոպատամատոյցի Յանձնախումբին, Աստանա:

Յարգելի Տէրար,

Խորապէս երախտապարտ ենք անցեալ Ապրիլի ջարդերուն հետեւանքով քրիստոնեայ համայնքներուն ենթարկուած ազէտներէն ետք բարեսէր բարեկամներու կողմէ այս քաղաքի եւ շրջանի ժողովուրդին հանդէպ ցոյց տրուած համակրութեան եւ եղած աջակցութեան համար: Ոչ թէ սրպէս քահանան եւ Ղեւտային, այլ սրպէս բարի Սամարացին, անոնք փութացին նոպատուելու անասելի տառապանքի եւ քանդումի ենթարկուած ժողովուրդին: Յարժար ժամանակին եղած մեծ ու փոքր նըւերները, որոնք մեծ գումար մը կազմեն, յանձնուեցան Առանայի եւ Պոլսոյ Նոպատամատոյցի Յանձնախումբերուն եւ Պէրուլի Ամերիկեան Կարմիր Խաչի նման կարող եւ սրբակէտ մարմիններու կողմէ, որոնք շատ արդիւնաւորապէս ծառայեցին այն նոպատակին, որուն համար հիմնուած էին: Ի փոխարէն ոչինչ ունինք մատուցանելիք՝ բացի սրտատուութեան ըզգացումի մեր խորին սրտայայտութեան եւ սրտազին երախտազրուութեան հանդէպ բարեկամներու - այլ թէ կին - որոնք այնքան տոտատաձենօրէն սատարեցին, եւ յանձնախումբի անդամներուն, որոնք Հաղարսպետ Տառթի-Ուալիի նախագահութեանը տակ եւ աւելի ուշ ձեր իսկ նախագահութեանը տակ հիմնադրամը տեղւոյն վրայ յանձնանկեցին:

Որով՝ մենք, քրիստոնեայ զանազան համայնքներու հոգեւոր պետերս, յանուն մեր ժողովուրդին, կը փափաքենք արտայայտել սրտազին երախտազրուութիւնն ու շնորհակալութիւնները եւ կը հայցենք ձեզմէ որ ըջարի ըլլաք այս արտայայտութիւնը փոխանցել բարեկործ նուիրատուներուն եւ մարդկութեան անունով զորքը կատարած Յանձնախումբին:

Անգազար ազօթեւոր որ ամէն լաւ արարքի Մեծ Վարձատրողը օրհնէ եւ վարձատրէ զիրենք, իրենց բարեացակա-

մութեան, բարեսէր նուիրատութեան եւ համակիր աջակցութեան համար,

կը մտնեմ,
(Ստորագրուած)

ԵՍ.ԶԱԿ ԽՈՊԱՅԵԱՆ - Հայ կաթողիկոս Կիլիկիոյ,

ԵՐՍԷՆ ԵՄԵՆԻՃԵԱՆ - Քահանայ եւ ներկայացուցիչ Ատանայի Հայ Առաջնորդի

Հ. Հ. ԱՇՃԵԱՆ - Հովիւ, բողոքական եկեղեցիի,

ՀԱՅՐ ԱՖՐԱՀԱՄ - Քահանայ եւ ներկայացուցիչ յոյն օրթոտոքս եկեղեցւոյ մետրոպոլիտի

ՊՕՂՈՍ ԹԵՐԶԵԱՆ - Եպիսկոպոս Հայ կաթողիկէ եկեղեցւոյ,

ԷՂ ՔԱՍ ՄԱՆՍՈՒՐ - Քահանայ եւ ներկայացուցիչ Հին Սուրիական եկեղեցւոյ Պատրիարքի,

ԷՂ ԽՈՒՐԻ ՓԻԼԻՊՈՍ ՇԱԲԻՄԱՂ - Քահանայ եւ ներկայացուցիչ Յոյն Սուրիական կաթողիկէ եկեղեցւոյ Պատրիարքի,

ԷՂ ՔԱՍ ՍԹԵՅԸՆ ՄԱՔԱՊՊ - Քահանայ եւ ներկայացուցիչ Քաղկէական կաթողիկէ եկեղեցւոյ Պատրիարքի:

(20 Յունուար 1910)

Այնպէս պատահեցաւ որ ես պատասխանատու էի կըզբոմի միսիոնի գործին, երբ լրացաւ այդ քաղաքին միսիոնարական գործին յիսուներորդ տարին, եւ ապա նոյն բանը պատահեցաւ երբ պաշտօնով Ատանա փոխադրուեցայ: Որով՝ ինձի վիճակուեցաւ դրել իւրաքանչիւր վայրի յիսուս տարուան տեղեկագիր: Հոս կը մէջբերեմ Ատանայի տեղեկագիրին վերջին տողերը:

«Միսիոնարներու նոպատակը բողոքականութիւն հաստատել է՛ք, իսկ Ատանա շտաբը ժողովուրդին ձեռքը գնել խոստում լեզուով եւ կարգադրութիւն ընել որ ըստ կարեւոյն ամէն անձաւ ու շաղրութեամբ ուսումնասիրէր զայն: Ուսումնասիրաներու հաստատումը ընդհանուր կրթութիւնը բոլորին մատչելի պիտի դարձնէր, այսպէսով լատիւոյնս տարգմանելով քրիստոնէական նկարագիրը: Այս բոլորով միասին, այսպիսի ոգի մը

ժողովուրդին մէջ զարգացնելը. հնարաւորութեան սահմանին մէջ շատ շուտով դանձնք պիտի առաջնորդէր ստանձնելու աշխատանքի ամէն կարգի պատասխանատուութիւն, որ իրբև հիմունքէր Աւետարանական յառաջդիմութիւնը:

Վերը յիշուած է երգրոսմի մէջ կատարուած դործին արձանագրած յառաջդիմութիւնը: Ատանայի մէջ աւետարանական աշխատանքները սկսան 1853ին: Երգրուած կը գտնուէր Հին Կտակարանի հոգին վրայ, Արարատ լեռան շրջանը. Ատանան կառուած էր Նոր Կտակարանին հետ, փեղրոնական Թուրքիոյ միախնը, որուն համար Ատանան վաղան մըն էր, կը համադրատախանէ մեծ մասամբ այն երկրամասին, զոր Պօղոս Առաքեալ «Սուրիա եւ Կիլիկիա» կոչած է Գործք Առաքելոցի ժե. Աի մէջ: Անտիոք, ուր (Յիսուսի) աշակերտները ուսմին անդամ ըլլալով քրիստոնեայ կոչուեցան, կը գտնուի Ատանայի դիմացի Իսուս ծոցը. իսկ Թարսուս, Պօղոս Առաքեալին ծննդավայրը, կը զբառնուի մօտաւորապէս 25 մղոն հարաւարեւմուտքը:

Կէս դար առաջ միախնի աշխատանքը Ատանա հաստատուած ատեն աւետարանական եկեղեցիին ունեցած շրջանակի 20 հոգիէն հինգը անդամակցած են անոր, ինչ որ կէս դար ետք ուելալով ունեցած է հազար հոգիինոց համայնք մը, որմէ 363 հոգի անդամակցած են եկեղեցւոյ: 1906ին եկեղեցւոյ ծախքերը հոգալու համար եղած նուիրատուութեանց ընդհանուր գումարը հասած է 1600 տողարի: 1909ին սովեհափայլուն յոյսեր կային իմ հոգաձուլութեան տակ գտնուող աւետարանական տասը եկեղեցիներու համար: Անոնք բոլորն ալ ինքնարաւ դառնալու վրայ էին, բայց 1909ի Զարդին ատեն, որ տարածուեցաւ այս ամբողջ շրջանին վրայ, հովիւներու եւ ուսուցիչներու համաժողով մը գումարուելու վրայ էր, եւ 21 հոգիէն 19 սպաննուեցան եւ ատենց համայնքները Զարդուեցան:

Զարդի կացութեան անմիջական պահանջը ստիպեց որ հիւանդանոցային աշխատանք սկսէր, անհրաժեշտ կարիք մը՝ նոյնիսկ սովորական պայմաններու տակ: Որպէս սովի նպատակ միջերանոցներ շինուած եւ միախնի պատկանող շէնք մը գործածուեցաւ, եւ երբ կարմիր Սաչի եւ նպատաստաւորցի աշխատանքը դադրեցաւ, հիւանդանոցը գոյատեւեց - մնայուն հիմ-

նարկ մը՝ նոյնիսկ պատերազմի ամբողջ տեսուութեան: Աներկ-կացի բժիշկ մը, Տոքթ. Սիրիլ Հաս, 17 տարուան իր ծառայութեամբը իրականացուցած է շքանորութեամբ եւ հիւանդութեամբ առկուսն այս շրջանին համար երազուած բժշկական այս կեդրոնը:

Տոքթ. Հաս եւ իր օգնականները բժատենդէ վարակուեցան Քութ-էլ-Ամարայի պատերազմական հիւանդ գերիները խնամած ատեն: Թէեւ կեանքը վտանդուած էր, բայց ապագինեցաւ: Ամբողջ քաղաքին մէջ վախկած մեծ յարգանքը մասնաւորաբար այս ժամանակ յայտնուեցաւ, երբ Թուրք կառավարիչը ինք անձամբ օգնեց անոր ապաքինումին, կարգադրութիւն ընելով որ ամէն օր սառ ստանար բժիշկը: Նկատելով որ սառը պէտք էր բերուէր մօտակայ լեռները գտնուող Կիլիկեան Դուռերու Անցքէն, միմիայն բարձրագոյն հեղինակութեան շահը հնարաւոր դարձուց դայն: Զինադադարէն ետք Տոքթ. Հասի Ամերիկայէն բացակայութեան շրջանին, մինչեւ իր վերադարձը հիւանդանոցը վտանգուեցաւ. Նիրբ Իսթ Ռիլիֆին:

1914ի պատերազմէն ճիշդ առաջ Թուրքիոյ Ամերիկեան Առաքելութեան Յանձնախումբը Արեւելեան, Կեդրոնական եւ Արեւմտեան Թուրքիոյ ամբողջ շրջանի միախններուն համար սուտ հետեւեալ թուանշանները.

Միսիոնարներ	180
Տեղացի աշխատաւորներ	1,300
Եկեղեցիներ	163
Քարոզչութեան այլ վայրեր	333
Յարարելութիւն պահող անձեր	15,000
Բողոքականներ	55,000
Ուսանողներ եւ աշակերտներ	26,000
Տարեկան նպաստ հայ եկեղեցիներու	տողար 200,000

Միմիայն կեդրոնական Թուրքիոյ միախնի սահմաններուն մէջ կային 60 աւետարանական համայնքներ՝ 23 հազար անդամներով: Այս համայնքներէն 37 կազմակերպուած եկեղեցիներ էին 6,600 անդամներով: Կային 400 տեղացի աշխատաւորներ: Վարժարաններու եւ բարձրագոյն ուսումնարաններու

մէջ կ'ուսանի ու թը հազար հարի: Տեղական նուիրատուութեանը ընդհանուր գումարն էր 150,000 տարաբար:

Պատերազմական շրջանի աքսորէն եւ ջարդէն ետք միախոնի այս գործը աւերակներու խառնիճազանէ կ'ոյտի մը կը նմանէր: Հոս-հան կային ամերիկեան միսիոնարական հաստատութիւններ, որոնք անորոշ գոյութիւն մը պահպանելով հանդերձ սքանչելի գործ կ'ընէին, բայց իրրեւ հակադրութիւն՝ կը շեշտէին կայսրութեան ահաբեկի բնոյթը: Մարդ ի զուր կ'որոնէր քրիստոնեայ այր մը կին աշխատատեղերու աղետական այն խումբը, որ անվահեր ծառայութիւն մատուցած էր ճշմարտութեան եւ Արդարութեան թաղաւորութեան համար: 1918ին Ատանայի շրջանակի բողոքական այս տասը համայնքներու 2400 անդամներէն միմիայն 900-ը վերադարձան աքսորէն:

Այսուհանդերձ, իրենց առաջին մտածումներէն մէկը եղաւ իրենց եկեղեցիներուն եւ զոյրոցներուն վերակազմակերպութիւնը:

1919-ին աշան Այնթապի մէջ կեդրոնական Թուրքիոյ զանազան եկեղեցիներու միսիոնարներէն, հովիւներէն եւ պատգամաւորներէն բաղկացած համաժողովի մը ներկայ էին զանազան եկեղեցիներէ 10 հովիւ, 9 քարոզիչ եւ 9 պատգամաւոր, որոնք միասնաբար կը ներկայացնէին միախոնի սկզբնական 37 եկեղեցիներէն 16ը: Ասոնցմէ զատ ներկայ էին չորս միսիոնարներ: Ընտիր եւ ներշնչիչ համաժողով մըն էր: Ո՛չ ոք մեղմէ կ'ակնկալէր որ այսքան մեծ թիւով աշխատողներ պիտի հաւաքուէին, եւ խոր գոհունակութիւն կը սենեկը որ շատեր վերադարձ էին ահաբեկի աղէտէն ետք, եւ լաւ վիճակի մէջ մտացած էին՝ հակառակ աննկարագրելիօրէն սաստիկ տառապանքին, որուն ենթարկուած էին: Հաւատքով զօրացած՝ աշխատանքի սկսան սրամարանական խորհուրդով եւ նուիրումով կարգ մը երեսօթիքներով հեռանկարը դրեթէ ճնշիչ էր, բայց ազնիւ արխութեամբ նկատի կ'առնուէր:

Ծրարկերը կ'ընդգրկէր վերակառուցումի շատ մը կենսական հարցեր: Որքան հոգեյոյժ էին եկեղեցիներէն ստացուած տեղեկագիրները: Ծրջան մըն էր, երբ վրդովումները պէտք էին գրայտել, իսկ իրողութիւնները պաղարինուութեամբ նկատի

առնուելու էին: Աքսորին նախորդող շրջանի թշուառութեան, ճամբու ընթացքին կեանքի բնաջնջումի, սպանդի, դրկանքի, կեանքի պայքարի եւ այն քիչը որ մնացած էր, անպատասխին կեանքի զարչելի պայմաններուն եւ անսուազութեան եւ ներկայ ժողովուրդի մեծամասնութեան չքաւորութեան վերաբերեալ եզրած պատմութիւնները կարելի է եղական նկատել եւ կը ստիպէ որչա՞ մաղթելու Աստուծոյ շնորհը, որ նման ողբերգութիւններ զարձեակ տեղի չունենան:

Ատանայի մէջ, թէեւ միայն 900 բողոքականներ վերադարձան, բայց վերադարձեալ վեց վայրերու կիրակնօրեայ պաշտամունքներու միջին թիւն էր 1500, կիրակնօրեայ վարժարաններուն՝ 1900, իսկ վարժարաններու աշակերտութեան թիւը՝ 1000: Բայց երկու տարի չանցած՝ այս ժողովուրդը դարձեալ ցրուեցաւ: Քրիստոնեայ ժողովուրդին յոյսերը ի դրեւ եւ լան, երբ Պրանսա կիլիկիան քեմալականներուն զիջեցաւ:

Հակառակ կիլիկիան ստանձնելու նպատակով նշանակուած երկու թուրք պաշտօնատարներու լաւառոյն ջանքերուն, հայերը քանդուածային ոտքի ելան եւ տեղի ունեցաւ մեծ արտազայթը: Ատանա հաւաքուած աւելի քան յիսուն հազար տարազըրեալներ ճամբայ ելան առանց զխնալու թէ ուր պիտի պատըսպարուէին: Աննկարագրելի էին տառապանքը, չքաւորութիւնն ու կորուստը: Այս վերադարձներուն մեծամասնութիւնը այսօր կը կազմէ Սուրիոյ մեծ զաղթական բնակչութիւնը: Հետաքրքրական է նշել այս զաղթականներուն բերած նպաստը: Իրենց չքաւորութեան մէջ անոնք ցուցարբերեցին ազատամտութիւն՝ եկեղեցւոյ եւ զոյրոցի դործին, ինչպէս նաեւ բարեգործութեան հանդէպ: 1924ի վերաբերեալ տեղեկագիրները ցոյց կուտան որ հանդանակութեանց ընդհանուր գումարը հասած էր 15,344.35 տարաբար:

Թուրքիոյ մէջ ունեցած 45 տարուան աշխատանքէս ետք ոչինչ կայ ցոյց տուող որ կազմակերպեալ եկեղեցիները եւ զըրոցներ մնացած են: Այսօր ոչ մէկ հատը բոյութիւն ունի այն 25-30 աւետարանական համայնքներէն, որոնց մէջ աշխատե-

ցայ: Այսուհանդերձ, մարդ մեծ դոճուհուհիներն կը զգայ երբ նկատի կ'ուեննայ բարոյական արժեքներու յարատեւութիւնն ու կայունութիւնը, որոնք դրոշմուած էին ժողովուրդին միտքին եւ սիրտին մէջ:

Աւետարանի դործին յաջողութիւնը չի կայանար միայն եկեղեցիներու, դպրոցներու եւ հիւանդանոցներու նման հաստատութեանց կազմութենէ - թէեւ ասոնք անհրաժեշտ են դործին համար - այլ հիմնական բարոյական ըմբռնման զարգացումէն, որ հիմը կը կազմէ անհատին բարոյական եւ հոգեկան նկարագիրին: Աւետարանի հրաւերը երկրագունդի եզրին չափ լայն է - «ո՛վ որ կը փափաքի, թող գայ» - բայց դարձադուռին չափ նեղ, մտէք նեղ դուռէն»: Եթէ հնարաւոր ըլլար աւելորդարանութիւնները դուրս վանել մեր քրիստոնէութիւն կոչածէն, եւ ըստ այնմ բարեփոխել միջազգային յարաբերութիւնները, ինչքան տարբեր աշխարհ մը պիտի ըլլար այս մէկը:

Թէեւ կ'ենթադրուի որ միսիոնարի մը դործունէութիւնը կը բաղկանայ եկեղեցիի, դպրոցի եւ հիւանդանոցի աշխատանքէ, բայց յետամնաց երկիրներու մէջ անոր ժամանակին մէկ մեծ մասը կը յատկացուի նպաստամատոցի դործին: Սով, համաճարակ, քաղաքական եւ ցեղային ատելութիւններ կը ստեղծեն այնպիսի կացութիւններ, որոնք բարեշուք կը պահանջեն: 1892ին չրջան մը Էրզրումի մէջ հնդկատի օրական 70 պարագաներ պատահեցան: Չարագոյց կեղեքումին, աղքատութեան եւ խռովութեան յաջորդող ջարդի չրջանը կացութիւնը աստիճանաբար վատթարացուց: Նպաստի յանձնարարութիւնը կազմուեցաւ եւ Ամերիկա ու Անգլիա դոնուող բարեգէտ անձնորու օգնութեամբ որոշ դործ մը կատարուեցաւ՝ ամսեկու համար ահուելի տառապանքը: Քաղաքին մէջ օրական երեք հազար հոգի կը կերակրուէր: Անկողին եւ վառելանիւթ կը բացուէր եւ հնարաւորութեան սահմանին մէջ ուտելիք՝ հեռու որ վայրերու մէջ: Այդ օրերուն դրուած նամակ մը սպայէս կը նկարագրէ կացութիւնը 1896 Փետրուարին:

- Այսօր աշխատանքի ծանր օր մը եղաւ մեզի: Ամէն շա-

բաթ կը փոխենք հացի տոմսերը: Երկուշաբթի օր հացի աւելի քան 800 տոմս տուինք: Այս 800 կիները, որոնցմէ խրաքանչիւրը կը ներկայացնէ ընտանիք մը ընդամէնը 3500 հոգի - եկան իրենց տոմսերը առնելու. ուրիշ 2300 հոգի եւս եկաւ տոմս տանելու յոյսով: Ասոնցմէ զատ շատեր եկան մօտակայ գիւղերէն ցորեն առնելու: Այնպէս որ, այսօր 1200-1500 հոգի մտաւ մեր տունը: Այսօր եկող եւ ցորեն ստացող գիւղացիները կը ներկայացնէին 1500 չքաւորներ, այնպէս որ, այսօրուան աշխատանքը կը բաղկանար շուրջ 5000 հոգիի մէկ շարթուան սնունդարարութիւն բաժնելէ: Կ'աշխատինք այս նահանգին մէջ ամբար 1000 սթերլին ծախսելու հիման վրայ: Ասիկա օգնութիւն ստացող իւրաքանչիւր անձի յատկացուած անուսաղութեան սնունդարարութիւնն անդին է՝ անցնելի: Բայց կան շատեր, որոնք որեւէ օգնութիւն չ'ըլլար: Հաշուէն դուրս կը մնան այն հազարաւորները, որոնք անկողնոյ կողմած շունին այս սաստիկ օգին: Բացարձակապէս անկարելի է հայթայթել անհրաժեշտ կարիքներուն նոյնիսկ մէկ փոքր մասը: Ամիսէ մը, շատ պիտի աւելնայ զոսմի մեր կարիքը, եւ նոյնիսկ ձմեռը վերջանալէ ետք ցանքի ցորենի համար օգնութիւն պիտի ուղեն, աշխպէս սովը գործը պիտի ամբողջացնէ զալ ձմեռ»:

Թերեւս աշխատանքիս այս հանդրուանին էր որ սերտ յարաբերութեան մէջ մտայ անձերու հետ, որոնք բրիտանական կառավարութիւնը կը ներկայացնէին հիւպատոսական սպասարկութեան մէջ: Ասոնք բարձրագոյն նկարագրով եւ հայրենասիրական նուիրումով անձեր էին, որոնք տաղնապայից եւ խաղաղ ժամանակներուն իրենց կարելին ըրին երկրին եւ ժողովուրդին բարօրութեան համար:

Մեծ հաճոյքով է որ կը վերլուծեմ Իվերիթի, Կրէյվի, Քամպելլի, Մեսիլի, Տատթի-Ուայլիի նման անձերու եւ ուրիշներու հետ ունեցած յարաբերութիւնս: Է. Ա. Քամպելլի աշխարհու դարձաւ կրքրումի ջարդէն առաջ եւ վերջ մատուցած ծառայութեամբը: Պաշտօնով Չմիւսնիս փոխադրուեցաւ, ուրիշ գրեց հետեւեալը.

Նորին վեհախառուքեան Ընդհանուր Հիւպատոսաքիսմ
Չմիւռնիայ, 1 Օգոստոս 1896

Սիրելիդ իմ Պր. Չէյմպլըզ,

Շատ շնորհակալութիւն Յուլիս 4 թուակիր ձեր նամակին եւ ինձի շնորհած նոր պատիւին առիթով ձեր շնորհատրութեանց համար: Նկատելով որ էրզրումի մէջ ինձմէ ահլընկալուած ծառայութիւնները սատարած են որ ստանամ ճանաչումի այս նշանը, անիկա ինձի միշտ պիտի յիշեցնէ հետաքրքրութեան եւ յուզումի օրերուն ինձի հետ ունեցած ձեր անձնական յարաբերութիւնը, երբ, ինչպէս որ պատշաճ վայրը արձանագրուած է, անդնահատելի աջակցութիւնն ստացայ ձեզ մէջ՝ շնորհիւ ընթացիկ հարցերուն մէջ ձեր ունեցած մեծ փորձառութեան:

Միտն իրենամ յուսալ որ յարմար առնին վարձատրուիր դժուարին պայմաններու տակ պարտականութիւն կատարած ըլլալու զգացումէ մը աւելի...

Կը ցաւիմ տեղեկանալու թէ որքա՞ն նուազած է նպաստի հիմնադրամը, որովհետեւ կը վախնամ որ խեղճ թշուառները կը գտնուին որեւէ ժամանակ Վզածին շափ գէշ վիճակի մէջ: Հոս, ինձի կ'ըսեն թէ Ուրֆայի մէջ եւ շուրջը եւ ալ վարդերու նպաստին համար տակաւին նուէրներ կ'ըլլան:

Կը յուսամ որ վանի մէջ պատահած վերջին դէպքերը պիտի շխտեալեն էրզրումի եւ շրջակայքին յարաբերական խաղաղութիւնը եւ թէ ուրիշ դժուարութիւններ պիտի խնայուին ձեզի:

Ձերդ՝ անկեղծօրէն,
Հ. Ա. ՔԱՄՊԸՐՊԷՉ

Պր. Ռ. Ու. Կրէյվը (Գ. Մ. ծ.), զիւանադիտական մեծ կարողութեան տէր անձ մը, որուն իմաստութիւնն ու համակրութիւնը քաջալերութեան տեսական աղբիւր մը կըլլան էին էրզրումի մէջ՝ փորձարար շրջաններուն, միշտ ազնիւ գնա-

հատութիւն մը ցուցաբերած է իրեն հետ մեր ունեցած յարաբերութեան հանդէպ:

Փ. Հ. Հ. Մէսիի հետ մեր ծանոթութիւնը սկսու էրզրումի մէջ եւ ուրախ էինք որ շարունակուեցաւ Ատանայի մէջ: Երկրին հանդէպ ունեցած հետաքրքրութիւնը - քողարկուած սիրտի սիրով մը - սպասաւ եղաւ որ անգամ մը կառավարիչը՝ աչքերը քթթելով ինձի ըսէ.

- «Գնդակետ Մեսին շատ կը սիրէ ձկնորսութիւնն ու որսորդութիւնը, բայց յաճախ շատ սրս էի բերեր:

Ատանայի ջարդերէն ետք Միջազգային Նպաստի Յանձնախումբ անունով նպաստի յանձնախումբ մը կազմուեցաւ, որ բաղկացած էր հետեւեալներէն.

Հազարապետ Ս. Հ. Մ. Տաութի-Ուայլի (Գ. Մ. ծ.) - նախագահ, բրիտանական փոխ հիւպատոս, որուն Յուլիսին որպէս նախադաս յաջորդեց Ռ. Ն. Չէյմպլըզ:

Էտուըրա ծ. Նէյթֆօլդ - փոխ-նախագահ, ամերիկեան հիւպատոս:

Վերապատուելի Ու. Նեսպիթ Չէյմպլըզ - Ատենազպիր, ամերիկացի միսիոնար:

- Հայր ծ. Ճօուրն - Յիսուսեան հայր:
- Մ. Կրասպուքի - Տնօրէն օսմանեան դրամատան:
- Ռիխարտ Շիֆօքէլ - Տնօրէն գերմանական դործարանի:
- Վերապատուելի Հ. Հ. Ալճեան - Բողոքական հովիւ:
- Գերապայծառ Պօղոս Թերզեան - Հայ կաթողիկէ եպիսկոպոս:

Պր. Քոսթի Թրիփանի - Յոյն, «Թրիփանի եղբայրներ»էն: Տէր Արսէն Եմենիճեան: Հայ առաջնորդական փոխանորդ:

Ռաս Մոնսուր - Հին սուրիական ներկայացուցիչ: Իպրահիմ էֆենտի Սատլը - Իսլամ երեւելի, պատրիարքական պատուիրակութիւն:

- Կարապետ էֆենտի Այճեան - Պոլսահայ երեւելի:
- Օհանէէն էֆենտի Չայեան - Պոլսահայ երեւելի:
- Սուրէն էֆենտի - Պոլսահայ երեւելի:
- Խնդիր էֆենտի - Պոլսահայ երեւելի

Հիւսէյլին Տայիմ պէյ - Թուրք սպայ :
 Կրթական Տնօրէն Հֆենտի (Իսրամ) - Կառավարական
 պաշտօնատար :

Պր. Ռ. Չեֆի - Բրիտանական փոխ-հիւպատոսի տեղակալ :
 Երկու մեծ ջարդերու միջև. նպատակ գործը կազմակեր-
 պելով հարկէր սկիզբ մը ընել միայն տասը ոսկի վարկով մը :
 Երկրորդ ջարդէն ետք օրական քսան հազար հողի ուտելիք
 բաժնուեցաւ : Շատ ճարտար ծառայութիւն մատուցուեցաւ այս
 աշխատանքին մէջ բրիտանական «Սուրիթ շոքըր» եւ «Միներվա»
 ռազմանաւերու սպաներուն եւ զինուորներուն, ինչպէս նաեւ
 դերմանական «Համպուրկ» եւ «Լիւպէք» ռազմանաւերու սպա-
 ներուն կողմէ : Երկու ամիս ետք Կառավարական նպատակ
 Յանձնախումբը, Սուպհի փաշայի նախադասութեան տակ, ըս-
 տանձնեց քաղաքի եւ նահանգի կարօտեալներուն ուտելիք հայ-
 թայթելու դործը :

Արտակարգ պայմաններու պահանջին գոհացում տալու
 նպատակով անմիջապէս հիւանդանոցներ կազմակերպուեցան :
 Նաեւ առօրեայ քլինիքներ բացուեցան դեղօրայք եւ ուտելիք
 բաժնելու համար : Շատ արժէքաւոր ծառայութիւն մատուցին
 հետեւեալները .

Տիկ. Տաութի-Ուալլի, Օրիորդ Ուտլիս, Ուեպ քոյրեր,
 Պր. Թրօուպրիճ եւ ուրիշներ ամերիկեան միսիօնէն, Տոքթ.
 Տորմըն (Պէյրութէն), Տոքթ Փիլիլլը (Մերսինէն), Տոքթ. Սա-
 լիպեան (Ատանայէն), նաւային վիրարոյթներ Քոնըլ եւ Կոու-
 պլլ, Միլըր եւ Մաքիւսալըր (բրիտանական եւ ամերիկեան
 ռազմանաւերու միւսորներու հետ աշխատող), դերմանական եւ
 Փրանսական ռազմանաւերու վիրարոյթները, Օրիորդ Տէյլիս
 (բրիտանական սուրիական միսիօնէն), Օրիորդ Լա Ֆոնթէն եւ
 Օրիորդ Երկանեան (Չմիւռնիայէն), դերմանացի սարկաւազու-
 հիները եւ Տոքթ. Փանուրիատիս, Փրանսացի կաթոլիկ քոյրերն
 ու յիսուսեան հայրերը :

Ռիխարֆտ Շթէօքէլի ներկայացուցած դերմանական գոր-
 ծարանի բարեկամները, որոնք բարձրովին կամաւորապէս իրենց
 ծառայութիւնները մատուցին բժշկական այս նպատակին, ինչ որ
 այլապէս բացարձակապէս անկարելի պիտի ըլլար Երկրորդ ջար-

դէն ետք : Ընանձնախումբը նաեւ երախտապարտ էր Աւստրիա-
 կան ռազմանաւի սպաներուն եւ Աւստրիական Մերձուոր Արե-
 ւելքի թարգմանին, որ իր տունը փոխ տուաւ մեզի որ իրեն
 հիւանդանոց գործածենք զայն, եւ իտալական կառավարու-
 թեան՝ Նիթական օգնութեան համար : Այս կապակցութեամբ
 մնալուն ընտք ունեցող բան մը ի մտի ունենալով, Յանձնա-
 խումբը ամերիկեան միսիօնին փոխանցեց Ամերիկեան Կարմիր
 Խաչին ըրած հազար թրքական ոսկիի նուիրատութիւնը :
 Միսիօնը արդէն իսկ ունենալով այս նպատակին յատկացուելիք
 զօմարը, որուն վրայ աւելցուեցաւ Կարմիր Խաչի նուիրա-
 տութիւնը, Միջազգային Հիւանդանոցը կազմակերպուեցաւ
 միսիօնին կողմէ, իր արամազրութեան առկ գոնուող եւ այս
 նպատակին յարմար չէնքի մը մէջ : Ասիկա իր վրայ ստանձնեց
 անմիջական անհրաժեշտութեան պարագային ծառայելու նպա-
 տակով հիմնուած հիւանդանոցներու գործը, եւ զարձաւ ա-
 նոնց յաջորդը :

Կազմակերպուած որբանոցներ ուրիշ տեղ գոյութիւն ու-
 նենալուն, Յանձնախումբը զոհացաւ օգնելով այդ կազմակեր-
 պութեանց : Այս ձեւով որբեր զրկուեցան Մարաշ, Այնթապ,
 Պրուսա, Չմիւռնիա, Հաճըն, իսկ ոմանք ալ տարուեցան Ատա-
 նայի ամերիկեան աղջկանց զպրկվանքը : Այս ձեւով 600-700
 որբեր հաստատութիւններու մէջ նպաստ ստացան յանձնա-
 խումբէն :

Մօտաւորապէս 250 կիներ եւ աղջիկներ կային քաղաքին
 մէջ որ զրամ կը վաստկէին ճարտարարուեստական զործի մէջ
 եւ հաշիւ եղած էր որ նահանգին մէջ մօտաւորապէս 300-900
 հողի այս ձեւով իր ապրուստին առնուազն մէկ մասը կը շա-
 հէր : Քաղաքին մէջ կային երեք կեդրոններ, ուր ճարտարար-
 ուեստները կ'ուսուցուէին : Ասոնցմէ մէկուն մէջ իսլամներ եւ
 բրիտանեաներ միատին կ'աշխատէին : Միւս երկուքին մէջ բր-
 իտանեայ էին աշխատուորները :

Օսմանեան զրամատունէն Պր. Կրպուստիլի վերհանդու-
 թեան տակ ձեռք առնուեցաւ ժողովուրդը վերաբնակեցնելու

հարցը եւ 476 սենեակ վերանորոգուեցաւ, որով կարելի եղաւ նոյնքան թիւով ընտանիքներու բնակարան ապահովել: Ասոր շնորհիւ քեմփերը վերջնականապէս ցրուեցան՝ ի մեծ թեթեւացում անոնց՝ որոնք տաք օդին վրանի տակ կը բնակէին: Յանձնախումբը 2676 թրք. ոսկի ծախսեց այս գործին համար: Կառավարութիւնը վերաշինութեան համար շուրջ 150 հազար թրք. ոսկի ծախսած էր քաղաքին եւ նահանգին մէջ:

Շուրջ 1800 արհեստավորներու 4041 թրք. ոսկի բաշխումով արհեստներ վերահաստատուեցան, ինչ որ թաւանուած ու հրդեհուած շուկաները բաւական զբաղ գործավայրերու վերածեց եւ հնարաւորութիւն տուաւ հարիւրաւոր անձերու որ շահին իրենց ապրուստը:

Շատ մեծ էր անկողնոյ կազմածի համար եղած կարիքը: Սկզբնական շրջանին, Օր. է. Ուէպլի վերահսկողութեան տակ, անկողնոյ կազմած շինելու յատուկ կերպաւով միասին 20 հազար լիտրա բամբակ բաժնուեցաւ 7 հարիւր ընտանիքներու: Այս հանդրուանին բամբակի պաշարը սպառեցաւ: Աւելի վերջ ամբան, մաս մը բամբակ ապահովուեցաւ եւ 1500 ընտանիքներ օգտուեցան բաշխումէն: Անկողնոյ կազմածի կերպաս գրկուեցաւ Թարսուս, ուր Տոքթ. եւ տիկ. Բրիտթի այնքան աշխատանք տարած էին նորաստին գործին մէջ, ինչպէս նաև շարք մը գիւղերու համար: Առնուազն քսան հազար հոգի օգտուեցան այս բաշխումէն եւ 1740 թրք. ոսկի ծախսուեցաւ: Այսպիսով մեծ թիւով անկողնոյ ծածկոցներ գրկուեցան «Հայաստանի Բարեկամներու» եւ Լոնտոնի աստուածաշնչական երկիրներու միսիոնի օգնութեան ընկերակցութեան կողմէ: Ասոնցմէ մաս մը Հաճըն գրկուեցաւ եւ մաս մըն ալ բաժնուեցաւ հոս եւ շրջակայ վայրեր:

Կարեւոր քանակութեամբ հազուստ ստացուեցաւ Ամերիկայի հայերէն, Անգլիայէն եւ Թուրքիոյ կարգ մը տեղերէն: Ասիկա կ'ենթադրէր շատ աշխատանք եւ ուշադրութիւն՝ արդար բաժանում մը ապահովելու համար: Տեսնուեցաւ որ պղտիկ աշխատանք մը չէր ընտանիքներուն տրուած խոսքերով ինքններն

ու կատարուած քննութիւնները, ցանկերու կազմութիւնը, տոմսերու յանձնումը եւ ծրարներու պատրաստութիւնը, որպէսզի ընտանիքի ամէն անգամ օդակար բան մը ունենար:

Դրամական օգնութիւնը զարեցուեցաւ եւ պարտամուրհակ տանուեցաւ անոնցմէ որոնք կը կարօտէին պղտիկ գրամազլուի մը՝ Պորթի ձեռնարկելու համար: Այս ձեւով 200 թրք. ոսկի փոխ տրուեցաւ, համաձայն կարիքին՝ Տ, 10, 12 ամիսէն վերադարձնելու պայմանով, եւ դանձուած գրամը ի պահ կը գրուէր հիանդանոցի անուան:

Յանձնախումբին Պոլսէն զրկած 100 թրք. ոսկին բաժնուեցաւ այն ղազարակապաններուն, որոնք ի վիճակի չէին գործադրելու հողագործական գրամատան առաջարկած փոխատուութեանց պայմանները:

Կառավարութիւնը, Ընդհանուր Կառավարիչ ձեմալ պէյի պարկէշտ եւ կարող առաջնորդութեանը տակ, շատ բան ըրաւ անօթիները կերակրելու, անտունները վերաբնակեցնելու, ազարակապաններուն եւ վաճառականներուն դիւրին պայմաններով փոխատուութիւններ ընելու գործին մէջ: 4000 ոսկի յատկացուց ճարտարարուեստական ձեռնարկներու եւ կարգադրութիւններ ըրաւ այրուած եկեղեցիներու վերաշինութեան համար:

Հազարապէս Տաութի-Ուայլի, որ վիրաւորուած էր անգորբութիւնը պահպանելու իր հերոսական ճիւղին մէջ, նպաստի գործով զբաղող կազմակերպութեամբ հետեւեցաւ անոնց: Հոս մէջբերուած է նպաստի Յանձնախումբի տեղեկագիրին մէջէ իր նամակը:

ՀԱՉՍՐԱՊԵՏ ՏԱՌԻԹԻ-ՈՒՍԵՂԻՒՆ ԵՍՄԱԿԸ

Ատանձայէն մեկնելէս առաջ Պր. Չէյմպլըզ ազնուօրէն ինդրեց ինձմէ սր բան մը աւելցնեմ միջադաշին նպաստի մեր յանձնախումբի այս տեղեկագիրին: Սակաւաթիւ բառերու կարիք կայ, բայց պատիւ է ու հաճոյք երախտագիտութեան բան մը ըսել, որքան որ ալ անբաւական ըլլայ ան, անոնց՝ որոնք նիւթապէս օգնեցին եւ վստահեցան մեզի: Առանց բոլորիս անկեղծ եւ սրտապէն գործակցութեան, անկարելի պիտի ըլլար իրապէս պիտանի գործ մը ընել: Գերմանացի, Փրանսացի, իտա-

լացի, ամերիկացի, անգլիացի, ինչպէս նաև թուրք, յոյն ևւ հայ, մեր լաւագոյնը ըրինք ևւ նպաստի գործին մէջ բոլորս ալ լաւ բարեկամներ ենք: Միշտ հասոյք մը պիտի ըլլայ վերջիչէլ զայն:

Կը փախաքիմ ուրիշ կէտ մը ևւ աւելցնել բոլոր դաւա- նանքներու պատկանող օգմանեան հայրենակիցներուն վեհ խոհ- ալներու, իրենց երկրին իրական միութեան ևւ յառաջդիմու- թեան հանդէպ ունեցած սէրը ևւ տեսականորէն անոնց զիմազը- բաւած վիթխարի դժուարութեանց մէջ անոնց ունեցած համակ- բուցիւնը, որոնց նուազագոյնը անպոքի տգիտութիւնը չէր, որ հնարաւոր դարձուց Ատանայի ջարդը: Ներկայ ընդհանուր կա- ռավարիչի վարչութեան տակ կրնանք աւելի զուարթ միտքով մը վերջացնել մեր գործը:

Տակաւին կայ բան մը որուն մասին մտածելու ևւ աշխա- տելու ենք: Պահպանութիւնը մեր Միջազգային հիւանդանոցին, որ բաց է բոլորին առջև, ոչ ոքին զլանալով զայն՝ ցելի կամ դաւանանքի հետեւանքով, տեսական խաղաղութեան ընծայում մը:

Մերիկա, Գերմանիա ևւ Անգլիա զտնուող շատ մը ազնիւ մարդիկ յօժար էին երաշխաւորելու մեր հաստատելիք որեւէ որբանոցի մէկ կամ աւելի որբ տղոց ծախքերը: Բայց Ատանայի մէջ ի վիճակի չենք որեւէ որբանոց հաստատել: Ներկայիս այդ մասին որեւէ պահանջ չեն ներկայացներ մեզի, նկատելով որ ազդը կը մտադրէ շինել դաննք: Արդեօք հնարաւոր չէ՞ որ որ դը- թասիրտ անձեր, առանց որեւէ կերպով սահմանափակելու դո- յութիւն ունեցող հաստատութեանց գործունէութիւնը, Ատա- նայի Միջազգային հիւանդանոցին յատկացնէին այս գրամը, ի- րենց նախասիրած մասնաւոր ևւ ընդհանուր նպատակներու հա- մար գործածուելիք անկողիններով օժտէին զայն:

Ս. Հ. Մ. ՏՄՈՒԹԻ-ՈՒՅԼԻ

Հետեւեալներն են իմ փորձառութեանս մէջ իրենց կարե- ւորութիւնը շեշտած երեք կամ չորս հարցերը.

- ա) Մարդկային էակներու տոռապանքի սովալու ևւ դո- յատեւելու սքանչելի կարողութիւնը:
- բ) Բարոյական ըմբռնումի սովալ տալու ուժը:

Գ. Աւետարանին չափաւորող ևւ ներշնչող ուժը:

Այս կարակիցութեամբ կը յիշեմ տարիներ առաջ ունե- ցած մէկ փորձառութիւնս, որով սորվեցայ որ բնութիւնը կըր- նայ ևւ յաճախ ներշնչում կուտայ, տեսիլք մը որ կրնայ ազդել մարդուս կեանքի ամբողջ տեսութեան վրայ ևւ ճշդել անոր վե- բարբրումը ճշմարտութեան կարգ մը երեւոյթներու հանդէպ:

Տարիներ առաջ ձիաքարչ կառքով էրդրումէն Պայպուր- թի ևւ Կիւմիւշիանէի մէջէն ևւ Տրապիզոնի ճամբով Պոլիս կ'երթայի՝ Սմերիկայէն վերադարձող ընտանիքիս հանդիպելու համար: Ճամբան կը յառաջանայ երկու լեռնաշղթաներու վրա- յէն — Քոփէ, էրդրում ևւ Պայպուրթի միջև, որուն վրայ ճամ- բան կ'անցնի 8000 մեթր բարձր կէտէ մը, ևւ Ջիկուս: — Կիւ- միւշիանէի ևւ Տրապիզոնի միջև: Այս լեռան վրայի ճամբան կ'անցնի 6800 մ. բարձր կէտէ մը: Աչուն էր: Թէև էրդրումէն մեկնած ատենս օդը պայծառ էր ու խոստումնալից, բայց զէշ օդի հանդիպեցայ այս լեռներէն անցած ատենս: Մասնաւորա- բար Ջիկանայի մէջ զէշ էր: Քոփէ լեւր գրեթէ զուրկ է բուսա- կանութենէ: Բայց վախազդեցիկ կերպով հոյակապ էր ընդար- ձակ տարածութեան մէջ, այն ինչ որ կարելի էր զիրար հալա- ծող լեռներու շարան կոչել, ազօտ հեռաւորութեան մէջ նա- հանջած պահուն: Ջիկանան, միւս կողմէ, լաւ, անսաքապատ է ևւ վեհ գեղեցկութիւնը կը բարեփոխէ տարածութեան մե- ծաշքութիւնը, այնպէս որ ճամբորդը կը հրճուի ճամբէն վեր բարձրացած ատեն, զէպի վեր պտուտքելով, անցնելով դահա- վէժներէ, շրջանցելով բարձրարեւ գիւղեր, ամէն դարձուած- քին հոյակապ գեղեցկութեան նոր տեսարաններ երեւան հա- նելով: Վերջին անգամ այդ ճամբէն անցնելէս ի վեր բաւա- կան ժամանակ սահած ըլլաշուն, մեծ ախիտալութիւններ կը սնուցանէի աչնան այս լեռներուն վրայէն ճամբորդած ատենս, այն պահուն՝ երբ իմ անտառներու զաւարուող սաղարթունք՝ միջացրուած մայրիկ ևւ եղևիկ մշտադալարներուն հետ, յաս- կապէս իւրապատուկ իրենց մէկ գեղեցկութիւնը կ'աւելցնէին լեռնային դաշտանկարին վրայ:

Բայց ցաւազիտորէն պիտի հիատմափութէ: Քոփէ, յա- ճախ եղածին պէս բիրտ էր, բայց Ջիկանա հասած ատենս

կատարեալ էր հիասթափութիւնս: Երբ կիւմիւշխանէի մէջէն լերան կը մօտենայինք, անձրեւը եղաւ մեր բաժինը: Լերան ստորին կողերուն վրայ թանձր մշուշը եւ կամ կարեկի է ըսել խանձարարող ամպը կը քողարկէր լեռները եւ կը ջլատար մեր ետանդը: Բարձրագոյն կողերուն վրայ անձրեւն ու մշուշը վերածուեցան մանր կարկուտիկի եւ ձիւնի: Որով, մինչեւ մեր սկիւրները սղաղած, դադարէին անցանք եւ վայրէջքը սկսանք Տրապիզոնի կողմէն: Զիւնն ու մանր կարկուտը կը կիւն մշուշի վերածուեցան եւ տեւական տեղատարափ անձրեւի: Սորունկ էր ցելը եւ ստիպուած էինք կամաց քաշել եւ ձեւիկալիք հասնել շատ ուշ՝ մթութեան մէջ:

Յաջորդ օրը շուկեաւ մը Տրապիզոնէն Պոլիս պիտի մեկնէր: Անհամբեր ըլլալով հոն հասնելէ, սրուշեցի անհրաժեշտ եղածին շափ միայն երկար մնալ հոն որ ձիւնը լաւ մը հանդէպէն: Հետեւարար առաւօտեան ժամը երկուքին ճամբայ ելանք: Անձրեւը հեղեղանման կը տեղար, թանձր էր մթութիւնը, ցելը խորունկ էր հարթ գետին վրայ: Ատեն մը դժուարաւ շարունակեցինք մեր ճամբան, եւ լերան ստորոտէն սկսեալ ճամբան վատթարացաւ եւ հետեւեցանք դեռեղբրին, որուն դոռում-դոռումը կրնայինք լսել, մինչ ան պտուտքելով եւ յարգաւոր կը յառաջանար, ծովուն միանալու համար 12 մղոն հեռուն դանուող Տրապիզոնի մէջ:

Հիասթափուած, ցրտահար, չեմ խորհիր որ ո՛րեւէ ատեն ճամբորդութեան մը ընթացքին այնքան վհատած զգացած ըլլամ, որքան մթութեան, անձրեւին եւ ցելին մէջէն դժուարութեամբ յառաջացած ատենս: Յանկարծ իրազեկ դարձայ լոյսի երկղներուն, որոնք կը սլայքարէին մութ ու ցած ամպերուն մէջ: Անձրեւի քանակը նուազեցաւ եւ ի վերջոյ դադրեցաւ: Ամպերը սկսան բաժնուիլ մեծ կոյտերու, որոնք աստիճանաբար փոխեցին իրենց գոյնը, մինչ առաւօտեան արեւու ճառագայիները տակաւ մխրճուեցան եւ ցրուեցին զանոնք մեծափաս գոյնի կտորներու, շատ աւելի շքեղ քան ձիւննի գոտիի գոյնը: Ամբողջ երկինքը շողշողուն դոյներու շքեղ համալսարանակեր մըն էր: Մթութիւնը շտապ կը հեռանար եւ կարծէք ստուերներ իրար կը հալածէին ցրուած ստեն եւ կը

պահուելէն որմնախորշերու եւ ճեղքերու մէջ: Լեռնային կողերու մեծամասնութիւնը աւելի որոշ ձեւ զգեցան, գիւղեր եւ գիւղակներ երեւացին, շուտով կարելի էր տեսնել երամներ եւ հօտեր եւ լսել անոնց բոժոժներուն հնչիւնը երբ անոնք կը քշուէին դէպի արօտավայր:

Յանկարծ, արեւը, մասամբ մթազնած անհետացող մէգերէն, թուեցաւ ծագել մեծ կլոր կրակի դունտի մը նման՝ արեւելքը գտնուող բարձր լեռներու կատարին վրայ:

Ապա, կարծէք մոգական ուժով մը ամբողջ ձորը ողողուեցաւ մեծափառ լոյսով, լերան գագաթէն մինչեւ լերան ստորոտը, ձորին մէկ ծայրէն միւսը ամէն ինչ թաթաւուած էր արեւու կենարար ճառագայթներով: Գետը վեհափառ ծաւալով առաջ կը քշէր թխորակ իր հեղեղը՝ միանալու համար յորդալից ծովուն:

Սայտանք մը զգացի ամէն ջիղի մէջ: Հողիս թուեցաւ ընդմիջուած ըլլալ, մինչ աչքերս սեւեռած էի աննկարագրելի օրէն գեղեցիկ այլափոխումը գիշերէն դէպի օր, փոթորիկէն դէպի պայծառ հանդարտութիւն, տգեղ սեւութեան դէպի գերազանց գեղեցկութիւն, մթութեան դէպի արեւուն մեծափառ լոյսը, եւ հոգւոյս մէջ սպրդեցաւ մտածումը թէ «նմանապէս արդարութեան արեւը պիտի բարձրանայ իր բուժիչ ճառագայթներովը»: Եւ ես ըսի ինքզինքիս՝ «ինչո՞ւ տխուր ես, ո՞հ հոգիս»: Կարժէ կտրել անցնել լեռներէն, դիմադրել փոթորիկին, տոկալ անձրեւին ու ձիւնին, համբերել մթութեան եւ գիշերուան ցուրտին, սլայքարել յուսախաբութեան եւ հոգեկան ճնշումի դէմ, ականատես ըլլալու համար այսքան մեծափառ արեւածագի մը, ըզգալու խայտանքը դարձնող բնութեան, ներշնչուիլ անոր փոխանցող դասովը: Կրկին ու կրկին տեղի ունեցող սուլն ու ջարդը եւ մեր ականատես եղած ահռելի մարդկային տառապանքը անկարող եղան ջնջելու ձեւիկալիքի եւ Տրապիզոնի միջեւ գտնուող Տէյիբէն Տեքէի այդ առաւօտեան սպաւորութիւնն ու դասը:

ՈՒՒԼԻԸՄ ՆԻՍ ՊԻԹ ԶԵՅՄՊԸՐԸ

ԵՈԼՃՈՒԼՈՒՔ

ԹԱՐԳՄԱՆԻԶ
ԿԱՐԱՊԵՏ Ն. ՓԱՓԱԶԵԱՆ

ԹԵՐԹՕՆ
«ԶԱՐԹՕՆՔ» ՕՐԱԹԵՐԹԻ
ՊԷՅՐԵԼՔ, 1983

ՆԻՒԹԵՐՈՒ ԶԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	5
Ա. Գլուխ	
ԻՆՉՈՒ ՄԻՍԻՈՆԱՐ ԵՂԱՅ	11
Բ. Գլուխ	
ՍԿԶԲՆԱԿԱՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ	18
Գ. Գլուխ	
ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ՔԻԻՐՏԵՐԸ	23
Դ. Գլուխ	
ՊԵՐԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐԴՈՒՄՆԵՐԸ	36
Ե. Գլուխ	
ԹՐԲԱԿԱՆ ՄՏԱՅՆՈՒԹԻՒՆ	46
Զ. Գլուխ	
ԹՈՒՐԳԻՈՅ ԱԻԱԶԱԿՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ	58
Է. Գլուխ	
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈԿՈՒՆՈՒԹԻՒՆԸ	75
Ը. Գլուխ	
ՄԵՂՄԱՑՈՒՑԻԶ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԹՐԲԱԿԱՆ ՎԱՐԶՈՒԹԵԱՆ ԴԷՄ	95
Թ. Գլուխ	
ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ՃԻՔ	109

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԿ

Գրքի անունը	Գրողի անունը	Գրքի տեսակը	Գրքի համարը
Հայաստանի պատմություն	Մովսես Խորենացի	Պատմություն	1
Հայաստանի պատմություն	Մովսես Խորենացի	Պատմություն	2
Հայաստանի պատմություն	Մովսես Խորենացի	Պատմություն	3
Հայաստանի պատմություն	Մովսես Խորենացի	Պատմություն	4
Հայաստանի պատմություն	Մովսես Խորենացի	Պատմություն	5
Հայաստանի պատմություն	Մովսես Խորենացի	Պատմություն	6
Հայաստանի պատմություն	Մովսես Խորենացի	Պատմություն	7
Հայաստանի պատմություն	Մովսես Խորենացի	Պատմություն	8
Հայաստանի պատմություն	Մովսես Խորենացի	Պատմություն	9
Հայաստանի պատմություն	Մովսես Խորենացի	Պատմություն	10

ՄԼ Հայագիտական գրադարան



MAL033843

